1771

Zu. 4

84
F - 90

1884

ch.8

7011

Հրոյ Կարապետի Սեբրովբեանցի
128
24
Ե-90
Ա-γ

ՇՈՐԹԻՆԵՔ ՏԻՒ ՊՈՒԱԿՈՎՔ

# ՊԱՐՈՆ ԼԸՔՈՔԻ
# ԾԵՐՈՒԹԻՒՆԸ

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ

Կ. Ս. ԻՒԹԻՒՃԵԱՆ

Հատոր Ա.

معارف عمومیه نظارت جلیله‌سنك رخصتیله
طبع اولنمشدر

2003

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ
1884

(231)
399-Ա
128

ՖՈՐԹԻՈՒՆԷ ՏԻՒ ՊՈՒԱՆՈՊԷ

# ՊԱՐՈՆ ԼԸՔՈՔԻ ԾԵՐՈՒԹԻՒՆԸ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՊԱՐՈՆ ԼԸՔՈՔ ԻՆՔԶԻՆՔ ԿԸ ԾԱԾԿԷ

## Ա.

Գիտէ՞ք Փարիզի Շան-տը-ԼԱլուէթ փողոցը։ Շատ հաւանական է որ ա-նունն իսկ լսած չլլլիք եթէ Մատլէնի թաղը կը բնակիք։ Բայց Օպսէրվա-թուարի և Պիւթ-օ-Բայլի կողմերը բը-նակող աղքատներուն կատարելապէս ծանօթ է։

Այդ փողոցը նոր չէ, իւր պատ-մութիւնն ունի, և բաւական տխուր պատմութիւն մը, վասն զի ժամանա-կաւ շատ ոճիրներ կը գործուէին հոն, և այս դարուս սկիզբն իսկ անցորդներ կը կողոպտուէին։

Բայց յետոյ փոխուեցաւ, ինչպէս

1175-Հ

նաև անունն, որ առաջ Աբոռոռ եղէ կը նշանակէր, իսկ այժմ Աբոռոռ աբռ* կը նշանակէ։ Քաղաքապետութիւնն այս փոփոխութիւնն ըրած է թերևս սա պատճառաւ որ Փարիզի պաշարումէն ի վեր արտուտներն ոչ ևս կ'երգեն ամրութեանց մօտ։

Այսօր այդ վատահամբաւ փողոցը պարկեշտ փողոց մ'եղած է, բայց ոչ հարուստ։ Կլասիէր փողոցը Քորվիզար փողոցին հետ կը միացնէ, և գրօսատուներով շրջապատեալ չէ։ Ոչ ևս միլիոնատէրներ կը բնակին հոն, լայ լըուացարարներ ու կովարոյծներ։ Պիէվրի սեւաջուր առուն մօտէն կը վազէ, կամ մանաւանդ կը մրանայ, և Ուրսինի անկելանոցն ալ հեռի չէ։ Բայց այս տխուր դրակցութեանց փոխարէն, այդ քիչ մ'երեսէ ինկած ուղին այժմ երկու լայն և բաղմամարդ պողոտա-

* Ֆրանսերէն լեզուի մէջ chant և champ բառերը միապէս շան կը կարդացուին. առաջինն եղէ ըսել է, երկրորդն աբռ։

Ս. Ք.



ներէ շրջապատեալ է. մին հին է և Իտալական պողոտայ կը կոչուի միշտ, միւսը նոր է և մեծ աստեղագէտ Ա. բակոյի անուամբ միրտեալ։

Ասկից քանի մը տարի առաջ, ձըմբան գիշեր մը, երկու քաղաքային ոստիկանք իրենց ցայգապահական պըտոյտը կ'ընէին այն անմարդի փողոցներուն մէջ։ Ոստիկանական պաշտօնը տաժանելի է այն կողմերն, և ԺԳրդ թաղապետական շրջանակին ապահովութեան հսկող պահակներն հեշտին պաշտօն մը չեն կատարեր։ Ցաճախ գինովներու և գիշերայած բաղդաքինդիրներու հետ գործ ունին՝ քան կանոնազանց կառապաններու։ Դժընդակ եղանակներու մէջ, ուշ ժամանակ կը թափառին ցանցառ կաղերէ հազիւ լուսաւորեալ ամայութեանց մէջ, և իրենց պտոյտները՝ թշնամի երկիրներու մէջ հետաղօտութիւն ընելէ նըւազ վտանգաւոր չեն։

Արդ, այն գիշերը ծիւ ծիւ ձիւն կը տեղար և դառնաշունչ հով մը

ձիւնն երկու վաղեմի զօրականաց ե-
ռեսին կը զարնէր, որք գիշերն ի բուն
Կոպլէնի թաղին փողոցները պտտե-
լու պաշտօնն ունէին։

Առաւօտեան ժամ երեքն* էր, և
այս երկու պահակները կէս գիշերէն
ի վեր կը յածէին յամր և կանոնաւոր
քայլերով, լռին և համբերատար, իբ-
րև պարտականութիւն մը կատարելու
գիտակցութիւնն ունեցող մարդիկ, դը-
լուխնին ծռելով խստաշունչ հովին տակ,
և իրենց տառատակին կնգուղը ցուր-
տէն կապուտցած այտերնուն վրայ քա-
շելով, բայց ակն և ականջ ի դէտ,
միշտ պատրաստ իրենց անձը տալու և
կեանքն աննշանաբար զոհելու, որպէս
զի չարագործ մը բռնեն։

Ա.ին վայրկենին, ուր Շան-տը-լ'Ա-
լուէթ փողոցէն դուրս ելնելով Քոր-
վիզար փողոցէն դիմաց պիտի անցնէ-
ին Բասքալ փողոցը մտնելու համար,
հովն այնչափ սաստկացաւ և ձիւնն

* Կէս գիշերն երեք ժամ անցած։
Ծ. Թ.



այնչափ թանձրախիտ կոծեց զանոնք,
որ խաղախորդարանի մը դրան քիւին
տակ ապաստանեցան։

Կրնային՝ առանց իրենց պարտա-
կանութեան դէմ մեղանչելու՝ պտտը-
պարիլ հոն, և մրրկին դադրելուն ըս-
պասել, որովհետև կաղի լապտեր մը
կը լուսաւորէր այդ կառուցին, և ոչ
ոք կրնար ասոնց արթուն աչերէն վը-
րիպելով անցնիլ անկից։

—Ի՜նչ անիծած օդ, ըսաւ ծերա-
գոյնն, որ հանրային բարեկարգու-
թեան բանակին վաղեմի զօրական
մ'էր։ Նմանը տեսած չեմ Քապիլաս-
տանի լեռներուն մէջ ըրած արշաւան-
քէս ի վեր, երբոր Զուավներուն առա-
ջին վաշտին մէջ կը ծառայէի։ Մա-
նաւանդ երբ կը խորհիմ որ չորս ժամ
այսպէս պիտի պտտինք՝ առանց մար-
դու մը քթին ծայրը տեսնելու։

—Այդ մասին աներկբայ եղիք.
քաղաքացիք պառկած են, գողերն ալ
իրենց հանգստութիւնը չեն զոհեր երբ
որ գեղարդներ կը տեղայ...։

— Մանաւանդ սառոյցէ գեղարդ-
ներ, պատասխանեց միւսն, որ արդի
դպրոցէն լինելով կը սիրէր զուարճա-
բանել։

Անշուշտ ինքզինք տաքցնելու հա-
մար պիտի շարուն՝ակէր ծաղրաբանու-
թիւնն, երբոր երիցագոյն ընկերն ար-
մուկը մտեց։

Քորվիզաբ փողոցին մէջ՝ Աբակոյ պո-
ղոտային կողմէն՝ ոտնաձայն մը կը լսո-
ւէր, թէև ձիւնէն մեղմացած, բայց
Փարիզի երկու պահակաց վարժ ականջ-
ներուն համար յոյժ զգալի։

Ամէն բան աչերնին առնլով, ար-
հեստին մէջ ստացած երկար սովորու-
թեան համեմատ շարուեցան կեցան
խաղախորդարանին պատին առջև, և
անշարժ ու լռիկ սպասեցին երևման
այն մարդուն, որ այնչափ ուշ ատեն
և այնպիսի բուռն մրրկի ժամանակ
պտըտելու եկած էր։

Վայրկեան մը յետոյ մարդ մը տես-
սան որ Իտալական պողոտային կողմը
կ՝երթար դլուխը կախած, կրկնոցին



օձիքը մինչև ականջները քաշած, և
ձեռները դրպանը խոթած։

Այս յապաղեալ ճեմողը լայն կըրկ-
նոց մը հագած էր և բարձրաձև փե-
ղոյր մը դրած։

Հաւասար քայլերով կ՝երթար, ոչ
յոյժ ծանր, ոչ յոյժ արագ, իբրև քա-
ղաքացի մը, որ գէշ օդի մը բռնուած
էր, և վաղել չսիրելուն համար՝ ա-
ռանց շտապելու իւր տունը կը վերա-
դառնար։

Ոչ կերպարանքին, ոչ ալ շարժ-
մունքին մէջ բան մը չկար որ պահակ-
ներուն միջամտութեան առիթ տար։
ուստի և թող տուին որ հեռացաւ։

— Ահա մարդ մը որ զովութենէ
կ՝ախորժի, քսաւ կրտսերը ցած ձայնիւ։

— Էռէ՛, մինակ չէ, մրռաց հին զօ-
րականն։

Արդարև իրենց ետևի կողմէն աւելի
ծանր և աւելի հնչուն ոտնաձայն մը
կուգար, որ երկաթադամ խոշոր կո-
շիկներ հագած մարդու մը քալուածք
կը թուէր։

Առաջին անցորդն իւր ճանբան կը շարունակէր խաղաղութեամբ։

Երկրորդը՝ շատ չանցած՝ դուրս ելաւ քառուղւոյն անկիւնէն, գաւազանի մը յեցած, և կրնակը ծանր սնտուկ մը բեռցած։

Բեռնակրի մ'երևոյթ ունէր. բայց փողոցներուն անկիւնը շալակներով ըսպասող պարկեշտ բեռնակիրք սովորութիւն չունին այսչափ ուշ ժամանակ աշխատելու։ Երկաթուղեայ կայարաններու բեռնակիրք ալ՝ կառախմբոց հասնելէն յետոյ՝ այսինքն առաւօտեան ժամ չորսին գործի կ'սկսին։

Ուրեմն այս բեռնակիրը կրնար իրաւամբ կասկածելի թուիլ պահակներուն, մանաւանդ որ ռուլոթիէները մեծ փութաջանութեամբ կ'աշխատէին այս ձմեռ։

Ռուլոթիէներն, ինչպէս ամեն ոք գիտէ, մասնագէտ գողեր են, որք կարասի կրող սայլակներն ու կառքերը միայն կը կողոպտեն։ Փողոցները կը թափառին, և երբոր առանց կառա-



պանի կառք մը տեսնեն, ծրար մը կամ տուփ մը մէջէն կը վերցնեն, և իրենց ուսին վրայ բառնալով կը տանին անհոգաբար։

—Այս քաղաքացին կը թուի ինձ թէ իւր սնտուկն ռոռ ֆոխոի տօնավաճառէն գնած է, ըսաւ նախորդ Զուանին։ Երկու խօսք ըսենք իրեն, որպէս զի տաքնանք։

Եւ խսկոյն իւր դարանէն ելնելով՝ գնաց ընկերին հետ արկղաբարձ մարդուն ճանբան փակեց։

—Ո՞ւր կ'երթանք այսպէս, տղա՛ս, հարցուց ձեռքն անոր օձիքին վրայ դնելով։

Բեռնակիրը կեցաւ, գլուխը վեր վերցուց և զարմացական դէմքով մը պահակներուն նայեցաւ, առանց խօսք մ'արտասանելու։

—Ի՞նչ կայ սնտուկիդ մէջ, հարցուց նորէն վաղեմի զօրականը։ Կնոջդ կամ քու զգեստնե՞րդ։ Ըսել է թէ տունդ լաւ կահաւորուած է. վասն զի առնուազն հարիւր յիսուն լիպրա ունիս կրնակդ։

Մարդն՝ իւր գաւազանին կրթնած՝ կը շարունակէր լռութիւնը։

Վայրկեան մ՚առաջ անցնող քաղաքացին՝ լսելով անշուշտ պահակին բամբ ձայնն՝ ի փախուստ աճապարած էր։

Պահակներն, արկղաբարձ մարդուն և անոր բեռանն զբաղելով՝ որ լաւ որս մը կը թուէր իրենց, հետամուտ չեղան փախչողին։

— Կ՚երևի թէ խորամանգութիւն ծախել կ՚ուզես մեզ, ըսաւ կրտսեր պահակը, լաւ. պահականոցն երթանք, հոն ամեն բան կը յայտնես. պահակապետը կրնայ խօսեցնել քեզ։

Մարդը բնաւ չշարժեցաւ. կրնար ոք երդնուլ թէ չէր հասկնար։

Եւ սակայն, առանց ընդդիմութիւն փորձելու անձնատուր եղաւ պահակներուն, որք թևերէն բռնելով քաշեցին տարին նոյն վայրկենին, ուր առաջին անցորդին որարշաւ քայլերուն կը յաջորդէր կառքի մը ճեպընթաց հոլովումը։

Պահականոցը Կոպլէնի ծառուղւոյն



մէջ էր, դորդերու աղդային գործարանին մօտ, և պահակները բաւական ժամանակ զոհեցին իրենց ձերբակալն հոն տանելու համար, որ իւր բեռան պատճառաւ շուտ չէր կրնար քալել։

Պահականոցին դահլիճը քշեցին զայն, ուր իրենց հինգ վեց ընկերներէն ոմանք կը նստէին բանակի անկողնոյ վրայ, կամ վառարանին շուրջը կը տաքնային, և օգնեցին մարդուն, որ անտուկը կրնակէն վար առնլով գետին դրաւ կամաւին՝ առանց բնաւ բերանը բանալու։

— Ի՞նչ կը բերես մեզ այդ անտուկով, հարցուց պահակապետն, որ սեղանի մը ծայրը նստած՝ տեղեկագիր մը կը գրէր։

— Խեղկատակ մ՚է զոր ձեռք անցուցինք այս անտուկը տարած միջոցին, զոր անշուշտ Օրլէանի երկաթուղւոյն կայարանէն կամ ուրիշ տեղէ մը գողցած է, պատասխանեց երիցագոյն պահակն։ Հարցաքննեցինք զինքը, բայց չհասկնալ կը ձեւացնէ և բնաւ չը պատասխաներ։

— Հիմա կ'արձակենք ադոր լեզուին կապերն, ըսաւ պահակապետն ոտքի վրայ ելնելով։

Հարցաքննելիք նորանշան բեռնակիրն յաղթահասակ և հուժկու երիտասարդ մ'էր, որ հազիւ քսան տարու կ'երեւէր, և բաւական համակրելի դէմք մ'ունէր։ Բուրդէ թիկնոցակ մը և թաւշեայ տափատ մը հագած էր, այնպէս որ առաւել գիւղացւոյ մը կերպարանք ունէր՝ քան Փարիզցւոյ։

— Օ՛ն, ըսաւ պահակապետը խըստիւ, կատակերգութիւն խաղալու ժամանակ չէ։ Յայտնեցէք շուտով, ապա թէ ոչ՝ ձեզ ծակը կը նետեմ մինչեւ որ կեդրոնական բանտը դրկեմ։

Հարցեալը, փոխանակ պատասխանելու, գլուխը ցնցեց և ձեռներն ականջներուն տարաւ։

— Հաւատացնել կ'ուզէք ինձ թէ խո՛ւլ էք։ Այդ կեղծիքը վերաքննութեան ատենին պահեցէք, և այժմ գնացէք ծակը պառկեցէք, որովհետեւ խօսելէ աւելի զայն կը սիրէք։



Համակոր երիտասարդը բնաւ չըզդածուեցաւ այս վճռէն, և թող տըւաւ որ դինքը տարին նեղ ու մութ խցիկին մէջ փակեցին, ուր ձերբակալ մարդիկն առժամապէս կը պահեն։

— Այժմ դուք, ըսաւ պահակապետը, բացէք դա ատուկն, որպէս զի տեղեկագրելէ առաջ տեսնեմ թէ ի՛նչ գողցած է այդ չարաճճին։

Ատուկը կղպուած էր, բայց ծերունի պահակը մկրատ մ'և ուռ մ'առնելով՝ բռնաբարեց զայն։

Խուփը բացաւ և սոսկման աղաղակ մ'արձակեց։

Ատուկին մէջ կնոջ մը դիակը փըռուած էր։

Պահակապետն ինքն ալ տժգունելով ընկրկեցաւ, թէեւ վարժուած էր սրտայոյզ տեսարաններու, և բազմիցս ներկայ գտնուած աղեկտուր գիւտերու։

Պահականոցին մարդիկն, անկէց աւելի յուզեալ, խմբուեցան ատուկին շուրջն, և բեռնակիրը բռնող ծերունի պահակն ոտքի վրայ ելնելով գոչեց.

— Ա՛, թշուառականն, ես գող կը կարծէի, մարդասպան է եղե՛ր։

Ոչ ոք կը համարձակէր ձեռք դըպցընել դիակին։

Հրաշագեղ կին մ'էր, ծանր ժանեակներով զարդարուն ճերմակ մետաքսէ սենեկազգեստ մը հագած։

Իւր մեծ աչերը կարծես կը նայէին զինք շուրջ պատող ծեր գօրականներուն, որք հազիւ իրենց լացը կը զըսպէին։ Մէջքին վրայ խաչաձեւ դրած ձեռներուն մէջ վարդագոյն քամելիա մը բռնած էր տակաւին, և կիսաբաց շրթունքը կարծես թէ պիտի ժպտէին։

— Կրնայ երդնուլ մարդ թէ ննջած է, մրմուած նուազ յուզեալներէն մին։

— Ննջա՛ծ յաւիտենապէս, պատասխանեց ընկեր մը։ Ո՛հ, չեն վրիպած, մէկ հարուածով սպաննա՛ծ են, և տեսէք, դաշոյնը վէրքին մէջ թողած են։

Պահակապետն իսկոյն ծունկերով տեսաւ որ փոքր դաշոյնի մը փղոսկրեայ երախակալը տնկուած էր ժանեակէ զարդերուն մէջ։



Զոհը կուրծքին մէջ տեղէն՝ սրտէն՝ զարնուած էր անյողդողդ ձեռքով մ'և անլուր ուժգնութեամբ։

Զէնքը մինչեւ կռուանը մխուած էր, և դուրս քաշուած չլինելուն պատճառաւ՝ արիւնը գրեթէ վաղած չէր։

Հազիւ քանի մը կարմիր բիծեր կ'ապատէին սենեկազգեստին կերպասն, որոյ ծալքերն իսկ չէին աւրուած։

— Ալ չեմ զարմանար այդ սրիկային պատասխանել չուզելուն վրայ, գոչեց վաղեմի Զուաւն։ Առանց պատճառի չէր լռելը։ Բայց հարկ է որ խօսի երբոր զինքն այս դիակին հետ դէմ առ դէմ դնենք։ Որչափ շուտ լինի, այնչափ լաւ է։ Երթամ բերեմ արգելոցէն։

— Ոչ, ըսաւ պահակապետը, դործը խիստ ծանր է, և ես չեմ կրնար բան մ'առնուլ իմ վրայ, և ոչ իսկ ոճրագործը դիակին հետ երես առ երես բերել։ Այդ բան մեր մեծերուն կը պատկանի, և ես անոնց իրաւանց վրայ ձեռնձգութիւն ըրած ըլլալու պակա-

սութեան մէջ գանուելով պատժուելու փափաք չունիմ։

Փակեցէք այդ սնտուկն և մահճակալին տակ քշեցէք։

Շուտով մարդ մ'երթայ ոստիկանութեան պաշտօնատունն, ուրիշ մ'ալ թաղին ոստիկանապետին։

Ծանուցէք թէ ոճրագործը բռնած ենք, թէ սնտուկն ինչ վիճակի մէջ որ գտանք՝ այնպէս կեցած է, և թէ բան մը չպիտի ընեմ մինչև որ հանրային ապահովութեան պետը գայ։

Պահակապետին այս խոհական հրամանները կատարուեցան այն հնազանդութեամբ և արագութեամբ, որք հին զօրականներէ միայն բաղկացեալ մարմնոյ մը մէջ աւանդական են։

Զարաշուք արկղը պատին առջև դրուեցաւ, և այնուհետև ոչ ոք ննջեց բանակի անկողնին վրայ։

Արդեւոյն, այն դիշեր, դիպուածով, ո՛չ դրպանախոյզ կը պարունակէր, ո՛չ դատարկապորտ, ո՛չ արբեալ։ Ա՛նչափ ձիւն կը տեղար, որ ոստիկանութեան այդ սովորական որսերը չէին համարձակած դուրս ելնել։ Ցուրտը մաքրած էր փողոցներն այդ յաճախորդներէն։



Ուստի, պահականոցին մէջ ուրիշ բանտարկեալ չկար բաց այն թշուառականէն՝ զոր բռնեցին դիակ մը տարած միջոցին, և պահակապետը՝ նախատեսելով որ իւր մեծերը թերևս առաջին քննութիւններն անմիջապէս կատարել ուզէին, պատուիրեց պահականոցին դուռն սպասող մարդոց, որ եթէ դիշերապահներէ ձերբակալեալ մարդիկ բերուին, ուրիշ պահականոց մը ղրկեն։

Կեդրոնական իշխանութեան դրրկուած մարդիկն որչափ և շտապէին, բաւական երկար ժամանակ պիտի անցնէր մինչև որ քննութիւնը բացուէր, ժամանակ, որ՝ հարկ է ըսել՝ կրնար մեծապէս համառօտել, եթէ՝ ինչպէս ի Լոնտրա՝ ամեն պահականոցներն էլեկտրական թելերով կապուած լինէին ոստիկանութեան պաշտօնատան հետ։

Պահակապետն իւր պարապոյ ժամանակը գործածեց գրի առնլով այս արտասուքը ձերբակալութեան պատմութիւնն, և չմոռցաւ իւրոյս հանել իւր երկու ստորակարգելոց ճարտարմտութիւնն, որով ձերբակալած էին ոճրագործն՝ առանց ուրիշ նշան մը տեսնելու, բայց միայն անպատեհ ժամու մէջ փոխադրուած պարզ մտուկ մը։

Այդ ուշիմ պահակներն իրենց յաջողութեան վրայ փառաւորուելէ աւելի՝ սարսափած էին այն սոսկալի տեսարանէն զոր տեսած էին, և զուարթութիւնը բոլորովին հեռացած էր պահականոցէն։

Ոչ ոք բառ մը կ'արտասանէր, ոչ ոք կը համարձակէր ծխափող վառել սպանեալ դժբաղդ կնոջ մարմնոյն մօտ։

— Գնացէք նայեցէք ի՛նչ կ'ընէ մարդն, ըսաւ պահակապետը ժամ մը լռութենէ յետոյ։ Ծածկամիտ սրիկայներուն տեսակէն է, և կրնայ՝ ոճրադատ ատենին ձեռքէն և Ռ.քէթի կառավարանէն խուսափելու համար՝



գլուխը պատերուն զարնելով ջախջախել։ Եթէ չարաճճին այնպիսի բան մ'ընէ, տարակոյս չմնար որ սաստիկ կըշտամբանք կը լսեմ մեծերէս։

Բանտը պահականոցէն զատուած էր բաւական ընդարձակ նրբանցքովմը, և հոն փակուած մարդիկ չէին կրնար լսել ինչ որ խօսուէր վառարանին շուրջն։ Երեք վայրկեան յետոյ՝ պահակը վերադարձաւ շարժակելով և բարկութենէն կրակ կտրած։

— Գիտէ՞ք ի՛նչպէս ժամանակ կ'անցունէ աւաղակը, գոչեց։ Ոչ, չէ՛ք կրնար մտքէ անցունել։ Գետնին վրայ պառկած՝ ապուշի պէս կը քնանայ։

— Կամ այնպէս կը ձևացնէ։

— Ոչ, ստուգիւ կը քնանայ անսիրտն, այնպէս խորդալով որ դռնակին ապակիները կը դողացնէ։ Ցնցեցի զինքն. աչերէն մին բացաւ, մրմռաց և նորէն քնացաւ։

— Այս ցուրտի՛ն, առանց կրակի՛, մերկ քարին վրա՛յ · պէտք է որ սաստիկ յոգնած լինի այդ մարդն։

— Եւ բնաւ խղճի խայթ չունենայ մուկ մ'ուտող կատուի պէս։

— Հոգ չէ, քառորդն անգամ մը դնացէք նայեցէք թէ արթնցած է։

Ընթերցողը կրնայ հաւատալ թէ պահակները ճշդիւ կատարեցին իրենց պետին այս պատուէրն։ Ոճրագործին դէմ արդար զայրոյթ մ'զգացած էին, միանգամայն իրենց պատիւ բերող որս մը կը նկատէին զայն. ուստի թող չի տալու համար որ փախստեամբ կամ անձնասպանութեամբ պրծի, պատրաստ էին ամիս մը գիշեր ցերեկ անոր պահպանութեան հսկել կարգաւ։

Բայց բանտարկեալը կը շարունակէր ննջել, ինչպէս որ քսանամեայ երիտասարդ մը կը ննջէ, և ինչպէս որ մաքուր խղճմտանք ունեցող մ'իսկ չկրնար միշտ ննջել։

Խոր քունի մէջ էր երբոր հանրային ապահովութեան պետն հոն եկաւ հաշտարար պաշտօնէի մ'և բժշկի մը հետ։

Թաղին ոստիկանապետն՝ հասարակ ոճրի մը քննութեան համար շրջանակին միւս ծայրը կոչուած լինելով, իւր տեղը գտնուած չէր՝ երբոր իրեն լուր տալու ղրկուած պահակն հոն ներկայացած էր։

Հանրային ապահովութեան պետն սկսաւ հարցաքննել պահակապետը։ Մեծ ուշադրութեամբ լսեց իրողութեան պատմութիւնը, ստուգիկն պարունակութեան համառօտ նկարագիրն, և իւր առաջին հարցումն եղաւ.

— Մարդը տեսա՞ւ դիակն։

— Ո՛չ, պատասխանեց պահակապետը։ Խորհեցայ որ այդ բան կրնայ թերևս ՀՆասել նախնական քննութեանց ընթացքին։

— Կը հաւնիմ այդ ըրածնուդ. խոհեմութեամբ վարուած է.ք, և այսպիսի պարագայից մէջ խոհեմութիւնն իմաստութիւն է։ Առաւել կանոնաւոր կը լինէր ստուգն օրինաց ներկայացուցչի մ'առջև բանալ. բայց դուք ձեր վրայ առնելով թաղին ոստիկանապետին գալուն չ'սպասել, թանկագին ժամանակ մը շահեցուցիք մեզ. ուստի գովեստ միայն կրնամ ուղղել ձեզ։

Բերել տուէք արկղը։

Մինչ երկու մարդ ասդին կը քաշէին զայն դրուած խորշէն, ապահովութեան պետն ըսաւ.

— Աներկբա՛յ է.ք թէ յանցաւորը չկրնար մեր խօսքերը լսել։

— Բացարձակապէս աներկբայ։

— Շատ լաւ, վասն զի ես ընաւ չեմ հաւատար անոր խլութեան։

Սիրելի՛ տոքթէօրս, դուք ձեր պաշտօնը պիտի կատարէ.ք անյապաղ, բայց պարունակութեան նախաքննութիւնն իմ ձեռնհասութեանս կը պատկանի. պէտք է որ նախ ես նայիմ։

Եւ ծունգի վրայ գալով, որպէս զի արկղին պարունակութեան մասնաւորութիւններն ի մօտոյ տեսնէ,

— Այս, ըսաւ, իրը դադաղ ծառայելու համար յատկապէս շինուած սնտուկ մը չէ, այլ բարակ կաշիէ կատարեալ արկղ մ'է, պղնձէ կաղմածներով... Թանկագին ալ է, վասն զի սպանեալը չքաւոր մէկը չէր... ընդհակառակն... Այո՛, գեղեցիկ յարդուզարդեր պարունակելու համար շինուած արկղ մ'է...։ Կանայք այժմ այնչափ երկար շրջազգեստներ կը հագնին, որ կրնան զանոնք պահած սընտուկներնուն մէջ պառկիլ...։ Խուփին վրայ տառանիշ չկայ...։ Ա՛, պղնձէ տախտակ մը կար որ վերցուած է՝ տիրոջն անունն ու հասցէն կրելուն համար...։ Իսկ արկղին շէնքն անգլիական... կամ ամերիկեան է...։ Ֆըրանսայի մէջ այսպէս չեն շիներ...։ Առ այժմ տեսնել ուզած բաներս տեսայ։

Հիմա կարգը ձերն է, տոքթէօ՛ր։

Բժիշկը բացաւ սնտուկն և չկրցաւ զարմացական բացագանչութիւն մը զսպել, զոր ապահովութեան պետը չկրկնեց, թէ և նա ալ յոյժ զարմացած էր։

Բաւական համարեց ըսել.

— Եթէ կը հաւատաք ինձ, առ այժմ միայն մահուան պատճառն և դիակին դիրքը քննեցէ.ք. մնացեալը դիակնարանին մէջ կատարեցէ.ք, ուր արկղը պիտի ղրկեմ այս վիճակին մէջ։

— Ստուգիւ այդ է լաւագոյնն, և հոս ես յոյժ քիչ դիտողութիւն ունիմ ընելիք, պատասխանեց տոքթէօրն, զգուշութեամբ վեր առնելով ժանեակներն որք վերքը ծածկած էին։ Զոհն յանկարծ զարնուած է... հաւանաբար ննջած միջոցին... վասն զի դէմքն հանդարտ մնացած է...։ Ոճրագործը պարապով ընտրած է զարնելու տեղը... տեսէք, դաշոյնին երկաթն հինգերորդ և վեցերորդ կողին միջև մտած է... մինչև կռուանը...։

Ա՛, նայեցէք սա զարմանալի բանը... դաշոյնը խաղի թուղթ մը ծակած և մեռելոյն կուրծքին վրայ գամած է։

— Խաղի թո՛ւղթ մը։

— Ա՛յո՛, Մաչային աղջի՛կը։

Այս տարօրինակ յայտարարութեան վրայ սարսափ զգացին ներկայ դըտնուողք։ Պահակներն՝ որք ակնածութեամբ քիչ մը հեռի կանգնած էին, արկղին մօտեցան, որպէս զի իրենց աչքք ստուգեն բժշկին ըրած անհաւատալի յայտնութիւնն։



Այս քաջ մարդոց հետաքրքրութիւնը դիւրաւ կը մեկնուի. վասն զի սովորական բան չէ Մաչայի աղջիկ դըտնել դաշոյնով սպանեալ կնոջ մը սրտին վրայ գամուած։

Մարդասպանք սովորութիւն չունին իրենց արիւնուշտ գործերն այսպէս նշանակելու, իրենց զոհերուն վրայ տեսակ մը գործարանի նշան դնելու, ոչ ալ այնպիսի ծաղրածութիւններ ընելու, որք յայտարար նշաններ մատակարարեն դատական իշխանութեան։

Եւ սակայն այնպէս եղած էր։ Ծպիրհ ոճրագործն իւր զոհը խաղի թղթի մը վրայէ զարկած էր, ետեւը ճերմակ, հատ և ոսկեզօծ անկիւններով թղթի մը վրայէ, որ միայն դահլիճներու և ակումբներու մէջ կը գործածուի։ Տեսնողները կը հարցնէին իրարու թէ ի՞նչ կրնար լինել այս հեգնական և անագորոյն գործին նշանակութիւնը։

— Ճշմարիտ է, ըսաւ հանրային ապահովութեան պետը՝ մօտէն նայելէ

յետոյ։ Մարդ ամեն հասակի մէջ բան կը սովրի։ Եթէ այս բանն երէկ իրիկուն պատմէին ինձ, լրագրի մը հնարածը պիտի համարէի. բայց այժմ հաւատալու կը հարկադրիմ. սակայն կը յայտարարեմ թէ բացարձակապէս նոր բան մ'է։

Դուք ի՞նչ կը խորհիք, տոքթէօր։

— Բժշկական քննութեան տեսակէտով կը խորհիմ թէ աւելի ապացոյց մ'է որ այս կինը քունին մէջ սպաննուած է։ Պարտ էր ննջած լինել, որպէս զի ոճրագործը կարողանար այդ խաղի թուղթն անոր կուրծքին վրայ դնել...։

— Կարելի է առաջուց ծակած է, որպէս զի արեան ցայտումն արգիլելու համար պահպանակի տեղ ծառայէ իրեն։

— Այդ ալ կարելի է....

— Հաւանականութիւններն յետոյ պիտի քննենք, ըսաւ հանրային ապահովութեան պետն ոտքի վրայ ելնելով։ Գործի մ'սկիզբը պէտք չէ երբէք մանրամասնութեանց մէջ մտնել։ Այս դէպքը մեծ ձայն պիտի հանէ, աներկբայեմ, և կ'ուզեմ կանոնաւորապէս գործել։ Ծանր դժուարութիւններ կը նախատեսեմ, բայց թանկագին նշաններ ունիմ... օրինակի համար այս խաղի թուղթը...

— Թերևս դիտմամբ հոն դրուած է, որպէս զի սխալ ճանրու մը մէջ իյնաք, ըսաւ բժիշկն, որ նոյնպէս Սկեպտիկեան երևնալ կ'ուզէր։

— Եթէ սխալ ճանրու մէջ իյնամ, երկար չեմ մնար հոն, անհոգ եղիք. եւ լուրջ հիմանց վրայ միայն գործելու համար՝ պիտի սկսիմ հարցաքննել բեռնակիրն, որ կը կասկածիմ թէ յոյժ ստորադաս մեղսակից մ'է։

Արկղն իւր առջի տեղը դրէք, և դնացէք մարդը բերէք։

Տոքթէ՛օր, սպաննելոյն քննութիւնն այսօր պիտի վերսկսինք ժամ երեքին, դիակնարանի մարմնաքննական սրահին մէջ։

Շատ կը վախնամ որ այդ քննու-

թիւն չկրնայ մեծ լոյս մը տալ մեզ։ Ձեր կորովամտութիւնն իմ դիտութենէս շատ աւելի տեղեկութիւններ կըրնայ հայթայթել դատական իշխանութեան համար։

Արկղն արդէն աներևոյթ եղած էր բանակի անկողնոց մահճակալին տակ։ Ապահովութեան պետը նստաւ այն սեղանին առջև, ուր պահակապետն իւր տեղեկագրերը կը գրէր։

Բաւական երկար ժամանակ անցաւ մինչև որ բանտարկեալը բերին։

Հարկ եղած էր մեծ աշխատութեամբ արթնցնել զայն, որ աչերը շըփելով և տակաւին կէս քուն մարդու մը պէս սայթաքելով ներս մտաւ։

Ապահովութեան պետն իւր սուր աչերն անոր վրայ սևեռեց. աչեր, որ ամենէն խորամանգ ոճրագործներուն մտքէն անցածն իսկ կարող էին կարդալ։

Բայց ձերբակալն՝ առանց սրտայուզութեան ամենաթեթև նշան մը ցոյց տալու՝ դիմացաւ այն պողովատիկի ծայրի նման սուր նայուածքին։ Բոլորշի դէմքն իւր հանդարտութիւնը բնաւ չկորսնցուց։ Սակայն ձանձրոյթ նշանակող գոյն մ'առաւ երբոր տեսաւ որ նորէն պիտի հարցաքննէին զինքն։

Ապահովութեան պետն անոր երեսը նայած ժամանակ միանգամայն կը դիտէր անոր կերպարանքը, մարմնոյն սովորոյթը, հանդերձներուն ձևն ու ծալքերը, ձեռներուն ձևը, մարթին գոյնը, վերջապէս հաղարաւոր մանրամասնութիւններ, որք հարևանցի դիտողի մ'աչքէն կը խուսին, բայց բովանդակ մարդը կը բացատրեն անոր՝ որ գիտէ իմաստ մը տալ այն նշաններուն, զորս բնութիւնն և ընկերական վիճակը տըպաւորած են։

Վայրկենի մը չափ լռին քննութենէ մը յետոյ, ապահովութեան պետին համբերութիւնը կաղմուած էր։

— Այս մարդն ոճրին գլխաւոր հեղինակը չէ, կ'ըսէր մտօքն։ Այսպէս հողակրի ձեռներ, գիւղական թղթատարի ոտներ և բեռնակրի թիկունք ունեցող մարդ մը պատճառներ չկրնար

ունենալ ընկերային կին մ'սպաննելու և սրտին վրայ Մաչայի աղջիկ մը գամելու։ Բայց այս մարդ վճարուած է ոճրագործէն, կը ճանչէ զայն և կամայ ակամայ պիտի մատնէ ինձ զայն։

Գալով զինքը խօսեցնելու դժուարութեան, չնչին բան է։ Առաջին հարցաքննութիւնը լաւ սկսելու վրայ է գործը։

Յետոյ իւր յուշատետրին վրայ ծանօթութիւններ գրել կեղծելով, քանի մը վայրկեան աչերը խոնարհեցուցած կեցաւ։

—Դուք գիտէիք այդ արկղին մէջ գտնուածն, այնպէս չէ՞, տղա՛ս, հարցուց յանկարծ քաղցր ձայնիւ։

Ա՛յնչափ վստահ էր ամբաստանելոյն «ոչ» պատասխանելուն վրայ իրեն եղած այս անակնկալ հարցման, որ մեծ սրբոնեղութիւն զգաց երբոր տեսաւ որ ենրիտասարդն իրեն եղած հարցումն և ոչ իսկ լսած կ'երևէր։

Սակայն չվհատեցաւ։

—Շատ աղէկ, ըսաւ։ Դուք լուռ



կենալու դրութիւնն ընտրած էք։ Դէշ չէ այդ դրութիւն, տղա՛ս, մեք ալ գիտենք, բայց կը յորդորեմ ձեզ որ շուտով իրաց թողուք, վասն զի երեք չորս ամիս ծակը մնալէ յետոյ չէք կըրնար շարունակել։ Մնաց որ ձեր շահն իսկ կը պահանջէ յայտնել ճշմարտութիւնը, վասն զի ես այնպէս համոզուած եմ որ դուք յանցաւոր չէք։ Դուք այս գործին մէջ հաւանաբար երկրորդական դեր մ'ունեցած էք. եթէ այդ արկղը ձեզ տուող մարդը գտնելու օգնէք մեզ, ձեր անմեղութիւնը շուտով կը հաստատուի։ Դուցէ իսկ կրնամ անմիջապէս ազատ թողուլ ձեզ։

Ամբաստանեալն այս յանկուցիչ խօսքերուն առջև սառի պէս անդգամ կեցաւ։ Բայց նշանական մնջկատակով մը պատասխանեց՝ մատները բերանին և ականջներուն տանելով։

—Ըսել կ'ուզէք թէ խուլ-համր էք, ըսաւ հարցաքննիչը. պիտի տեսնենք զայդ. ես ամեն լեզուներն ուսած եմ, մինչև իսկ համերց լեզուն։

Հանճարեղ պաշտօնատարին այս խօսքը սնապարծութիւն չէր։ Նախատեսելով այս տեսակ պարագայները, Ցը լ'Էրէ արբային մեթոտն ուսած էր, և կրնար շատ դաղափարներ յայտնել մատներով։

Ուստի սկսաւ նշանացի բանախօսութիւն մ'ընել՝ դասատուէ մ'աւելի ծանրութեամբ, զոր փոքր ի շատէ կրրթեալ խուլ-համր մը կրնար կատարեալ պէս հասկնալ։

Մարդն յայտնի ուշադրութեամբ մը անոր շարժումներուն հետևեցաւ, և սրտանեղութեան նշաններ նկարուեցան դէմքին վրայ։

Կարծես թէ կը զայրանար չկրնալ հասկնալուն վրայ, բայց յայտնի կը տեսնուէր թէ չէր հասկնար։

— Օ՛, ըսաւ ինքնիրեն ապահովութեան պետը, կարծածէս աւելի վարպետորդի է, բայց ինչմարեր որ ինքզինք կը դատապարտէ. չափահաս եղող և նշանացի լեզուն չհասկցող խուլ-համր մը տեսնուած չէ երբէք։ Սառուդիւ չաբաճին ինձմէ աւելի խուլ չէ։ Վերջին փորձ մ'ալ ընեմ և յետոյ ուրիշ դարձողութեանց կ'անցնինք։

Եւ արագ գրութեամբ մը հետևեալ խօսքը գրեց մեծ թուղթի մը վրայ և ձերբակալին աչաց առջև դրաւ։

«Կառափնատութենէ ազատուիդ տակաւին ձեր ձեռքն է։ Բայց եթէ այդ լռութեան վրայ յամառիք, ի մահ պիտի դատապարտուիք և գլխատուիք. ահա ես կ'ըսեմ ձեզ զայս և չեմ սխալիր. վասն զի արդէն տասն և եօթն մարդ զրկած եմ ի Ռօքէթ, որք ձեզ չափ իսկ կասկածելի չէին։»

Խեղճ մարդը, ճարահատեալ, աչքերը թուղթին վրայ նետեց, դէմքը ծամածռեց Աւստրալիացի վայրենիի մը նման՝ որ երկոտասաներորդ դարու հրուվարտակ մը կարդալու բռնադատուի, և գլուխը տխրութեամբ ցնցելով՝ թուղթն ետ մղեց։

— Ցանուն երկնի՛ց, ըսաւ ինքնիրեն ապահովութեան պետն, եթէ այս ապուշը խուլ-համր չէ, ժամանակիս

ամենէն մեծ կատակերգակն է որ կը տեսնեմ այս գիշեր։

Աւասիկ մեծ միջոցներու դիմելու վայրկեանն։

Ոտքի վրայ ելաւ, և պահակապետին նշան ընելով՝ գնաց վայրկեան մը խօսակցեցաւ անոր հետ նրբանցքին մէջ. յետոյ վերադարձաւ և սեղանին առջև նստելով՝ պահականոցին տումարը թղթատել սկսաւ։

Ձերբակալն, երկու պահակներու միջև անշարժ կեցած, իւր անտարբեր և ձանձրայեալ դէմքը բնաւ փոխած չէր։

— Օ՛ն, քսաւ յանկարծ ապահովութեան պետը, կը տեսնեմ որ սխալած էի։ Ձեզ բանտէն փախած դատապարտեալ մը կարծած էի, զոր ամէն մ՚ի վեր կը փնտռենք. բայց այժմ ստուգեցի որ այն մարդուն դէմքն ու կերպարանքը չեն նմանիր ո՛չ ձեր հասակին, ո՛չ տարիքին։ Ուստի կրնաք ձեր բնակարանն երթալ, տղա՛ս։

Մարդը բնաւ չշարժեցաւ։



— Թո՛ղ տուէք երթայ, քսաւ ճարտար հարցաքննիչն, և դուրս ելած ժամանակ գաւաթ մը օղի տուէք խեղճին, որ արժանի է, վասն զի շատ վախցած է անշուշտ։

Պահակներն իրարու երես կը նայէին հարցնելու կերպիւ թէ արդեօք ապահովութեան պետը լրջարա՞ր կը խօսէր. բայց մարդն անդգայ կը կենար։

Յայնժամ ապահովութեան պետն աչք ըրաւ պահակապետին, որ սրահին ծայրը կեցած էր. նա ալ իսկոյն առբրճանակ մը պարպեց օդին մէջ։

Ամբաստանեալն և ոչ իսկ այն ակամայ ցնցումն ունեցաւ, զոր ամենէն պատերազմափորձ զօրականն իսկ չկրնար զսպել՝ երբոր իւր մօտն հրաշէնի մ՚անկարծական պայթիւնը լսէ։

Միայն թէ, երբոր վառօդին հոտն եկաւ իւր ռունգերը խարշեց, սկսաւ քիթը շփել, և ետին դարձաւ նայելու համար թէ ուստի կուգար ծուխը։

Այս անդամ փորձը վճռական էր։

— Այժմ կ՚սկսիմ հաւատալ թէ ար-

դարև խուլ է, մրմռաց ապահովութեան պետն յուսավրէպ, և շատ կը վախնամ որ այս շունը մեզ շատ պիտի յոգնեցնէ։

Ցետոյ ճակտին զարնելով.

— Պէտք է որ այս առաւօտ երթամ հայր Լ.քոքը տեսնեմ, ըսաւ ինքնիրեն. նա միայն կրնայ հնար մը ցուցնել մեզ։

Պահակապե՛տ, ըսաւ բարձրաձայն, այս մարդը կեդրոնական բանտը ղրկեցէք, սնտուկն ալ դիակնարանն։

Եկէք, տոքթէօ՛ր, երթանք, ալ հոս գործ չունինք։

---

Բ.

Փոնթի գետափը Փարիզի ամէն գեղատափանց զուարթագոյնն է. Փողերաններին և ճեմարանին միջև գտնուած տունները Փոնթի գետափին ամենէն զուարթներն են. և այդ առանձնաշնորհեալ տուներն ստուգիւ Պ. Լ.քոքը ժանթիլեիէն աւելի զուարթ և աւելի երջանիկ բնակիչ չունին։



Այս երկու անպատշաճապէս լծորդեալ անուանց տէրն առոյգ ծերունի մ'է, որ գետափին վրայ նայող երրորդ դատիկոնին մէջ բռնած գեղեցիկ բնակարանին վարձքն օրին կը վճարէ, և լաւ հասոյթ ունեցող մարդ մը ճանչուած է։

Թաղին ամենէն քաղցրահամբոյր, սիրուն և մարդասէր քաղաքացին է, և ինն տարիէ ի վեր հոն կը բնակի։ Իւր սովորութիւններուն մէջ ալ ամենէն կանոնաւորն է։ Անփոփոխապէս որոշ ժամերու մէջ նախաճաշ կը նէ, դուրս կ'ելնէ, կը պտըտի, տուն կը վերադառնայ և կ'ընթրէ։

Կէս օրին՝ Բոն Տէղ Ան կամուրջէն մինչև Բոն Ռուայալ կամուրջին եղրորմերուն վրայ հին գիրքեր կը թղթատէ. քառասուն վայրկեան յետոյ կը տեսնես որ հաց կը փշրէ Թիւյլրիի ճնճղուկներուն, որք զայն ճանչելով կ'երթան ուսերուն վրայ կը դարին ընտանեբար։ Ժամ՝ երկուքէն մինչև չորս՝ կարթով ձուկ կ'որսայ Փոնքորտի կամուրջին առաջին կամարներուն տակ։

Միայն կիրակի օրը կը փոխէ իւր զբօսանաց հիմնադիրն։ Որդին կուզայ նախաճաշել անոր տունն, և յետոյ կ'առնու գիւղը կը տանի զայն՝ օրն անցուցնելու և ընթրելու։

Վասն զի Պ. Լբքոք տը Ժանթիլեի որդի մ'ունի, քսան և ութամեայ դեղանի երիտասարդ մը, զոր դորովագին կը սիրէ, թէ և շաբաթն անգամ մը միայն կը տեսնէ։

Ս.յս որդին իրաւագիտութեան տոքթէօրի վկայական ստացած է, և կ'ըսուի թէ կը խորհի դնել դրասենեակն այն նոտարին, որուն առաջին դպիրն է։

Հայրը դժուարութիւն չպիտի կրէ այդ ծախքը վճարելու, վասն զի քսանամեայ խնայողութիւնք հարստացուցած են զայն. ասկից զատ, յաջողած է իւր միակ ժառանգորդին համար յոյժ գեղեցիկ ամուսնութիւն մը պատրաստել, որ ընդ հուպ պիտի կատարուի։

Ուստի թէ՛ իւր տանտիրոջ, թէ՛ դրացիներուն և թէ՛ իւր հետ առու-



տուր ընողներուն յարգն ու համակրանքը կը վայելէ, թէ և ոչ ոք գիտէ ճշդիւ թէ ի՛նչ ըրած է ժամանակաւ, և ի՛նչպէս վաստակած է իւր հարստութիւնն։

Արդարև իւր ծնունդը վին տալու հետամուտ եղան քիչ մը, և իւր անցեալն հետաքննեցին՝ երբոր Ֆոնթի գետափը բնակելու եկաւ գաւառէն, ինչպէս ինք կ'ըսէր։

Մինչև իսկ քիչ մը քաշքշեցին իւր մանաւոր անունն. ըսին թէ Պ. Լբքոք պարզապէս Ժանթիլեի մէջ ծնած էր Փարիզի մօտ, և թէ՝ շատերու պէս՝ ինքզինք իւր գիւղին աւատական իշխանն անուանած էր առանց դատական նախարարութենէն արտօնութիւն ստանալու։

Բայց այս չարամիտ զրոյցները տակաւ դադրած էին՝ երբոր նորեկն ամենուն սիրտը շահած էր, մինչև իսկ իւր դռնապանուհւոյն, որ այնուհետև Պ. տը Ժանթիլեի միայն կը կոչէր զայն։

Ըսել չէ թէ Պ. Լբքոք այսպէս կ'ու-

ղէր կամ իբրեւ աղնուական կը պարծէր. ընդհակառակն՝ ամենահամեստ քաղաքացւոյ մը պարզութիւն կը ցուցնէր՝ մեղմիկ ապտակներ և քաքարներ տալով թաղին մանկիկներուն, խանութպաններուն դրանք մէջ կեցած՝ հետերնին խօսակցելով և անոնց առեւտուրին վիճակն հարցնելու զիջանելով։

Այս պատճառաւ՝ իւր քաղաքակցաց գործերուն աւելի ծանօթ էր ինք՝ քան անոնք իւր գործերուն. բայց ստացած տեղեկութիւնները բարիք ընելու միայն կը գործածէր։

Դրացիները կը պատմէին թէ մէկէ աւելի վաճառական, որք նեղն ինկած էին և իրենց վիճակը չէին կրնար յայտնել, անոր ըրած պատեհաւոր փոխատուութեան շնորհիւ աղատած էին սքանչանկութենէ։ Երկու երեք ընտանիք կը յիշէին, որոց գաղտնի վերքերը դուշակելով բժշկած էր։

Նախախնամութիւն մը համարուած էր։ Թաղին շաղակրատները կարճ կապոյտ թիկնոցով մարդուն կը նմանցնէին։ Մաղարինի գրատան պահապաններէն մին, որ առիթ ունեցած էր ստուգել այն հիանալի ճշդութիւնն որով Լբքոք մարդիկ փրկելու համար կը միջամտէր, Պ. տ'Արլէնքուրի դեղեցիկ կը նմանցնէր զայն, որ ամէն բան կը տեսնէ, ամէն բան գէթ կ'ըսէր Պուրպոնեանց վերահաստատութեան ժամանակ շինուած հին երգ մը։

Արդարև շատ բան գիտէր այս ծերուկը, վասն զի իւր փոխ առած անձնաւորութիւնը մեր ժամանակի ամենէն ճարտար ոստիկանին անձնաւորութիւնը կը ծածկէր։

Պ. Լբքոք ծանթիյեի՝ այն մեծահռչակ Պ. Լբքոքն էր, որոյ շահատակութիւնները, զորս վախճանեալ հոյակապ վիպասան մը պատմած է, սքանչացում պատճառած են ընթերցողաց։

Իւր բուն անունէն հրաժարիլ չէր ուզած, վասն զի անկից ամաչելու բան մը չունէր. միայն երկնցուցած էր, որպէս զի մոռցնել տայ, և մանաւանդ իւր որդին մեծ ընտանիքէ աղջկան մը

հետ ամուսնացնելու օգնէ. վասն զի կ'ուզէր քաղաքացեաց այն դասուն մէջ տեսնել, ուր աղնուական երևոյթները չեն արհամարհուիր։

Մնաց որ՝ իւր հարստութիւնը կեղծ չէր իւր անուան պէս. իւր աշխատութեան արդիւնքն էր, և անխոստովանելի միջոցներով վաստկուած չէր։

Համեստ՝ բայց իւր պիտոյքէն շատ մեծ ժառանգութեամբ մ'աշխարհ մըտած էր, և ոստիկանութեան պաշտօնը բնական կոչումով միայն վարած։

Յետ այն պայծառ յաղողութեանց՝ որք զինք նշանաւոր հանդիսացուցին, Պ. Լբքոք, պարագայից զօրութեամբ, և գրեթէ յոչկամաց, մեծագումար դրամ շահելու վիճակի մէջ էր գըտնուած։

Ամեն անգամ որ Ֆրանսայի և մինչեւ իսկ օտար երկիրներու մէջ մեծ գողութիւն մը գործուէր, երբոր դանձապահ մը մեծագումար դրամ գողնալով փախչէր, Պ. Լբքոքի կը դիմէին, ա-



նոր խորհուրդ կը հարցնէին, կը թախանձէին որ յանցաւորները փնտռելու ձեռնարկէ, և դրամական մեծ վարձատրութիւններ կ'առաջարկուէին իրեն։

Միով բանիւ, Եւրոպիոյ մէջ միլիոն մը չէր գողցուեր, առանց Պ. Լբքոքի յանձնուելու այդ միլիոնին ետևէն վազելու պաշտօնն. և որովհետև գրեթէ միշտ կը յաղողէր ձեռք ձգել, ոստիկանաց այս թագաւորն հարիւրին այսչափ կ'ստանար, որ առուտուրի ճարտարութեանց մէջ գործածուած ամենէն շահաբեր դրամագլուխներու հասոյթը կը գերազանցէր։

Այս դարուս մէջ մարդ շուտ կը հարստանայ այս արհեստով. վասն զի արդի դրամատեարք յանկարծ տեղ կը փոխեն կամովին, և Պ. Լբքոք՝ դրամ չոչափողներուն մէջ ճարակած այս հինաւուրց հիւանդութեան նախամեծար բժիշկը լինելով, ի հարկէ մեծ շահեր պիտի ձեռք բերէր այնչափ բաղմաթիւ և այնչափ արդիւնատու յաճախորդներէ։

Ուրեմն հարուստ էր, ամրապէս հարուստ, և իրմէ միայն կախում ունէր աւելի հարուստ լինիլ. բայց գոհ կը լինէր իւր արդէն ունեցածը փիլիսոփայաբար վայելելով, և չէր ուզեր աւելցնել։

Ընդհակառակն, ամեն ջան ի գործ կը դնէր ինքզինք մոռցնելու, և անցեալ ժամանակի Պ. Լը-քոքէն նոր մարթ մը հագցնելով՝ ժամացոյցի պէս կանոնաւորեալ միջնակարգ քաղաքացի մ'անոր տեղն անցունելու, որ եղեռանց պատմութիւնը դատական կաղէր որ թէ՛ Ուրեանց լրագրին մէջ կարդայ, իշխանութեան զեղծմանց դէմ գոչէ, և ձախակողմեան կեդրոնին հետ քուէարկէ։

Արդարև ճաշակով չէր որ ծերուկն այս անհնչան դերը կը խաղար. վասն զի միշտ գիւտեր ընելու մոլութիւնն ունէր, և աչերը փայլիլ կ'սկսէին երբոր իրեն խօսէին այն դատական մեծ իրնդրոց միոյն վրայ, որք մէկ ամիս կը յուզեն բովանդակ Փարիզ։

Երբեմն իւր խուցին մէջ կ'զբօսնուր



դատ մը վերաքննելով, և ձեռները կը շփէր երբոր կարծէր գտնել հետք մը, զոդ մը, ինչպէս ինք կ'ըսէր, զոր ոստիկանութիւնը չէր նշմարած կամ չէր գիտցած օգուտ քաղել անկէց։

Բայց Պ. Լը-քոք որդի մ'ունէր, և այդ որդին իւր ուրախութիւնն էր, յոյսն էր, կեանքն էր։

Ի՞նչպէս և յորմէ՞ ծնած էր այդ որդին, զոր խնամով կը մեծցնէր յորմէ հետէ Աստուած տուեր էր իրեն։ Ոստիկանական պաշտօնատան ծերունիներն երբէք տեսած չէին զտիկին Լը-քոք. բայց Փողերանոցի թաղին ընտրողները կը հաւատային հաստատութեամբ թէ Ֆոնթի դետափը բնակող իրենց յարգի թաղակցին կինը վախճանած էր։

Ինչ և իցէ, երիտասարդն, որ Լուի կը կոչուէր, և իւր այցետոմսերուն վրայ Լուի Լ. տը Ժանթիլեի կը դնէր, գեղեցիկ և յոյժ վայելչատիպ պատանի մ'եղած էր, մեծցի, թխորակ, հանճարեղ, ուսեալ, բարեկիրթ և մինչեւ

իսկ սիրուն, թէև բնաւորութեանը մէջ քիչ մը մելամաղձոտութիւն կար։

Բարեկամները զայն «գեղեցիկ խաւարագդած» կը կոչէին։

Իւր նախակրթանքն Անգլիոյ մէջ ըրած էր, երկրորդական կրթութիւնը Գերմանիոյ մէջ, և իրաւագիտութեան ուսումն ու փաստաբանական փորձերը Փարիզի մէջ, և կատարեալ նօտար մը լինելու համար պէտք եղածէն երեքպատիկ աւելի կրթութիւն ու զգաստութիւն ունէր։ Զատէն իսկ աւելի զգաստութիւն, վասն զի հայրն, որ լիակատար աղատութիւն տուած էր անոր, կ'ըղձար որ ամուսնութեան հանդիսաւոր դռնէն ներս մտնելէ առաջ քիչ մը երիտասարդական խենդութիւններ ընէր։

Լուի, շաբաթն ի բուն իւր դրասենեակը կ'աշխատէր և արձակուրդի օրերն իւր հօրը կը նուիրէր։ Շան-տը-Ալուէթ փողոցի դէպքին ծնած ու մեծցած դժնդակ ձմրան մէկ կիրակի առաւօտուն, իւր հօրը՝ Պ. Լբքոքի հետ



գլուխ գլխի լաւ նախաճաշ մը կ'ընէր, զոր ճարտար խոհակերուհի մը պատրաստած էր։

Պ. Լբքոք կերուխումը կը սիրէր, ուստի և միշտ ընտիր կերակուրներ կը պատրաստուէին իւր տան մէջ։

Խահուէն խմած ժամանակ նշմարեց որ տղան սովորականէն նուազ զուարթ էր, և ըսաւ ծիծաղելով.

— Ի՞նչ ունիս այսօր, տղա՛ս. տրխուր և խոկուն կը տեսնեմ քեզ, իբր թէ խղճիդ վրայ ոճիր մ'ունեցած լինիր։

— Քիչ մը տկարութիւն ունիմ, պատասխանեց իսկոյն երիտասարդն։ Երէկ երիկուն ամայի թաղի մը մէջ այցելութիւն մը տալու գնայի և կառք չը գտայ. հարկ եղաւ ժամ մը քալել ձիւնին մէջ, և պաղ առի։

— Եթէ անհանդիստ լինելու չափ հիւանդ ես, զաւա՛կս, բաւ հայրն, որոյ հոգածութիւնն արդէն կը զարթնուր, անկողին մը պատրաստել տամ քեզ հոս, և բժիշկ մը բերել տամ։

— Ո՛չ, ո՛չ, կակաղեց Լուի Լը-քոք ձեռքը ճակտին վրայ տանելով, բան մը չէ, կ՚անցնի։ Կը կարծեմ իսկ թէ օդն օգուտ պիտի ընէ ինձ։

— Կը գուշակեմ, ըսաւ հայր Լը-քոք ժպտելով, երէկ հրաժեշտի ողջոյններդ տուած ես ամուրիական կեանց։ Ամէն մ՚ամուսնացողի համար բնական է։

Օ՛, ես բացատրութիւն չեմ ուզեր քեզմէ, աւելցուց տեսնելով որ տղան ինքզինք արդարացնելու համար բերանը կը բանար։ բաւական է որ կրցած ես Պուլոյն գալ տիկին Լը-քոնթի տունն ինձ հետ ճաշել և օրիորդ Թերեզայի հետ տեսակցիլ։

Լուի պատասխանելու վրայ էր անշուշտ թէ իր ամենէն ջերմ բաղձանքն էր այս, ժէրթրիւտ՝ վաղեմի դաստիարակու հին՝ ներս մտնելով քանի մը խօսք ըսաւ Պ. Լը-քոքի ականջն ի վար։

— Շատ դէշ ընտրեր է գալու ժամանակը, մրմռաց Պ. Լը-քոք, և սակայն չեմ կրնար չընդունիլ։



Սպասէ զիս հոս, սիրելի՛ Լուիս, քառորդէ մ՚աւելի չեմ ուշանար։ Պուլի փոքր գղրոցին երրորդ դարակին մէջ լաւ գլանիկներ կան, վառէ մէկ հատն, որպէս զի ձիւնին մէջ ըրած պտոյտդ մոռցնել տայ քեզ։

Պ. Լը-քոքի տունը մտնելը՝ գործէ քաշուած նպարավաճառի մը տունը մտնելու չէր նմաներ։

Երկու տեսակ ազդարարութիւն զետեղած էր իր դրան քով. սովորական զանգակ մը՝ անծանօթներուն համար, որոյ հնչիւնը կը լսուէր բոլոր յարկին մէջ. իսկ ընտանիներու համար ելեկտրական կոճակ մը կար դրանը մէկ անկիւնը ծածկուած, հաղորդակցող հաւատարիմ ժէրթրիւտի սենեկին հետ, որ այցելուն ընդունելու և նախապէս հարցափորձելու պաշտօնն ունէր։

Ուստի Պ. Լը-քոք՝ սեղանէն ելած և որդին իր մտածութեանց ու գլանիկին թողած ժամանակ՝ կատարելապէս գիտէր եկողին ով լինիլն. հետեւապէս ընաւ չզարմացաւ երբոր իր

առանձնասենեակը մտնելով հանրային ապահովութեան պետն հոն դտաւ։

Սակայն տարիէն աւելի ժամանակ կար որ տեսած չէր զայն. վասն զի այդ պաշտօնատարը՝ Պ. Լբքոքի դործէ քաշուած լինելը գիտնալով՝ միմիայն բացառիկ պարագայներու մէջ կուգար խորհուրդ հարցնել անոր բարեկամաբար։

Երբոր այնպիսի պարագայներ ներկայանային, դործէ քաշուած ոստիկանն իւր կարծիքը տալու չէր դժկամակեր, բայց խուզարկութեանց դործակցիլ յանձն չէր առնուր. ոստիկանական իշնութիւնք ալ չէին տիպեր զայն։

Ուստի գիտնալով ոստիկանութեան դլխաւոր պաշտօնատարին այցելութեան նպատակն, յոյժ սիրալիր ընդունելութիւն մ'ըրաւ անոր։

— Է՛, ըսաւ ձեռները շփելով, նոր բա՞ն կայ տանը մէջ։

— Նոր և յոյժ ուշագրաւ, պատասխանեց ապահովութեան պետը. տան և հինդ տարիէ ի վեր կը վարեմ



այս պաշտօն, և տակաւին չէի տեսած այսպիսի արտասովոր բան։

— Եւ կուդաք հայր Լբքոքի խորհուրդ հարցնել։ Կը կարծէք ուրեմն թէ տակաւին ցնդած չէ։

— Ընդհակառակն, և կը կարծեմ թէ դուք միայն կրնաք այս կնճիռը լուծել։

— Թերեւս իրաւունք ունիք։ Փոքր ծերուկը դեռ կ'ապրի, և իւր դատողութիւնն անվթար պահած լինելուն վրայ ուրախ է։ Ասկէ զատ, քնաշրջիկներուն ըսածին պէս, այսօր միտքս բաց է, վասն զի զուարթ եմ։—

Նստէք, սիրելի՛ բարեկամ, և պատմեցէք ինձ ձեր փոքրիկ պատմութիւնն։

Հանճարեղ պաշտօնատարն անմիջապէս սկսաւ մանրամասնօրէն՝ բայց յստակ պարզութեամբ պատմել այն դէպքերն, որք ոստիկանութեան բարձրաստիճան պաշտօնէից մեծ մասն տոք հանած էին այն գիշեր։

Բան մը չմոռցաւ, բան մը չշփո-

թեց, աննշան պարագայները մէկ կողմ թողուց, և միայն կարևոր իրողութիւններն ի լոյս հանեց։

Այնպէս խօսելու համար արհեստէն պէտք է լինիլ։

Պ. Լբքոք ուշադրութեամբ մտիկ ըրաւ, փակելով աչերն որպէս զի ականջներն ուրիշ բանով չզբաղին, և խնամով զգուշացաւ ընդմիջելէ։

Լաւ պատմողին, լաւ ունկնդիր։

— Այդչա՞փ է, հարցուց երբոր պատմութիւնն աւարտեցաւ։

— Այո՛, այս է. մարդը կեդրոնական բանան է, կինն ալ դիակնարանը։ Մարդը դեռ խօսք մը չէ ըսած, և կնոջ դիակին ընտութիւնն ալ նոր բան մը չյայտնեց մեզ, բայց միայն թէ ճաշելէն երկու ժամ յետոյ սպաննուած է։

— Արդարև յոյժ հետաքրքրաշարժ դէպք մ'է, ճշմարիտ առեղծուած մը։

— Որոյ բանալին դուք պիտի գտնէք, աներկբայ եմ։

— Զեմ գիտեր, և տակաւին ձեռքս



չէ. արդարև քանի մը գաղափարներ կը ծագին մտացս մէջ... մակաբերութեան հիմեր... չուկէտեր... կռուանի քարեր... բայց ոչ՝ աւելի։

— Մաչային աղջիկը կայ։

— Այդ՝ կա՛մ բան մ'է, կա՛մ ոչինչ. ոճրագործը թերեւս ուզած է դատական վիպասանութիւններէ փոխ առնուած տեսարանացոյցով մը խոտորեցընել ձեր ուշադրութիւնը։ Սակայն Մաչային աղջիկը կրնայ յետոյ օգտակար լինիլ ձեզ... երբոր սպանեալը ճանչուի...։

— Այո՛, ճանչուի... այդ է ամենէն կարեւորը... մարմինն ի ցոյց պիտի դրուի այս իրիկուն։

— Ես ադկէց չէի սկսեր։

— Ի՞նչ կ'ըսէք։

— Զմռսել կուտայի, և ժամանակէ յետոյ ի ցոյց կը դնէի։

— Այն ժամանակ ո՞ւրկէ պիտի սկսէիք գործը։

— Նախ պարտիմ ըսել ձեզ թէ, ըստ իմ դատողութեան, ձեր բռնած

մարդն ստուգիւ համր է, և թէ բո-
լորովին երկրորդական դեր մ'ունե-
ցած է գործին մէջ։ Մինչեւ իսկ կը
հակիմ խորհելու թէ տարած բանին
ինչ լինիլը չէր գիտեր։

—Ես ալ ըստ բաւականի ձեր կար-
ծիքին եմ, բայց ոչ վերջի կէտին վրայ։
Ինձ դժուարին կ'երեւի ընդունիլ թէ
այդ երիտասարդը մեղսակից չէ սպա-
նութեան։

—Կրնայ ոճրագործին ծառայած
լինիլ, բայց ոչ համախոհ։

Սկսինք ձերբակալման տեսարանէն։
Քաղաքացի մը կ'անցնի, երկու ձեռքը
դրպաններուն մէջ դրած, Քորվիզար
փողոցէն, ժամն առաւօտեան երեքին,
այնպիսի ձիւն ու ցուրտի ժամանակ,
ուր շուներն անգամ դուրս չեն ելներ։
Անոր ետեւէն, տասն և հինգ քայլաչափ
հեռի, արկղաբարձը կուգայ։ Կը ձեր-
բակալեն զայն։ Քաղաքացին կը շա-
ռունակէ իւր ճանբան, կառք մը կը
նստի, որ զինքը կ'սպասէր Իտալական
պողոտային վրայ, և կը հեռանայ սրար-



շաւ։ Ըսիք ինձ թէ պահակներն այն
կողմէն անիւներու հոլովում լսած էին։
Ուրեմն այն անցորդ քաղաքացին
պարտէին բռնել։

— Ես ալ այդպէս կը կարծեմ։ Բայց
ի՞նչ կրնանք ըսել. մարդ չկրնար ամեն
բան խորհիլ։

— Ո՛չ, պահակներն յանցանք չու-
նին. վհուկ պէտք էր լինիլ գուշակելու
համար թէ արկղաբարձ մարդը դիակ
մը կը կրէր։ Արդէն մեծ բան է որ բռ-
նել և պահականոցը տանիլ մոռաբերած
են։

Այժմ իմ եզրակացութեանցս կը
հասնիմ։ Ոճրագործն անշուշտ կ'ուզէր
անհետացնել սպանելոյն մարմինն. ի՞նչ
միջոցով, չեմ գիտեր, բայց երևոյթ
կայ թէ կը յուսար կառքի մը մէջ դը-
նել, այն կառքին՝ որ զինքը կ'սպասէր
Քորվիզար փողոցին ծայրն, և Փարիզէն
դուրս ղրկել։ Քաղաքդրան մէջ՝ ներս
մտնող կառքերը միայն կը քննեն, և...

— Ներեցէք որ երկու առարկու-
թիւն ընեմ։ Ինչո՞ւ համար կառքը կե-

ցընել չտուաւ ոճիրը գործուած տանը դուռը։ Տարակոյս չկայ որ կին մը իւր բնակարանին մէջ սպաննուած է։ Դիակ մը չծրարուիր փողոցի մէջ։ Ասկէց զատ, դարձեալ հոն կը վերադառնամ ես. ի՞նչ կը նշանակէր Մաչային աղջիկն։

—Եթէ սնտուկը տանողին բռնուելու պարագային մէջ խուզարկութիւնները մոլորեցնելու նպատակաւ չէ, թերեւս սնտուկն ստանալու պաշտօն ունեցող մեղսակցի մը հետ կանխաւ որոշուած նշան մ'է . . . : Ասոնք պարզ ենթադրութիւններ են, զորս քննութիւնը սուտ պիտի հանէ թերեւս։

Դալով ձեր առաջին առարկութեան, բոլորովին տղայական է։ Գործը կազմաւորողն, որ յոյժ վարպետ մէկը պէտք է լինի, չէր ուզած իւր կառքը բերել կեցնել այն տան առջեւ, ուր ոճիրը գործած էր, որպէս զի, ինչպէս կը կարծեմ, դրան հնամաշն զին ոչ։

— Դուք կը կարծէք թէ լաւագոյն համարած է ոտքով քալել Փարիզի քանի մը փողոցներն, իւր ետեւէն տանելով սպանելոյն մարմինը կրող մարդը։

— Զմոռնանք որ այդ մարդն համր է, և դէպք մը պատահած ժամանակ ոճրագործն ինքզինք աղատելու ապահով էր միշտ։ Եւ ճշդիւ ալ այնպէս եղաւ։

Կեցիք. ես պատմութիւնը վերակազմեմ, ինչպէս որ կը հասկնամ։

Ոճրագործն, որ արհեստով մարդասպաններուն դասակարգէն չերեւիր ինձ, վասն զի՝ ըստ ամենայն հաւանականութեան՝ հարուստ մարդ է, կ'ուզէ կին մ'սպաննել այնպիսի պատճառներով որք անծանօթ են ինձ։ Տակաւին պատճառներուն քննութեան եկած չենք։ Համր մարդ մ'ունի իրեն ծառայող։ Համր մը շատ օգտակար է, մանաւանդ երբ ո՛չ կարդալ գիտէ, ո՛չ գրել և ո՛չ նշանացի խօսիլ։ Զայն իւր հետ կը տանի կնոջ տունն, այնպիսի ժամու մը մէջ, ուր գիտէր որ առանձին պիտի գտնէր։ Ինքը կը մտնէ կնոջ քով, կ'սպաննէ զայն և հոն գտնուած արկղին մէջ կը դնէ . . . : Ըսիք ինձ թէ

կնոջ մնտուկ մ'էր. կը չալկէ զայն և դուրս կ'ելնէ առանց տեսնուելու... տունն անշուշտ դռնապան չունի... թերևս այն փոքրիկ օթևաններէն մին է, զորս յատկապէս կը շինեն նորաձակ հաւիկներու համար... կը գտնէ իւր համրը, մնտուկն անոր կրնակը կուտայ, նշանացի կը հրամայէ որ իւր ետևէն երթայ, և... ճեացեալը դիտէք։

— Արդարև, եթէ ճշմարիտ չէ, դէթ ճշմարտանման է... ձեր խորհրդածութիւնը Պ. Սարտուի կնճիռներուն պէս կուռ է... բայց ինդիրն է գիտնալ թէ գործն ո՛ւրկից պէտք է բռնել։ Այդ թելը չեմ տեսներ ես, և դուք միայն կրնաք ցուցնել ինձ։

— Ձեր ձեռքն է։

— Ի՞նչպէս։

— Համրն է թելը։

— Բայց արդէն հասկցուցի ձեզ թէ չուղեր կամ չկրնար խօսիլ, և դուք իսկ կարծիք յայտնեցիք թէ չպիտի կրնանք բան մը քաղել անկէ։



— Ներեցէք. ես կը կարծեմ որ բան մը չպիտի ըսէ ձեզ. բայց կը կարծեմ նաեւ թէ՝ առանց ուզելու՝ շատ բան պիտի իմացնէ ձեզ։

— Բացատրեցէք, կ'աղաչեմ։

— Բացատրեմ։ Այդ համրն երկինքէն չինկաւ Փարիզի փողոցներուն մէջ, այնպէս չէ՞։ Անշուշտ տեղ մը կը բնակէր բռնուելէն առաջ։ Ոճրագործին տունը կամ ուրիշ տեղ, փոյթ չէ։ Երբոր բնակած տեղն իմանաք, բնականաբար կ'իմանաք նաեւ ո՛վ լինիլն և ո՛ւր երթեւեկելն։ Ուրեմն պէտք է նախ այդ համրին ո՛վ լինիլն ստուգել։

— Լաւ, բայց դիւրին չէ։ Ձենք կրնար զայն ի ցոյց դնել դիակնարանին մէջ։ Ձեզ ու ինձ պէս քաջառողջ է։

— Աւելի լաւ։ Եթէ մեռած լինէր, խորհուրդ կուտայի ձեզ որ ետ կենաք այդ գործին հետախուզութենէն։

— Ուրեմն միջոց մը գտած է՞ք։

— Այո՛, և լաւ միջոց մը, զոր մինչև իսկ անվրիպելի կը կարծեմ։

— Սիրելի՛ Լեքոքս, մեր կեանքը

կ'աղաղէք։ Ոստիկանութեան վերա-
տեսուչն յանձնարարեց ինձ ըսել ձեզ,
որ եթէ ուզէք օգնել մեզ . . .։

— Խորհուրդներուս, որչափ և ու-
զէք, ընդմիջեց ծերուկն՝ ապահովու-
թեան պետին ակնարկութիւնները կարճ
կտրելու համար։

Գտած միջոցս ձեզ յայտնելէ ա-
ռաջ երկու բան հարցնեմ ձեզ։ Ըսիք
ինձ թէ համրը ներկայ չէր արկղին
բացման։ Աներկբա՞յ էք որ պարունա-
կութիւնը չգիտեր։

— Կրնամ վստահութեամբ պա-
տասխանել որ եթէ գիտէ, ձերբակալ-
ուելէն յետոյ չէ որ իմացած է։

— Շատ աղէկ։ Կեդրոնական բան-
տին մէջ ի՞նչ գտան վրայէն՝ երբոր խու-
զարկեցին։

— Եօթն սու, գիւղերու տօնավա-
ճառաց մէջ վաճառուած տեսակէն
փայտէ կոթով փոքր դանակ մը, և
ածուխի խոշորկէկ կաւոր մը։

— Ածո՛ւխ, կրնայ օգտակար լինիլ
ձեզ յետոյ։ Առ այժմ, աւասիկ գտած



միջոցս։ Պէտք է, առանց ժամ մը,
վայրկեան մը կորսնցնելու, թող տալ
այդ տղայն։

— Թող տա՛լ, արձակե՛լ։

— Այո՛, ըսաւ ծերուկն հանդար-
տութեամբ և մատները դարձելով
ժպտադէմ։

— Օ՜ն, Լրքո՛ք, չէք մտածեր . . .
կամ կատակ կ'ընէք։ Ի՞նչպէս խորհուրդ
կուտաք ինձ արձակել մարդ մը, որ
առ նուազն քսան տարի չղթայակապ
աշխատութիւն պիտի կրէ, և այս ալ՝
ենթադրելով որ իբրեւ ոճրին հեղինակ
չդատապարտուի։

— Խորհուրդ կուտամ ձեզ որ թող
տաք, բայց խորհուրդ կուտամ նաեւ
որ ետեւէն լրտեսէք։

— Լա՛ւ, հիմա կը հասկնամ։ Ու-
րեմն կը կարծէք թէ ետեւէն լրտեսելով
կրնա՞նք ո՛վ լինիլն իմանալ։

— Ձեմ կարծեր, այլ ապահովա-
պէս կը հաւատամ։

— Այդ միջոցը լաւ է, չեմ ժխտեր,
թէեւ նոր չէ։

— Ասկէց տասնեհինգ տարի առաջ հնարած և երեք անգամ գործածած եմ. ամեն անգամ ալ յաջողեցաւ ինձ։

— Ձեզ, այո՛, բայց ամեն մարդ ձեր կարողութիւնը չունի։

— Մարդու մ'եռանէն պոքտիլ առանց նշմարել տալու, այնչափ մեծ բա՞ն է։ Մեր արհեստին մէջ իշու կամուրջ է լաւ լրտեսութիւնն, և ես կը սիրեմ հաւատալ թէ տակաւին յաջողապէս աշխատելու կարող մարդիկ ունիք։

— Անշուշտ... անշուշտ... միայն թէ աւելի լաւ կը լինէր, եթէ ես ինքնին կարող լինէի ընել։ Բայց անհրնար է, համբ կը ճանչէ զիս։

— Եթէ այդ է ձեզ արգիլող դժուարութիւնը, բան մը չէ։ Եմ ա՛յնչափ լաւ կը ժպտի, որ լրտեսեալը կրնար իւր ճանբան հարցնել ինձ՝ առանց զիս ճանչելու։

— Դուք, սիրելի՛դ իմ Լեքոք, իբրեւ արուեստասէր կ'աշխատիք։ Իսկ



իմ պաշտօնական դիրքս կը նեղէ զիս։ Այս պատճառաւ է որ կ'ուզենք դործը ձեզ պէս մարդու մը յանձնել։

— Ադոր խօսքը չընենք, և դանք իմ ցուցած միջոցիս։

Իրրև ընդհանուր խնդիր, երկու անպատեհութիւնք կան ասոր դործածութեան մէջ։

Նախ, մարդը կրնայ լրտեսները խաբելով փախչիլ։ Բայց այնպիսի պաշտօնէից թոշակը պէտք է կտրել. և ես կը կարծեմ որ ձերիններն այնպիսի տխմարութիւն մը չեն ըներ։

Երկրորդ, մարդն, եթէ խորամանդ է, կրնայ կռահել իւր լրտեսուիլն, և ձեզ մոլորեցնելով դբօսնուլ։

Ժամանակաւ ես սատանարդի մը լրտեսեցի, որ բաւական յաջնեցուց մեզ։ Բայց վերջապէս բռնեցի զինքն։ Երբոր նշմարուի որ լրտեսեալը վարպետութիւն կը դործածէ, պէտք է բռնել ու նորէն բանտարկել։ Այսպէս փորձը կրնայ չյաջողիլ, բայց դո՞նէ ինչասակար հետեւանք մ'ալ չունենար։

Մնաց որ, եթէ ձեր ինձ տուած տեղեկութիւնները ճիշդ են, կ'երաշխաւորեմ որ ձեր մարդէն այնպիսի կասկած մը չէ՛ք կրնար ունենալ։ Խուլհամ լինիլն հաստատուած է. ուրեմն բռնուելէն ի վեր պահականոցին մէջ անցած ամ.քերէն բան մը հասկցած չէ։ Արկղին պարունակութիւնը տեսած չէ, և այն պատճառներով զոր բացատրեցի ձեզ, չեմ կարծեր որ գիտցած լինի։

Այս այսպէս լինելով, չպիտի զարմանայ երբոր զինքն արձակեն, և առանց կասկածի պիտի երթայ։ Դուրս ելնելէն յետոյ, հարկաւ տեղ մը պիտի երթայ, և երբոր ձեր ծածուկ պաշտօնեայները տան մը դուռն առաջնորդէ, մնացեալն ինքնին յառաջ կ'երթայ։

Միայն կ'ապսպրեմ ձեզ որ դրամ տաք անոնց, որպէս զի ճանբան չմնան՝ եթէ ձեր մարդը շոգեկառքով ուղեւորի, վասն զի կը կասկածիմ որ փարիզ չմնակիր։



— Շոգեկառք չկրնար նստիլ, վասն զի ստակ չունի։

— Ճշմարիտ է, մոռցայ որ եօթն սու միայն ունէր դրպանին մէջ։ Բայց կրնայ քաղաքաղաքէն դուրս ելնել և քալելով երթալ։ Պէտք է որ ձեր մարդիկն անոր հետքը չթողու փիճակի մէջ լինին։

— Այդ դիւրին է։ Միայն թէ...

— Ըսի, սիրելի վարպետս, յարեց ծերուկը զուարթութեամբ. խորհրդատուութիւնս աւարտած է, և կը կարծեմ թէ օգտակար եղայ ձեզ։ Այժմ որ հոգն ու դանակը ձեր ձեռքը տուի, ձեզ կը մնայ գործածել։ Ուրեմն ներեցէք ինձ որդւոյս քով երթալ, որ ճաշի սրահին մէջ դիս կ'սպասէ։ Կիրակի օրերը միայն կը տեսնեմ զայն, և այդ օրերն անոնն եմ ես։

Ապահովութեան պետն ոտքի վրայ ելած էր, բայց երթալու երեւոյթ չունէր։

— Ուրիշ բա՞ն մ'ունիք ըսելիք, հարցուց Պ. Լեքոք քիչ մանհամբեր դէմքով։

— Ամենակարևոր բան մը, պատասխանեց հիւրը խորհրդաւոր դէմքով։

— Տեսնենք։

— Սիրելիդ իմ Լրքոք, ձեր խորհուրդներն իրենց ծանրութեան չափ ոսկի կ'արժեն. ի սրտէ շնորհակալ եմ ձեզ որ չինայեցիք ինձմէ, և խօսք կուտամ ձեզ որ ճշդիւ պիտի հետեւիմ անոնց։ Դուք մեր ամենուն վարպետն էք միշտ, և դուք միայն կարող էք դատական կնճիռները լուծել։

— Սիրելի՛ բարեկամ, չափազանց կը շողոքէք զիս. զգոյշ պիտի կենամ։

— Անօգուտ է, վասն զի բուն ըսելիքիս կուգամ։ Գիտէք թէ ոստիկանական խնդրոց մէջ տեսականն ոչինչ է գործնականին քով։ Արդ՝ կուգամ խնդրել ձեզնէ՝ ոստիկանութեան վերատեսչին և նախաքննիչ դատաւորին կողմէ որ այս գործը դուք ձեր վրայ առնուք։ Եթէ հաճութիւն տաք, ինչ որ ուզէք պիտի տրուի ձեզ։

— Հա՛, հա՛, այդ ըսել կ'ուզէք ե-



ղեր։ Արդ, սիրելի՛ս, մեծապէս շնորհակալ եմ այն վստահութենէն զոր այդ պարոնները կը ցուցնեն ինձ, բայց չեմ կրնար իրենց փափաքը կատարել, և հասկցնեմ ձեզ պատճառը։ Գիտէք թէ որդի մ'ունիմ,

— Այո՛, ունիք, և գիտեմ իսկ թէ անոր վրայ պարծելու իրաւունք ալ ունիք։

— Կ'ընդունիմ ձեր այդ գովեստը, վասն զի արժանի է։ Աշխարհի ամենէն ազնուաբարոյ և բարեսիրտ տղան է։ Կրցածիս չափ լաւ կրթեցի զայն. արդէն պատուաւոր վիճակ մ'ունի, և քիչ օրէն աւելի լաւագոյնը պիտի ունենայ, վասն զի պիտի ամուսնանայ սիրուն օրիորդի մը հետ, զոր կը պաշտէ, յորմէ կը պաշտուի, և որ մեծափարթամ հարստութիւն մ'օժիտ կը բերէ։ Գալ ամիս հարսնիքը պիտի կատարուի։ Այժմ դուք դատեցէք թէ կրնա՞մ այնպիսի գործի մը մէջ նետուիլ որ իմ բոլոր ժամանակս գրաւէ։

Ասկէց զատ, սիրելի՛ս, Լուի բնաւ

չգիտե թէ ես երկար ժամանակ ձեր գործին մէջ աշխատած եմ, և թէ իրեն թողի՛ք հարստութեանս մեծ մասը սրիկայները հալածելով շահած եմ։ Կը բաղձամ որ միշտ անդիտանայ զայս։ Եթէ իմանայ, աներկբայ եմ որ չպիտի շառագնի ինձ համար, վասն զի կը սիրէ զիս և իմ ուզածս գիտէ։ Բայց ես չեմ ուզեր զինքը տրամեցնել։ Դիտէ՛ք որ աշխարհի մէջ նախապաշարումներ կան մեր արհեստին դէմ։

Արդ, ի՞նչպէս կ'ուզէ՛ք որ այդպիսի հեռաղօտութեան մը ձեռնարկեմ այն միջոցին՝ ուր որդիս ամուսնացնել կը խորհիմ։ Եթէ ութ օր այդ պաշտօնը վարեմ, անհնար է որ փոփոխութիւն մը չնշմարէ իմ կենսավարութեանս մէջ։

Ուրեմն ադոր խօսքը չը՛ընենք։ Դուք այդ գործն ինձ չափ և աւելի լաւ կատարելու համար ամեն պէտք եղածն ունիք։

— Ոչ, սիրելի՛դ իմ Լը.քո՛ք։ Այս գործն ուրիշ գործերու նմանիր։ Զինական մահակ մը (դժուարակնճիռն)



պիտի լինի, ուր մեր պաշտօնեայք իրենց լատիներէնը պիտի կորսուցնեն։ Լրագիրք մէջ պիտի իյնան, և մեզ օգնելու պատրուակաւ արգելքներ պիտի հանեն մեր դէմ։ Պէտք է ըսել տալ լրագրաց թէ չարագործք գտնելու յոյսը գրեթէ կորուսինք, և թէ գործին հետախուզութիւնն յառաջ տարուեցաւ ըստ երեւութին ոստիկանութենէ դուրս, բայց ամենաճարտար մարդու մը ձեռօք, որոյ վրայ ոչ ոք կրնայ կասկածիլ։ Այն մարդը դուք է՛ք, միայն դո՛ւք է՛ք։

— Զիս չափազանց կը գովէ՛ք, շնորհակալ եմ, բայց կը սխալի՛ք։ Մէկը կայ, որ ամեն պէտք եղած պայմաններն ունի կամ գրեթէ ունի, և կրնաք գործածել։ Այն հինաւուրց ֆոթէ՛, որ անցեալ տարի Լոնտրայէն եկաւ, և արդէն, եթէ չեմ սխալիր, կարեւոր ծառայութիւններ ըրաւ ձեզ։ Դիտէ՛ք որոյ համար կ'ըսեմ։ Երկու անուն ունի, զոր Պայեէի բառգիրքէն առած կը թուի... երկու ռազմական անուններ։

— Թոլպիաք որ Թէնշպրէն ըսել կ'ուզէք։ Մեր վերատեսուչը մոռացեց անոր վրայ, բայց...։

— Կը թուի ինձ թէ խիստ լաւ ընտրութիւն մը կը լինի։ Լսածիս նայելով, յոյժ ճարտարամիտ, յոյժ խորամանդ, յոյժ փութաջան է։ Անկախ հարստութիւն մ'ունի, և այս ալ արհամարհելի կէտ մը չէ այնպիսի պաշտօնի մը մէջ, որ կատարեալ ուղղութիւն կը պահանջէ։ Ուրիշ թանկագին առաւելութիւն մ'ալ այս է որ ոստիկանութեան հետ ունեցած յարաբերութիւնը գլխաւոր պաշտօնէից միայն ծանօթ է։ Ընկերութեանց մէջ կ'ընդունուի, և յաղողութիւններ իսկ ունի։ Ոչ-պաշտօնական քննութեան մը համար անկէց լաւագոյնը դժուարաւ կրնաք գտնել։

Եւ կարծեմ թէ նա էր որ անցեալ ամառ Սապոյ փողոցին մարդասպանը գտաւ, այն արդէն դատապարտեալ չարագործն, որ խառնակեցիկ կանանց տուները կը յաճախէր և Գաքարա կը խաղար։



— Այո՛, մեծ ճարտարութեամբ վարուեցաւ այն գործին մէջ, և ընկերութեանց մէջ մուտ ունենալը մեծապէս նպաստեց մեր վեց ամսէ ի վեր փնտռած մարդը գտնելու։

Իսկ Սպանիացի դքսուհւոյն գոհարեղինաց գողութեան գործին մէջ անյաջող ելաւ։

— Մարդ մը միշտ կը չյաջողիր։ Ես համոզուած եմ որ այս անգամ աւելի լաւ կը գործէ։ Առարկութիւն մ'ունի՞ք այդ ընտրութեան դէմ։

— Ճշդիւ խօսելով՝ չունինք։ Սակայն կատարեալ վստահութիւն չներշընչեր մեզ։ Երբէք չկրցաւ գիտցուիլ թէ ինչո՞ւ համար մեկնեցաւ Անգլիայէն, և իւր սկզբնաւորութեանց վրայ ալ բաւական տեղեկութիւն չունինք։

— Ցայտնի է որ իւր ազնուականութիւնը մինչև Խաչակրաց դարը չելներ. բայց ոստիկանութեան մէջ ազնուականաց որդիք միայն գործածել ուզելը՝ մարդարտագոյն ձեռնոցներով կերակուր եփել ուզելու պիտի նմանէր։

Հաւատացէք ինձ, սիրելի՛ս, Թողպիտք ձեզ պէտք եղած մարդն է։

— Քանի որ դուք մեզ կը թողուք, սիրելի՛դ իմ Լքքոք, պիտի հարկադրինք զայն առնուլ։ Խօսիմ Պ. վերատեսչին, ձեր կարծիքն ալ նեցուկ առնելով ինձ։

Բայց նախ ձեր խորհրդին հետեւելով համրը պիտի արձակեմ։

— Որչափ շուտով ընէք, այնչափ լաւ կը լինի։

— Ասոնց ուղղակի կեդրոնական բանտը պիտի երթամ։ Քառորդէ մը համրը դուրսն է։ Մեր երկու լաւագոյն ոստիկանները ձեռքիս տակն են։ Արդիւնքը կուգամ կ'իմացնեմ ձեզ։

— Ձիս ամեն օր հոս կը գտնէք... բացի կիրակիէն, ըսաւ Պ. Լքքոք ժըպտելով։ Լուրի համբերութիւնն սպառած պէտք է լինի։ Մէկ ժամէն Պուլոյն պիտի երթանք իւր նշանածին տունն։

Ապահովութեան պետն հասկցաւ որ տեսակցութիւնը վերջացած էր։ Ուստի



իւր վաղեմի բարեկամին ձեռքը սեղմելով՝ վազեց կեդրոնական բանտը գընացի փորձելու այն միջոցը, որ անցեալ, ներկայ և ապագայ ոստիկաններուն ամենէն հանճարեղը ցոյց տուած էր։

---

Գ.

Կեդրոնական բանտն երթալու համար, հանրային ապահովութեան պետը՝ Պ. Լքքոքի տունէն դուրս ելնելէն յետոյ՝ գետափի երկու ծայր և Բոն-Նէօֆ կամուրջին մէկ ծայրը պիտի անցնէր։

Քայլերը փութացուց, վասն զի կ'ուզէր անյապաղ փորձել հանճարեղ ծերունւոյն այնչափ ջերմապէս յանձնարարած խաղն։

Իւր ըրած առարկութիւնները ձեւի համար էին, վասն զի իւր գլխաւորները բացարձակ իշխանութիւն տուած էին՝ հասկնալով որ այսպիսի տարօրինակ գործի մը մէջ սովորական կանոններէ խոտորումը կրնար օգտակար լինել։

Ոստիկանութեան և դատական պաշտօնատուներն համաձայնութեամբ որոշած էին հետախուզութիւնն ամենամեծ արագութեամբ և հնար եղածին չափ լռելեայն կատարել։

Հանրային ապահովութեան պետին իմաստուն դաղափարին հետևելով, բռնուած մարդը դէմ առ դէմ չէին բերած դիակին հետ, և համրը պահականոցէն կեդրոնական բանտը տարուելով, երկու դատաւորներէ ընդվայր հարցաքննուելէ և առատ ճաշ մ'ընելէ յետոյ, քանի մը ժամէ ի վեր կը ննջէր անմեղութեան քունով։

Ուստի մեծ հաւանականութիւն կար որ իրեն լարուելիք թակարդին մէջ պիտի իյնար, վասն զի բնաւ չէր անցներ մտքէն թէ ոճրագործութեամբ կ'ամբաստանուէր։

Կեդրոնական բանտը մոռած ժամտնակ կատարուած պաշտօնական ձևակերպութիւնք յայտնի սրտայուզութիւն մը չէին պատճառած իրեն։ Համադեստաւոր պահակներն ու գինուորները, դռներուն խոշոր նիգերը, պատուհաններուն հաստ վանդակները զայն չէին զարմացուցած։

Կարծես թէ չէր նշմարեր որ զինքը կը բանտարկէին, եթէ՝ ընդհակառակն՝ իւր բոլոր կեանքը բանտի մէջ անցուցած լինելով ինքզինք իւր բնակարանին մէջ չկարծէր։

Բաւական ընդարձակ և լաւ լուսաւորեալ խցիկի մը մէջ դրուելն յայտնապէս գոհ ըրած էր զայն։ Մկսեր էր հետաքրքրութեամբ զննել կանոնական կահերն՝ որք կը զարդարէին խղիկը։

Կրնար ըսուիլ թէ այնպիսի չքեղութիւն բնաւ տեսած չէր, մանաւանդ անկողինն սքանչացում կը պատճառէր իրեն։

Հանդիստ հանգելու համար որ մէջը պառկի, պահնորդապետը պարտաւորուեր էր կրկին կրկին հրաւիրել և նշանացի ստիպումներ ընել։

Բայց պառկելէն յետոյ, շատ չանցած, երդեհոնի պէս խորդալ սկսեր էր։

Այն պաշտօնեայներն, որք գործին տեղեկութիւն ունէին, կը զարմանային բանտարկելոյն այս ասիճան անհոգութեան վրայ, և միաձայն կը յայտարարէին թէ այդ պարզադէմ պատանին՝ անզգայութեան կողմէ՝ ամենէն կարծրասիրտ չարագործները կը գերազանցէր։

Ցնորէնն, աւելի գթասիրտ, կը միտէր հաւատալ թէ բանտարկեալն ապուշ կամ խելագար էր, կարծիք մը՝ զոր ապահովութեան պետը չէր ընդուներ բնաւ, և զոր համրին աչերն ալ սուտ կը հանէին՝ երբոր խոնարհած չլինէին։

Այդ աչերն, երբոր զինք հարցաքննողներուն վրայ վերցնէր դիպուածով, քաղցրութիւն, տխրութիւն և ուշմութիւն միանգամայն կ'արտայայտէին։

Ուստի լուծուելու խնդիրն անվերթար կը մնար, և ժամանակն եկած էր Պ. Լը.քոքի ցոյց տուած դաւը գործածելու։



Ապահովութեան պետն իր երկու լաւագոյն թուահամարներն ընտրեց, 29 և 33. քիչ խօսքով հասկցուց անոնց ինչ որ պիտի ընէին, և զրկեց որ ծպտին։

33 թիւն հին թնդանօթավար զօրական մ'էր Բիկաշ անուն, որ տասն տարիէ ի վեր ոստիկանութեան ապահովական ճիւղին մէջ կը ծառայէր, և զոր իր մեծերը վստանդալից արշաւանքներու կը գործածէին։

Անոր կը յանձնէին դիւաւորապէս ձերբակալել այն չարագործներն, որք դանակի հարուածով իրենք զիրենք պաշտպանելու կարող կը համարուէին։ Իր յաղթ հասակը, մարմնական կորովը և անվկանդ քաջասրտութիւնը զինք արժանի կ'ընէին միշտ ընտրուելու՝ երբոր ֆոմպոկէ, այսինքն դիմադրութենէ և հարուածներէ կասկածուէր։

Արհեստին քաջավարժ, և լրտեսելու պաշտօնը լաւ գիտնալով հանդերձ, Բիկաշ ճարտարամիտ չէր 29 թիւ ընտ-

կերին՝ Բիէտուշի չափ, ինչպէս որ կը կոչէին պաշտօնապէս։

Բիէտուշ ալ կանոնաւոր զօրաց բանակէն ելած էր, բայց ծովային հետեւակազօրաց դասէն, և շատ չէր նմաներ Բիկաշի։

Մարմնով փոքր, նիհար, քնքուշ, ի կռիւ դիմագրաւելու անկարող, մարմնական ուժի թերութիւնը ճարպիկութեամբ կը լցնէր։ Անգամ մը տեսեր էին զայն, որ մինչ երկու ոստիկանք չորս թափառայած դողերու հետ կը կռուէին անյաջողաբար, կատուի պէս կռուողներուն մէջ սողոսկեր և իւր մէջքին կապիչով չորս չարագործներուն ոտքը պարաւանդեր էր։

Մետաքսի թելի պէս նուրբ, աղուէսի պէս խորամանդ, մանաւանդ իւր արհեստին սիրահար, ո՛չ միայն իւր պաշտօնին մէջ գործածուած ամեն դաւերն հիմնովին գիտէր, այլ եւ նորերը կը հնարէր անդադար։ Սա գտած էր կորուսեալ դրամապանակին դաւն, որ դերազանց միջոց մ՝էր իւր տունէն



ներս մտնող պարոնի մ՝անունը սովրելու։

Որովհետեւ իւր դէմքը տարիք չունենալուն կամ ամեն ուզած դէմքն առնլուն պատճառաւ ծպտման արուեստին մէջ առաջին վարպետն եղած էր, ապահովութեան պետը մասնաւորապէս ասոր կը յանձնէր փափուկ հետախուզութիւնները, կասկածեալ դանձապահներու հսկողութիւնը, հայրական իշխանութեան դէմ ըմբոստացեալ անչափահաս որդւոց որոնումն, սպառնալեօք դրամ քաշել ուզող թշուառականները գտնելու գործը։

Վերջապէս Բիէտուշ, ի հարկին, պճնասէր երիտասարդի մը կերպարանք մտնելով Պաքարայի սեղանի մ՝առջեւ կը նստէր, կը խաղար, և խաղի մէջ նենգութիւն կամ գողութիւն ընողներն իւր ճանկը կ՝անցուներ։

Քանի քանի անգամ դժուարին արշաւանքներու մէջ օգնած էր Պ. Լեքոքի, և խորին օրանչացում կը դաւանէր անոր վրայ։

Այս երկու ոստիկանք ծանօթ էին

Մաչայի աղջկան գործին, —ոստիկանութեան պաշտօնատան մէջ արդէն այսպէս կը կոչէին արկղին մէջ գտնուած դիակին աղեճմիկ պատմութիւնն— և իրենց ինքնասիրութիւնը մեծապէս կը շողոքորթուէր այս գործին հետախուզութիւնն իրենց յանձնուած լինելուն պատճառաւ. ուստի տարակոյս չէր մընար թէ ո՛չ միայն եռանդով, այլ և կիրքով պիտի աշխատէին ոճրագործին հետքը գտնելու։

Ամենարթի մէջ ծպտեցան Բիկաշ վաճառականի բեռնակիր եղաւ, Բիէտուշ ալ տոմնակ վաճառող կամ դլանիկի ծայրեր հաւքող գռեհիկ մանուկ մ'եղաւ, և գնացին Սէնթ-Շարէլի երկու գռներուն մէջ կեցան, 33 թիւը դատական պաշտօնատան պողոտային վրայ բացուող դրան մէջ, 29 թիւն ալ Օրֆէվր գետափը տանող անցքին բերանն։

Ամենուրդ է ըսել թէ այս երկուքը խորհուրդ ըրած էին միանալ նոյն ճանբուն մէջ՝ եթէ իրենց որսն որոշում մ'ընէր։



Երբոր իւրաքանչիւրն իւր դարանավայրը գնաց կեցաւ, հանրային ապահովութեան պետը բանալ տուաւ համրին խցիկն, ուր նա կը ննջէր միշտ բռնափակ։

Ուրթնցնելու համար հարկ եղաւ շարժել տարօրինակ ոճրագործն, որ ձերբակալուելէն ի վեր դրեթէ իւր բոլոր ժամերը քունի նուիրած էր։

—Ձեզ սխալմամբ բանտարկեցին, տղա՛ս, ըսաւ ապահովութեան պետն, որ այս անդամ ձևի համար կատակերգութիւն կը խաղար, վասն զի համոզուած էր որ բանտարկեալը բառ մ'իսկ չէր լսեր։ Կրնաք ձեր գործին երթալ։

Մարդն աչերը չփեց, ոտքի վրայ եկաւ, որովհետև օձիքէն բռնեցին, և ապուշ դէմքով իւր շուրջը նայեցաւ։

Դիւանատունը տարին, ուր իւր եօթն սուերը, դանակն և ածուխի կըտորն իրեն վերադարձուցին. յետոյ բանտին մեծ դուռը բացին և դուրս թողուին զայն։

Մինչդեռ արձակում կեղծելու հա-

մար պէտք եղած ձեւակերպութիւնք կը կատարուէին, ապահովութեան պետը բանտին վերնայարկն ելնելով՝ դրանք վրայ բացուող պատուհանի մը վանդակափեղկէն դուրս կը նայէր։

Տեսաւ որ համրն սկսաւ ծանրաքայլ երթալ, յետոյ կանգ առաւ բակին դըրան մէջ, վեր նայեցաւ և պահ մը Սէնթ-Շաբէլի սրածայր ոսկեզօծ գըմբեթը դիտեց. ապա չորս կողմը նայեցաւ ո՛ւր լինիլն հասկնալ ուզելու պէս, և բաւական երկար վարանումէ մը յետոյ դէպ Օրֆէվր գետափն ուղղուեցաւ։

Ապահովութեան պետն իսկոյն վազեց՝ ներքին նրբանցքներէն անցնելով, և գետափն ելաւ։

Դուրս ելնելուն պէս տեսաւ որ Բիէտուշ՝ արմուկն եղրորմին յեցած՝ երկու ձկնորս կը դիտէր, որք՝ օդին խստութեան հակառակ՝ կարթով ձուկ որսալու կ'աշխատէին։

Նմանապէս, աւելի հեռին, Սէն-Միշէլ կամուրջին անկիւնը տեսաւ Բի-



կաշ, որ օրորուելով յառաջ կ'երթար։

Համրը խճուղւոյն մէջ տեղն անշարժ կեցած՝ իւր ճանրան փնտռել կը թուէր։

Անշուշտ չկրցաւ գտնել, վասն զի քարի մը վրայ նստաւ և հոն ծնաց գլուխը կախած և թեերը վար ձգած իբրև մարդ մը՝ որ ուր երթալիքը չգիտէ։

Սակայն ապահովութեան պետը տուներուն առջևէն անցնելով մինչև Բոն-Նէօֆ գնաց. և գետափին անկիւնը կեցաւ։

Համրն անշարժ կը կենար միշտ։

—Օ՛, մրմռաց ապահովութեան պետը, քիչ քիչ հաւատալ կ'սկսիմ թէ հայը Լը-քոք մոլորեցաւ այս անգամ։ Մեր մարդն անկէ աւելի խորամանգ է։ Այնպէս կը ձևացնէ թէ կեցած տեղը պիտի ծնայ մինչև որ գան զինքը պահակ փոխելու պէս վերցնեն։ Արդեօք կռահո՞ծ է թէ սա սուկանաւոր մանուկը մեր թիւերէն մին է։ Բայց ոչ, վասն զի աչերը վեր չառնուր։ Ստուգիւ ապուշ է, եթէ առաջին կարգի սատանայ մը չէ։

Կէս ժամ յետոյ համբը նորէն ճանբայ ելաւ, բայց Սէնթ-Շարէլի բակը վերադառնալու համար։

Բիկաշ անոր ետևէն գնաց հեռիէն, և ապահովութեան պետն, որ ոչ ևս բան մը կը հասկնար համրին ընթացքէն, տեսաւ որ տան վայրկեան յետոյ Բիկաշ վերստին երևան ելաւ միայնակ և գնաց Բիէտուշի հետ խորհրդակցեցաւ, որ իսկոյն դէպի Բոն-Նէօֆ շտկուեցաւ,

Ապահովութեան պետին առջևէն անցած ժամանակ՝ առանց կանգ առնելու՝ հետևեալ խօսքը նետեց անոր.

—Համբը Կեդրոնական բանտը վերադարձաւ. պահնորդապետը կը հարցնէ թէ ի՞նչ պարտի ընել։

— Գնա ըսէ իրեն որ հրամանիս սպասէ։

Բիէտուշ ետ դարձաւ. իսկ իր մեծը տարակուսեալ մնաց ծանր վրանման մէջ։

Կը հարցնէր ինքնիրեն թէ ի՞նչ պէտք էր ընել այս անակնկալ հարուածին դէմ։ Յանկարծ տեսաւ որ Պ. Լը-



քոք Բոն-Նէօֆէն կ'անցնէր, իրմէ տասն քայլ հեռի, Երիտասարդի մը թևին յեցած։

— Արդարեւ յոյժ յարմար ժամանակին կուգայ, ըսաւ ինքնիրեն ապահովութեան պետն։ Ինք լցուց հրացանս, բայց վառօդը գէշ լինելուն՝ կը-բակ չառաւ։ Պէտք է որ լաւագոյն ռազմամթերք տայ ինձ, կամ խոստովանի թէ իւր գիւտն անպիտան է։

Ցեռնելով որ ծերուկը չճանչել ձեւացնելով անցնելու վրայ էր,

— Անշուշտ որդին է թևը մտնող բարձրահասակ թխորակը։ Ծերուկը գոհ չպիտի լինի երբոր քովն երթամ իւր տղուն առջեւ. բայց հոգ չէ. ինչ կ'ուզէ թող լինի։ Պէտք է գիտնամ թէ ինչպէս դուրս պիտի գայնէ այս դժուարութեան մէջէն։ Սակայն յոյժ քաղաքավարական ձեւեր պիտի բանեցնեմ։

Ցետոյ անոր ճանբան գոցելու կերպիւ յառաջանալով, մոտեցաւ և փեղջոյր է ձեռին ըսաւ քաղաքավարութեամբ.

— Ներեցէք ինձ, սիրելի՛դ իմ Պ. տը Ժանթիլեի, կ՚ուզեմ խօսք մ՚ըսել ձեզ առանձնակի, յոյժ կարճ է խօսելիքս։

— Սպասէ ինձ վայրկեան մը, սիրելի՛ Լուիս, ըսաւ Պ. Լը.քոք զատուելով իւր որդիէն, և գնաց կամուրջին եզրորմին քարէ կիսաբոլորներուն միոյն քով։

— Կրնայիք խնայել զիս այս հրապարակային խօսակցութենէն։ Պահ մը առաջ ըսած էի ձեզ թէ չեմ ուզեր բնաւ որ ձեզ հետ յարաբերութիւն ունենալս իմանայ որդիս։

— Ներեցէք ինձ, սիրելի՛դ իմ Լը.քոք, գործն ա՛յնչափ ստիպողական է որ...

— Եթէ այդչափ ստիպողական է, խօսեցէք, բայց համառօտակի։ Սէն-Փլուի շոգենաւին պիտի հասնինք. եթէ քիչ մը կենանք հոս, կը փախցնենք շոգենաւն։

— Աւասիկ գործն երկու խօսքով։ Ձեր խորհրդին համեմատ թող տուի



մարդը. քսան վայրկենի չափ դեռապին վրայ նստաւ և Կեդրոնական բանտը մնաւ։

— Օ՛, ըսաւ հրաժարեալ ոստիկանն ականջը տնկելով իբրեւ պատերազմական շեփորին հնչիւնը լսող զինուորական հինաւուրց երիվար մը, շատ վարպետութեամբ խաղցած է։ Կարծածէս աւելի խորամանդ սատանայ մ՚ունիք ձեր դէմ... եթէ...

Պ. Լը.քոք մէկէն կտրեց իւր խօսքն և դէմքը մանաւոր երեւոյթ մ՚առաւ. կարծես թէ պատերազմի պատրաստուեցաւ։

Սկսաւ խորհիլ։

— Մեք սխալ ճանբայ կ՚երթանք, ըսաւ յանկարծ։

Արդ խուլն հզօր է, վասն զի անկեղծ է։ Բանտը վերադարձաւ պարզապէս՝ վասն զի անծանօթ է Փարիզի, ուր երթալիքը չգիտէ։

— Ուրեմն ձեր դատած միջոցն ոչինչ է, և այժմ աւելի դժուարացած է մեր գործը։

— Թերեւս միջոց մը կայ ադկից դուրս ելնելու։

— Ըսէք։

— Մարդն ի՞նչպէս կեդրոնական բանտն եկաւ Կոպլէնի պահականոցէն։

— Բնականաբար ոստիկանութեան գոց կառքով։

— Լա՛ւ, ըսել է թէ բան մը տեղած չէ ճանբան։ Այժմ նոյն կառքով նորէն յիշեալ պահականոցը ղրկեցէք, և հրամայեցէք պահակապետին որ քառորդ մը յետոյ պահականոցէն դուրս հանէ, և երկու պահակներու հետ ղրկէ այն տեղն՝ ուր բռնուեցաւ։ Հոն պահակները թողուն զայն և մեկնին առանց իրենց ետեւը նայելու։ Ձեր երկու թիւերն ո՞յք են։

— Բիկաշ և Բիէտուշ։

— Երկուքն ալ ընտիր. անկէ առաջ անցնելով թող պտըտին Քորվիզար փողոցին մէջ և դիտեն թէ ի՞նչ կ'ընէ հարին։ Ես այնպէս կը կարծեմ թէ այդ կերպով կրնայ գտնել իւր ճանբան։

— Հը՛, ես ալ կը կարծեմ թէ կը կասկածէ։



— Եթէ յանցաւոր է, անշուշտ, և այդ պարագայի մէջ չէք կրնար բան մը քաղել անկէ։ Եթէ, ընդհակառակն, ինչպէս կը կարծեմ ես, անգիտակից գործիք մը միայն եղած է, աներկբայ եմ որ ձեզ տեղ մը պիտի տանի,

— Ես չեմ յուսար, և աւելի լաւ կը համարիմ...

— Ներեցէք, ըսաւ Գ. Լեքոք կէս պտոյտ մ'ընելով իւր որդւոյն քով վերադառնալու համար. եթէ տակաւին վայրկեան մ'ալ խօսակցիմ ձեզ հետ, շոգենաւը պիտի փախցնեմ, և մեզ ընդունայն պիտի սպասեն Պուլոյնի գետափին վրայ։ Ուստի ծառայեմ, սիրելի՛ պարոնս։

Եւ արագ քայլերով հեռացաւ։

— Ստուգիւ շատ ինկած է, ըսաւ ապահովութեան պետն իւր մտածութեան մնալով։ Խորհած միջոցն ստակ մը չըներ։ Բայց սա ճշմարիտ է թէ փորձելով բան մը չենք կորսնցներ, և ես ալ առ այժմ ուրիշ միջոց մը չեմ տեսներ։ Եթէ համբը չբռնուի այդ մի-

ջոցով, դիակնարանի ցոյցը միայն կը մնայ մեզ ... հաւանականութիւն մը՝ որոյ վրայ յոյս չկրնար դրուիլ։

Երթամ փորձեմ ծերուկին առաջարկած խաղն. եթէ չյաջողի, յայնժամ բերել կուտամ Թոլպիաքն և անոր կը յանձնեմ այս գործն։ Արդարեւ շատ վատահելի չէ, բայց մեր ձեռքին և աչաց տակ կը պահենք։

Այս որոշումն ընելուն պէս, ապահովութեան պետը գործի ձեռնարկեց առանց ժամանակ կորուսանելու։

29 և 33 թիւերը Շան-տը-լ'Ալուէթ փողոցը ղրկուեցան։

Համրը գոց կառքին մէջ ծրարուելով, որուն ռամկօրէն «ղ-ան է ղ-ոմբէ-ղ կ'ըսեն, Կոպլէնի պահականոցը տարուեցաւ։

Ապահովութեան պետը՝ կառք մը նստելով՝ Արակոյ պողոտային և Ուրսին փողոցին կազմած քառուղին գնաց կեցաւ գործողութեան հսկելու համար, վասն զի հաշիւ ըրած էր որ կառքին մէջէն դիտելու յարմարագոյն տեղն էր։



Արկղաբարձ մարդն Ուրսին փողոցին կողմէ եկած միջոցին բռնուած էր։ Եթէ իւր չուկէտը վերադառնալ ուզէր, անտի պիտի անցնէր։

Ժամ մը յետոյ ամէն ոք իւր տեղն էր։

Համրը բնաւ դժկամակութիւն չէր ցուցած ոստիկանական թաւալագիլ տուփին մէջ մտնելու համար, որ զինքը այն պահականոցը պիտի վերադարձնէր՝ ուստից առած էր առաւօտուն։

Հոն պահակապետը կարճ բանախօսութիւն մ'ըրաւ ձերբակալին պատրանքը տաժելու համար, եթէ կրնար ըսել. յետոյ իւր երկու ստորադասելոց յանձնեց ըսելով.

— Աղատեցէք զիս սա անպիտանէն, և հեռի տեղ մը տարէք որ չգայ նորէն ձանձրացնէ մեզ։

Մարդը բնաւ երևոյթ չունեցաւ հասկնալու այս խօսքն, որ իրեն վստահութիւն ազդելու նպատակաւ շարադրուած էր. այլ հլութեամբ հետե-

ւեցաւ երկու պահակներու, որք Քրուլ-պարպ փողոցէն անցնելով Քորվիզար փողոցն ելան և առաջին քառուղւոյն առջև թող տուին գոչելով.

— Բարի ճանապա՛րհ, նայեցէք որ նորէն չբռնուիք։

Բիէտուշ, միշտ գռեհիկ մանկան կերպարանքով, կը յածէր Քորտելիէր փողոցին մէջ։ Բիկաշ իւր ծխպամորճը կը քաշէր Շան-տը-Լ'Ալուէթ փողոցի անկեան խաղախորդարանին քիւին տակ։

Քար ճաթեցնելու աստիճան ցուրտ կար։ Դիշերը տեղացած ձիւնը սառելով կարծրացած էր։ Բնաւ անցորդ չկար, և այն խեղճ թաղին բոլոր կեանքը դուրսի պողոտայներուն վրայ գըտնուած բազմաթիւ մէջ գինետուներուն կեդրոնացած էր։

Ուստի պահակները դիւրութիւն ունէին իրենց լրտեսած օրսին շարժումները դիտելու, և այնպիսի դիրքեր բռնած էին որ նա չէր կրնար զիրենք տեսնել։



Համրը նախ դիտեց այն պահակներն որք զինքը թողլով կը հեռանային, յետոյ պարտէզի մը պատին կրթնելով՝ սկսաւ իւր շուրջը նայիլ։

Զինքը լրտեսողները պահ մը վախնալ սկսան որ հոն պիտի կենար, ինչպէս որ կեցած էր Օրֆէվր գետափին վրայ, վասն զի չէր շարժեր բնաւ։

Բայց երկու երեք վայրկեան յետոյ, ուր լինիլը գտնելով, դէպի Քորվիզար փողոցին անկեան տունն ուղղուեցաւ, պատին քարերը մատէն զննեց, զարմացման կամ գոհութեան շարժում մ'ըրաւ, և յետոյ սկսաւ դէպի Արակոյ պողոտայ երթալ առանց վարանելու։

29 և 33 թիւերը թողուցին զայն որ անցաւ գնաց, և յետոյ իրենք ալ նոյն ճանրան բռնեցին լռելեայն։

— Ա՛, չարաճճին, ըսաւ կամաց մը Բիէտուշ, անկիւնի տանն առջևէն անցած ժամանակ նշան մը գծեց պատին վրայ։ Ասոր համար էր որ ածուխի կտոր մը պահած էր գրպանին մէջ։ Այժմ իւր ճանրան գտնելով՝ պէտք

եղած տեղը պիտի տանի մեզ ուղղակի։ Ո՛րչափ գոհ պիտի լինի մեր պետը։

Պետն արդարև յոյժ գոհ էր, վասըն զի իւր կառքին պատուհանէն կը տեսնէր որ համին իւր երթալու տեղը գիտցող մարդու մը պես վստահ քայլերով յառաջ կ'երթար։

Լրտեսներն հեռիէն կը հետեւէին առանց միմեանց մոտենալու։ Ցանկարծ կանգ առին տեսնելով որ համը կանգ առաւ Ուրսինի հիւանդանոցին մոտ և պետին կառքէն տասն քայլ հեռի։

Վարանեալ կ'երեւէր. քառուղեւոյն մէկ անկիւնէն միւսը կ'երթեւեկէր. կարծես թէ կը վախնար անկէ անդին երթալու։

Վերջապէս որոշեց պողոտային դիմացի կողմն անցնիլ և Ուրսին փողոցը մտնել, որ Քորվիզար փողոցին դիմացը կը բացուի և անոր շարունակումն է։ Առանց վարանելու գնաց այն ճանբէն մինչեւ Բօռ-Ռոյայլի պողոտայն։ Հոն ալ պահ մը կանգ առաւ։ Կ'երեւէր որ լայն փողոցները կը շփոթէին զայն։



Ապահովութեան պետին կառքը լրտեսներուն ետեւէն կ'երթար հեռիէն։

Համը դարձեալ պատերն աչքէ անցունելէ յետոյ նորէն շարունակեց ուղղակի, ապա ձախ կողմ դարձաւ նեղ փողոցէ մը որ պաշտօնապէս Ռիւ տէ Լիոնէ կը կոչուի։

Այն փողոցը շարունակեց մինչև Պէրթոլէ փողոցն, որ Վալ-տը-Կրասի հիւանդանոցին պարտէզներուն առջևէն կ'անցնի. յետոյ աջակողմ դառնալով նեղ ու ծամածուռ փողոց մը բռնեց, որ Ռիւ-տը-լ'Արպալէթ կը կոչուի, և նոր բացուած Ֆէօյեանթին փողոցը խոտորնակի կտրելով Մուֆթար փողոցը կ'ելնէ։

Այս բոլոր ուղեգիծն արագապէս պտըտեցաւ, և համրին ցոյց տուած վստահութենէն կը հասկցուէր որ իրեն ծանօթ երկրի վրայ կը քալէր այժմ։

Լրտես ոստիկանաց սիրտը կը տրոփէր. իրենց ուրախութիւնը կատարեալ եղաւ երբոր տեսան որ համը

Լոմն փողոցին անկեան մօտ վանդակադրան մ'առջև կեցաւ և անոր ներսը գտնուած տունը վայրկենի մը չափ զննելէ յետոյ դրան զանգակն համարձակապէս քաշեց։

Լրտես ոստիկանք իրենց ընելիքը որոշած էին կանխաւ։ Բիկաշ քանի մը քայլ ևս յառաջ երթալով՝ դիմացի մայթին վրայ կեցաւ։ Բիէտուշ աւելի յառաջ երթալով Լոմն փողոցին անկիւնը դարանեցաւ, այնպէս որ, համին ո՛ր կողմ և երթար, նահանջը փակուած էր իրեն։

Միանդամայն ապահովութեան պեսը կառքէն վար իջնելով՝ դէպի վանդակաղուռն երթալ սկսաւ յամրաքայլ։

Համը կը հնչեցնէր միշտ զանգակն և ոչ ոք կուգար դուռը բանալու։

Ապահովութեան պետն ածխավաճառ կին մը տեսնելով, որ իւր սև ցուցակը խանութին դռնէն դուրս երկընցուցած էր, անոր մօտեցաւ և լսեց որ կ'ըսէր.



— Ի զուր կը հնչեցնես, տղա՛ս, տուփը պարապ է։

Պետն հարցուց անոր.

— Այս տունը բնակիչ չունի՞։

— Վարձակալն այս գիշեր տունէն ելած կ'երևի, պատասխանեց կինը, վասն զի այս առաւօտէն ի վեր սպասուհին չցուցուց իւր քթին ծայրը։

— Սենեկապանուհի մը կայ եղեր, լաւ է գիտնալն, ըսաւ ինքնիրեն ապահովութեան պետը։

— Հարցնելուս պատճառն, ըսաւ, այս է որ խեղճ տղայ մը կը քաշէ ու կը քաշէ զանգակը։ Մարդասիրութիւն կը լինի իմացնել իրեն թէ մէջը մարդ չկայ։

— Բա՛, պիտի տեսնէ որ մարդ չկայ։ Ասկէց զատ, աներկրայ չեմ տիկնոջ չուելուն վրայ։ Սպասուհին ըսած էր երէկ իմ մարդուս թէ Էնկլիշներուն երկիրը պիտի երթար իւր տիկնոջ հետ, և թէ կէս գիշերին ճանբայ պիտի ելնէին։ Ես կէս գիշերէն շատ առաջ պառկած էի... ուստի...

— Զանգակը քաշող մարդը չէ՞ք ճանչեր։

— Երբէք տեսած չէի, ըսաւ ածխավաճառուհին՝ քիչ մը զարմանալով այս հարցումներուն վրայ։

— Թերեւս սխալ դուռ կը զարնէ. երթամ հարցնեմ իրեն։

Եւ թողլով Օվէրնուհին իւր զարմացման մէջ, ապահովութեան պետն ուղղակի համբին քով գնաց, որ զանգակը քաշելու զբաղած լինելով դեռ տեսած չէր զայն, և մեղմով մը զարկաւ ուսին։

Համին ետին դարձաւ և զարմանք ցոյց տուաւ զինքն երկարօրէն հարցաքննող մարդը տեսնելով, բայց բնաւ երկիւղ չցուցուց։

— Ահա ուրիշ ամեն ապացոյցներէ աւելի վճռականն, ըսաւ ինքնիրեն ապահովութեան պետը։ Լրբոք իրաւունք ունէր. այս մարդը բնաւ տեղեկութիւն չունի սպանութենէն. բայց մեզ բոյնը բերաւ։ Այս էր պէտք եղածն. այժմ պարտինք խոհեմութեամբ և մեթոտով վարուիլ։



Համին թեւէն բռնեց, իւր կառքը տարաւ, մէջը նստուց, և 33 թիւը նշանացի կոչելով, հրամայեց կառքին մէջ նստիլ և հսկել մարդուն վրայ, զոր ոչ ևս պիտի թող տար։

Յետոյ Բիէտուշի դառնալով, որ գործին առատ դարձուած քը տեսնելով կամացուկ մը մօտեցած էր, հրամայեց որ վանդակաղրան առջեւ պահպանութիւն ըլլէ։

— Ես միայնակ պիտի մտնեմ ներս, ըսաւ։ Եթէ դուռները գոց են, պիտի երթաս դարբին մը կոչես։ Բայց չեմ կարծեր որ գոց լինին։ Սպասէ հոս, և մինչեւ որ սուլեմ, ներս մի՛ գար։

Եւ դուռը, յաւելցուց ածխավաճառկնոջ դառնալով, բնաւ խօսք մը չպիտի ընէք ձեր յաճախորդներուն։ Ես ոստիկանութեան պաշտօնատար եմ, և ձեր դրացոյն տան մէջ դատական քննութիւն մ՚ընելու եկած։ Ուստի խոհեմ թեամբ վարուեցէ՛ք։ Պահակ մը պիտի թողում հոս ձեր վրայ հսկելու համար, և մեկ պահէն պիտի գամ ձեզ հետ խօսելու։

Զայս ըսելով իւր կրկնոցին կոճակ-
ները քակելով իւր եռադոյն գօտին
ցոյց տուաւ։

Այս ահաւոր պաշտօնանշանը տես-
նելուն պէս՝ կինը խանութին ներսի
կողմը փախաւ։

— Այլդ չորս բաց, ըսաւ ապահո-
վութեան պետն իւր սա բադասին։

Եւ վանդակագրանքով վերադառ-
նալով, սկսաւ ուշադրութեամբ զննել
տունն և շրջակայները։

Պարզ պրմ մ'էր միայարկ, ճակա-
տին երկաթ պատուհանով, և փողոցէն
բաւական ընդարձակ բակով մը զատ-
ուած։

Պատուհաններուն վանդակափեղկե-
ները չէին փակուած, և տունը մէջ մարդ
չկտնուելուն միակ նշանն էր՝ կարմիր
ապիւսէ շինուած երկու ծխաններէ
մուխ չեռնելն։

Հետազօտչին ուշադրութիւնը դար-
ձաւ յետոյ բակին դեռինը ծածկող ձիւ-
նին վրայ։

Թարմ ձիւնը գիրք մ'է, որոյ մէջ



նախ կարդալու կ'աշխատին ճարտարա-
միտ ոստիկանք, վասն զի թանկագին
տեղեկութիւններ կը գտնեն անոր մէջ։
Ցանցաւորք ինքնին կը տպեն հոն ի-
րենց դատապարտութիւնը. վանդա-
կադռնէն մինչև պրմը տիպեր թող-
ած էին, զորս ցուրան սքանչելապէս
պահած էր։

Զրս հետք կը տեսնուէին յոյժ ո-
րոշ. երկուքը խորապէս տպաւորուած
լայն ոտքերու, միւս երկուքը նուազ
ծանրութեամբ գծուած աւելի բարակ
և աւելի վայելուչ կօշիկներ հագած
ոտքով, որ այր մարդու ոտք էր սա-
կայն։

Այն շաւիղները զոգրնթաց ձեռ-
ունէին, այսինքն մեծ քայլերը փոք-
րերուն քովէն գնացած էին։ Առաջինը
դէպ ի աջ կողմ կը շեղէր, երկրորդը
դէպ ի ձախ, բայց երկուքն ալ տունը
ներսի դրանը կը յանգէին, և բաւական
զարմանալի պարագայ, երկուքն ալ
փողոցէն տունը կ'երթային։

Երկու անգամ ներս մտած էին և
դուրս չէին ելած։

— Անհասկանալի բան է այս, մբրմբռաց ապահովութեան պետը, վասն զի երկու շաւիղներուն իւրաքանչիւրն ալ մի և նոյն երկու քայլերէն ձևացած են։ Առանց երթալու կարելի չէ վերադառնալ։ Պէտք է որ տունն ուրիշ դուռ մ'ալ ունենայ։ Կ'ստոյգենք զայս բայց տարակոյս չկայ որ խոշոր տիպերն համրինն են, որ մակոյկի պէս ոտքեր ունի, և երկաթագամ կօշիկներ հագած է։ Միւս հետքն ոճրագործինն է, որ բարակ և բարձրակրունկ կօշիկներ հագած է։ Պէտք է այս ձևերուն կաղապարն առնուլ գաճով։

Տեսնենք այժմ թէ պէտք պիտի ունենա՞նք դարրիսի, յաւելցուց՝ ձեռքը դրան փականքին պղնձէ կոճակին վրայ դնելով։

Սողնակը շարժեցաւ և դուռը բացուեցաւ։

— Շտապեալ լինելով ժամանակ չեն ունեցած դոցելու, մտածեց ապահովութեան պետը, կամ մանաւանդ բանալի չունէին։ Ոճրագործն իւր տանը



պէս կը մտնէր այս կնոջ տունն, ուստի ոչ ոք եկած է դուռը բանալու, որովհետև սպասուհւոյն ոտքին հետքը չը տեսնուիր։ Համրին ալ ոճրագործին հետն էր։ Վանդակադուռը բաց գըտած են։ Կը մնայ գիտնալ թէ տանը դուռն ալ բա՞ց է։

Յայնժամ բակէն անցաւ գնաց երկայն պտոյտ մ'ընելով, որպէս զի ձիւնին վրայի հետքերը չաւրէ. և տանը դրան քով հասած ժամանակ տեսաւ որ դրան փեղկերէն մին միւսին վրայ մղուած էր միայն։

Ներս մտաւ և ինքզինք լայն գաւթի մը մէջ գտաւ, որոյ ծայրն էր առաջին յարկին սանդուղն։

Դաւթին մէջ շատ մը անտուկներ և ուղևորական պայուսակներ կային ամեն ձևերով և մեծութեամբ. ի մէջ այլոց երկայն արկղ մը բացարձակապէս նման այն արկղին, զոր համրը շալկած էր երբոր ձերբակալեցաւ պահակներէն։

— Եթէ տակաւին երկբայութիւն մը կայ մտացս մէջ, ասոնք կը փարատեն,

բսաւ ինքնիրեն ապահովութեան պե-
տրն, Սուգիւ գտանք մեր փնտռածն,
և կը կարծեմ թէ պէտք չպիտի ունե-
նանք Պ Թոլպիաք տը Թէնշպրէի։ Մէկ
պահէն կը բանանք այս արկղերն, և
յանիժամ սատանայն միայն կրնայ ար-
գելք լինիլ, որ մեր աշխատութիւնն ամ-
բողջացնելու բան մը չգտնենք։

Այժմ յարկին այցելութեան անց-
նինք։

Գաւթի երկու կողմն երկու դռներ
կային։ Աջ կողմի դուռը բանալով, տա-
բօրինակ կերպիւ կահաւորուած դահ-
լիճ մը մտաւ։

Պովէի գորգերով յարդարուած Լուի
ԺԶեան թիկնաթոռներուն քով կը
տեսնուէին մահոգեմիէ աթոռներ,
զորս նորելից կին մ'իսկ չուզեր դոր-
ծածել։ Վարագոյրները մետաքսէ էին,
բայց միւսիւ թեղանը մաշած։ Վառա-
բանին վրայ, ոսկեզօծ պղնձէ սոսկալի
ժամացոյց մը կար երկու ճարոնեան
մեծադին ծաղկամաններու միջեւ բաղ-
մած։ Ցոռի ճաշակով ջահ մը կախուած



էր ձեղունէն, և ընտիր ոճով չորս ջա-
հակալը դէմ առ դէմ դրուած էին վե-
նետկեան հայելիներով զարդարուած
շրջանակներու վրայ։

Այս ամենը ձեռքէ կամ աճուրդէ
հապճեպով գնուած կը թուէր։

Վառարանին մէջ կրակ կար. միւսն
իսկ թուղթեր այրած էին, որոց մո-
խիրը սև կոյտ մը կը կազմէր։

— Այս մոխիրը քննել պէտք է,
մրմռաց ապահովութեան պետը՝ վեր
առնելով վարագոյր մը, որ դահլիճը
կը բաժնէր անպատուհան ներքնասե-
նեկէ մը, վասն զի տունը մի միայն ճա-
կատէն լոյս կ'առնուր։

Ուստի ներքնասենեակը բաւական
մթին էր և ապահովութեան պետն հոն
պատուանդանաւոր ժամացոյց մը միայն
նշմարեց բաւական բարձր և լայն, ո-
րոյ մէջ մարդ մը կրնար պահուըտիլ,
և խաղի սեղան մը որոյ վրայ թուղ-
թեր շարուած էին։ Սեղանին քով ա-
թոռ մը կործանած էր գորգին վրայ։

— Հա՛, բսաւ ինքնիրեն ապահովու-

թեան պետը, տիկինը բ...ն... կը բանար... անշուշտ իւր տարփածուին վրայ կը խոյ.հէր երբոր դաշոյնի հարուածն ստացաւ... հոս այս սեղանին առջեւ զարնուած է...։ Պէտք է որ հարմ.եմ այս թուղթերը՝ տեսնելու համար թէ Մաչայի աղջիկ մը կը պակսի՞...։

Կործանեալ ամբոխէն զատ ուրիշ ոչ մէկ բան տեղէն խախտած չէր սենեակին մէջ։

Ժամացոյցը կը բաներ։

Ապահովութեան պետը դահլիճը վերադարձաւ, և գաւիթէն անցնելով՝ ուրիշ դուռ մը բացաւ, որ ճաշարանին էր։

Սեղանին վրայ ճաշ կերուած էր։ Երկու սպաս, դէմ առ դէմ դրուած, կը ցուցնէին թէ երկու հոգի ճաշած էին հոն։ Պարարտ լեարդով լցուած կարկանդակ մը, մասամբ կերուած, և Ֆոնթէնպլոյի խաղողի արկղ մը կը վկայէին թէ ճաշողները ծախքի չէին նայեր, վասն զի Տիկին Պոնթու ոչինչ գբնով չտար այս վաճառքներն, և յան-



վար ամոյ մէջ խաղողը շատ սուղ է։

Բայց ճաշն յանկարծ ընդմիջուած էր, վասն զի ամեն բան խառն ի խուռն էր սեղանին վրայ և շուրջը։

Կոտրած ափոռ մը կար գետնին վրայ։ Երկու սրուակ կործանած և սեղանին ափոռոցը ջրով և գինիով ողողած էին։ Շիշերու և պնակներու բեկորներ ծածկած էին գետինը։

— Օ՛, մրմռաց խուղարկուն, սխալեր եմ...։ Սպանութիւնը ներքնասենեկին մէջ չէ եղած... հոս եղած է...։ Եւ սակայն մարմնոյն վիճակը կը հաստատէ թէ զոհին ու ոճրագործին միջև կռիւ եղած չէ... իսկ հոս կատաղի կռուոյ մը նշաններ կը տեսնուին... տարօրինակ բան...։

Տախտակամածին վրայի բիծերն արեան բիծեր կ'երևին ինձ. իսկ սեղանին ափոռոցը գինիով միայն թաթաւեալ էր...։ Ուրեմն կինն ոտքի վրայ զարնուած է...։ Բայց վերքն ի՞նչպէս կրցած է այնչափ արիւնիլ... դաշոյնին երկաթը կօշկակարի մը հերիւնէն աւելի լայն

չէ... և արեան հոսումը ներսէն ե-
ղած պէտք է լինի...։ Հոս արեան
երկար հետք մը... այս գործն հե-
տրշնետ աւելի տարօրինակութիւն
կ'ստանայ...։ Ո՞ւր երթայ այս արեան
հետքն... ա՛, ներքնասենեկին կից
խցիկ մը, որ պահարան պէտք է լի-
նի... կինն հոն փախած պէտք է լինի
ուրեմն... տեսնենք։

Եւ սպահովութեան պետն հրեց
մեծ դուռը, ղը կիսաբաց դտաւ։

— Ա՛հ, ուրիշ մ'ալ, գոչեց սոսկ-
մամբ ընկրկելով։

Արիւնռուշտ դիակ մը տեսած էր
կրնքկին վրայ տարածուած և թեերը
խաչաձև։

Ցիսուն տարեկանի մօտ յաղթահա-
սակ, կորովի և վայելչազգեստ մարդու
մը դիակ էր։

Մեծ ոսկի շղթայ մը կախուած էր
ճերմակ բաճկոնին դրպանէն, որոյ վը-
րայ արեան մեծ բիծ մը կար։ Ան մե-
տաքսէ փողկապն ոլորուածի պէս էր։

Զգեստին քղանցներէն մին պատ-



ռած էր։ Կրկնոցն ու փեղոյրն ակկիւն
մը նետուած էին։

Լայն և աղէբեկ ծնօտամորուքներով
շրջանակեալ դէմքն սլլակերպուած էր
սոսկալի վէրքով մը, որ ճակատը խոր-
տակած և մէկ աչքն հանած էր։

— Գործը կը կնճռոտի, ըսաւ ա-
պահովութեան պետն։ Այս մարդը
կապարածայր դաւազանով մ'սպան-
նուած է, կատաղի կռուէ մը յետոյ...։
Նախ փողկապն ու օձիքն բռնուած
է...։ Կռիւը սեղանին վրայ սկսած...
և հոն սպաննուած է...։ Մարմինն
հոս քաշուած... և թողուած է՝ ա-
ռանց ուրիշ կերպիւ ծածկելու համար
ժամանակ կորսնցնելու...։ Ոճրագործ-
ը կնոջ մարմինը վերցնել տանելէն
յետոյ զայս ալ պիտի դար վերցնէր...։
Անշուշտ մնտուկի մը մէջ դնելով համ-
բին շալակը պիտի տար ու ղրկէր...։

Յետոյ, քիչ մը խորհրդածելով,
յարեց.

— Չիս զարմացնող կէտն այս է թէ
ոճրագործն այս մարդուն վրայ նոյն մի-

ջոցը չէ գործածած, ինչ որ կնոջ վրայ ի գործ դրած է՝ յանակնկալս զարնելով և ի մի հարուած սպաննելով. իսկ այս մարդուն հետ չարաչար կռուեր է՝ դուռ կոտրող գողի մը պէս...։ Դիտեմ որ այսպիսի հուժկու մարդ մը դիւրաւ չսպաննուիր...։ Ո՞վ է արդեօք այս քաղաքացին։ Հարուստ վաճառականի մը կը նմանի։ Գաշտպանի դէմք ունի, հաւանականաբար սպանեալ տիկնոջ։ Ով լինիլն ստուգելու դժուարութիւն չենք կրեր։ Անշուշտ վաճառատուն և ընտանիք ունի, որք պիտի փնտռեն զինքն։ Ասկէց զատ՝ թուղթեր ու այլեւոյներ պիտի գտնուին գրպաններուն մէջ։ Այս կերպարանքով մարդ մը միշտ թղթապանակ մը կ'ունենայ իւր վրայ։

Առ այժմ տարակոյս չկայ թէ կողոպտելու համար սպանուած չէ, քանի որ ժամացոյցն ու ոսկի շղթայն վրան է. և ես յոյժ հակամէտ եմ հաւատալու թէ կնոջն սպանման մէջ ալ ատակը գործ չունի։



Ուրեմն գողերու ընկերութեան հետ չէ մեր գործն. հին դատապարտելոց մէջ ալ փնտռելու բան մը չունինք։ Հատընտիր գործ մ'է այս, որ հայը Լիքոքի մասնագիտութեան կը պատկանի բոլորովին։ Ցաւալի է որ չուզեր վրան առնուլ. իւր կարողութիւնը բնաւ կորուսած չէ հինաւուրց Լասքարն. այս անգամ ալ երկու լաւ խորհուրդ տուաւ ինձ. առանց անոր մութի մէջ պիտի աշխատէինք ըստ դիպաց։

Այժմ, եզրակացուց ապահովութեան պետը, կը մնայ գիտնալ թէ ինչ պիտի ունենք։

Եւ ճաշարանը մտնելով՝ բակին վրայ նայող պատուհանին մոտեցաւ մեքենաբար։

Օրն ի միոն լիսելու վրայ էր, փողոցն ամայի և լռիկ էր։ Իւր կառքն, որոյ մէջ Բիկաշ կը հակէր համրին վրայ, վանդակադրան առջեւ կեցած էր, և Բիէտուշ գողի քայլերով կը ճեմէր մայթին վրայ։

—Թաղին մէջ ոչ ոք բան մ'զգա-

ցած է, բսաւ ինքնիրեն ապահովութեան պետք։ Միայն ածխավաճառուհին քիչ մը տեղեկութիւն ունի, բայց խօսելէ արգիլելու համար կրնանք իր խանութին մէջ փակել զայն մինչև վաղն։ Այսպիսի յաջող վիճակ մը քիչ անգամ կը ներկայանայ գործի մ'սկիզբն, և կը փափաքիմ օգուտ քաղել ասկից։

Այո՛, յարեց մեծաքայլ ճեմելով ճաշարանին մէջ, փափաքելի բան է, և եթէ ծուղակ մը լարելու որոշումն ընեմ, պէտք է շուտով լարել. վասն զի դատական իշխանութեան հոս գործելն յետոյ ոչ ոք կուգայ կ'ինայ ծուղակի մէջ, որովհետեւ լրագիրք մեծ աղմուկ պիտի հանեն... արդէն կը տեսնեմ... Աբդուլլէն էֆէնտի էֆէնտն... և ոճրագործը պիտի կարդայ զանոնք... լրագիրները... բայց քանի որ չեն խօսած, կրնայ կարծել թէ մեք գտած չենք տուն...։ Իր համար բռնուած լինիլը գիտէ, բայց անհերկայ է որ բան մը չպիտի ըսէ, որովհետեւ յառաջուց այսպէս անօրինած է որ ո՛չ կարենայ



գրել, ո՛չ ալ նշանացի խօսիլ...։ Կը թուի թէ յատկապէս խորհրդապահ գործակից մը պատրաստելու համար մեծցուցած է զայն... պէտք է որ Սէն-ժաք փոզոյի վարժարանը ղրկեմ այդ համրն... երբոր կրթուի, շատ բան պիտի իմացնէ մեզ. բայց կրթելու համար ժամանակ պէտք է... և եթէ մինչև այն ժամանակ տէրը ձեռք ձգենք, գործը կը պարզուի...։

Արդ, հաւանական չէ՞ որ այդ դիակ տանողն այս գիշեր դայ պտոյտ մ'ընէ հոս...։ Կնոջ դիակը վերցնել տանելու ստիպուած լինելով՝ ժամանակ չէր ունեցած ամեն բան կարգի դնելու...։ Պահարանին մէջի մանդն անշուշտ մոռացուելիւն կը պատճառէ անոր։ Մանաւանդ եթէ թուղթերը վրան թողած է, Միւս կողմէ, եթէ իրերն այս վիճակի մէջ մնան մինչև վաղ առաւօտ, դատական քննութիւնը բան մը չկորսնցնեն...։ Մինչև իսկ անօգուտ է այժմ առաջին յարկն աչքէ անցունել։

Օ՛ն, եզրակացուց, ծուղակը փոր-

ձեմ։ Այս միջոց նոր բան չէ, բայց միշտ լաւ է. և որպէս զի լաւ կատարուելուն վստահ լինիմ, ես ինքնս պիտի գործադրեմ։

Այս որոշմամբ ապահովութեան պետք դաւիթք մտաւ, տունէն դուրս ելաւ, բակէն անցաւ միշտ զգուշանալով որ իւր քայլերք ձիւնին մէջ տըպուած քայլերուն հետ չխառնուին, և վանդակադռնէն դուրս ելնելով գնաց ուղղակի Բիէտուշի քով, որ ըսաւ իրեն.

— Ածխավաճառք տուն եկաւ. անշուշտ կինը պատմեց անոր իւր տեսածն ու լսածը, վասն զի խանութին դուռք ներսէն ամրապէս փակեցին, և կը կարծեմ թէ առանց ճաշելու պառկեցան։ Ես բանլիքին ծակէն նայեցայ, կանդեղնին մարած էր։

— Լաւ, այդ պէտք էր։ Այժմ պէտք է շուտով աշխատիլ։ Գնա ըսէ Բիկաշի որ նստած կառքով անմիջապէս կեդրոնական բանտն երթայ, համբրը բանտարկէ և ուրիշ երկու ընտիր թիւերու հետ հոս վերադառնայ։



— Հասկցայ. իսկ ե՞ս։

— Դուն ալ վանդակադրան առջեւ պիտի սպասես, և երբոր մեր մարդիկը գան, յարմար դատած տեղերդ դիր զանոնք, բայց ոչ շատ մօտ։ Անոնք ի հարկին պիտի օգնեն մեզ։ Երբոր ես մարդ կոչեմ, դու պիտի գաս։

— Ծուղակ մ՚է այս ուրիշն։

— Այո՛. դու գիտես ծուղակի դրութիւնը. թողուլ մուկն որ ծակը մտնէ, և վրան ցատկելու համար ըսպասել որ լաւ մը բռնուած լինի։

— Օ՛, այդ մասին ապահով եղիր։ Ես տեղէս չեմ շարժիր մինչեւ որ շըշակին ձայնը չլսեմ։ Ընկերներս փողոցին երկու ծայրերը պիտի պահպանեն։ Միայն սա կայ որ եթէ մուկերն ուշ դուրս ելնեն, գիւերն ի բուն պիտի ըսպասենք, և հիմա ժամը հինգն է։

— Թիւերէն մին ղրկէ հաց ու պանիր բերել տուր։ Ֆէօյեանթին փողոցին մէջ հացագործ և նպարավաճառ կայ։

— Եւ դուք, տէ՛ր։

— Ես վաղ առաւօտ կը ճաշեմ։

քեզ տեսնեմ, տղա՛ս. եթէ դուն յաջողի, այս գործ պատիւ պիտի բերէ քեզ։ Ահա ըսելիքս, երթամ սպասելու տեղս. դուն ալ մի՛ զատուիր տեղէդ։

Ա՛. աղէկ միտքս եկաւ, մուկը կին մը լինի թերեւս։

— Կին մը՛։

— Այո՛. սպասուհին կայ որ անեբեւոյթ եղած է։ Կրնայ վերադառնալիւր տիրուհւոյն արկղերը տանելու համար, սակայն չեմ յուսար։ Ուռաւել կը կարծեմ թէ համրին տեղը կուգայ բիթը կը ցուցնէ հոս. բայց թէ՝ նա լինի եկողն և թէ՝ ուրիշ մը, դու միեւնոյն կերպիւ պիտի գործես։

— Հասկցայ, տե՛ր։

Ապահովութեան պահակները կէս խօսքով կը հասկնան, և պետն հարկ չդատեց ընդլայնել Բիէտուշի տուած հակիրճ հրահանգներն։

Իսկոյն տանը մէջ մնաւ և դարապնակալութեան յարմարագոյն տեղ մ՚ընտրել միայն մնացեց։



Գիշերուան մութը բոլորովին կոխած լինելով, կ՚ուզէր լոյս ունենալ, որպէս զի եթէ մարդասպանը գար, դէմքը կարենար տեսնել։ Միայն թէ, այդ լոյսը դուրսէն տեսնուելու չէր։

Ցայնժամ դարանավայրն յայտնի եղաւ։

Ապահովութեան պետը ներքնասենեակը մտաւ, բաց թողլով դահլիճին և ներքնասենեկին դռներն, որք երկուքն ալ գաւթին մէջ կը բացուէին, որպէս զի ոճրագործին ոտնաձայնը լսէ, երբոր գաւիթը մտնէ։

Նմանապէս կէս բաց թողուց դահլիճին պատուհանն, որպէս զի չչակին սոյլը Բիէտուշի ականջն հասնի։

Խաղի սեղանին վրայ երկու մոմկալ ալիսաթեայ աշտանակներով, երկուքն ալ դրեթէ ամբողջ. կ՚երեւի թէ ոճրէն անմիջապէս յետոյ մարած էին զանոնք։

Ապահովութեան պետը վառեց ասնոնցմէ մին, և աշտանակը գետնին վրայ անկիւն մը դրաւ։

Յետոյ տեղ մը վնտռեց, ուստից

կարենար տեսնել առանց ինք տեսնը-
ւելու, և յարմար վայր մը չգտաւ։

Մտածեց ժամացոյցին մէջ մտնել,
որ զինքը պարունակելու չափ մեծ էր,
և պահարանին վրայ շեղանկիւն ծակ մը
կար, յորմէ կրնար շունչ առնուլ, և բա-
նալին ալ դռնակին վրան էր։ Բացաւ,
ձեւն ու մեծութիւնը զննեց, և տեսաւ
որ կրնար հոն պահուրտիլ՝ միմիայն ճօ-
ճանակին շարժումն արգիլելու անպա-
տեհութեամբ։

Այսպէս իւր վնտռածը գտած էր։

Թիկնաթոռ մ'առնլով՝ դաւթին դը-
ռան քով նստաւ և սպասեց։

—Ոտնաձայն լսածիս պէս՝ ժամացոյցին
մէջ կը մտնեմ, կ'ըսէր ինքնիրեն։ Մարդը
չկրնար մտքէն անցունել իմ հոն պահ-
ուրտած լինիլս։ Եթէ ներքնասենեակը
մտնէ, ըրածը կը տեսնեմ, և կը սուլեմ
առ Բիէտուշ։ Եթէ նախ ճաշարանն եր-
թայ, կամացուկ մը դուրս կ'ելնեմ և
դաւթին դրանը մէջ երթալով անտի կը
սուլեմ։ Ուստի համբերութեամբ ըս-
պասելէ զատ ուրիշ ընելիք չմնար մեզ։



Արդարեւ մեծ համբերութիւն պէտք
էր այն աւազականոցին մէջ գիշերելու
համար, դիակէ մը քանի մը քայլ հե-
ռի, և քաջասրտութիւն ալ պէտք էր
դէմ առ դէմ գալու համար, որչափ և
կարճատեւ լինէր, մարդասպանի մը
հետ, որ, յոյժ հաւանաբար, սպանու-
թիւն մ'աւելի կամ պակաս ընելու չէր
նայեր։

Բայց համբերութիւնն ու քաջասրը-
տութիւնն ոստիկանական արհեստին
երկու հիմնական առաքինութիւնքն են։

Ապահովութեան պետը նստաւ բե-
հեղապատ աթոռի մը վրայ, ուր ըս-
պանեալ կինն յաճախ նստած կը թը-
ւէր, և իւր ակամայ պարապոյ ժա-
մերն զբաղեցուց այս տարօրինակ դոր-
ծին պարագայներուն վրայ խորհելով
և ներկայած հակասութիւնները քննե-
լով։

Չկրցաւ գոհացուցիչ եղրակացու-
թեան մը հասնիլ, և քանի մ'անգամ
ըսաւ ինքնիրեն թէ Պ. Լէքոքի անուղ-
ղակի յաջորդին՝ Թոլպիաքի՝ տաղան-

գէն օգուտ քաղ՛ել պէտք պիտի լինէր։

Ժամերն անցան նշանակուելով ժամացոյցէն՝ որ մեծաձայն հնչմամբ կը զարնէր։

Կէս գիշերուան տասներկուքը նոր զարկած էր, և տքնողն ելնելու միտմամբ վառելու կը պատրաստուէր, որովհետև առաջինն սպառելու վրայ էր և առկայծ լոյս մը միայն կուտար, թեթև դղրդիւն մը լսեց։

Գաւթին դուռը մեղմով կը դառնար իւր ծղինիներուն վրայ։

Իսկոյն վաղեց իւր թաքստոցը մտաւ։

Զգուշաւոր քայլերու ոտնաձայն մը կը լսուէր գաւթին մէջէն, և հետզհետէ ներքնասենեկին կը մօտենար։

Շատ չանցած՝ զապեալ ձայն մը լսուեցաւ։

— Մարի՛, հո՞ս է։

Ապահովութեան պեան իւր ներկայութիւնը չմատնելու համար զգուշացաւ շարժում մ՛ընելէ և շունչը բռնեց։

Ան ատիճան խոր լռութիւն տիրած էր այս չարաշուք տան մէջ, որ դահլճին դորդին վրայ քալելու ոտնաձայնն իսկ կը լսուէր թաքստոցէն։

Ան ժամուն, ուր կառքերը դադրած էին փողոցներու սալարկները դղրդելէ, և քիչ կահաւորուած յարկի մը բարձր ձեղուններուն տակ ամենափոքր ճարճատիւն մ՛արձագանգ կուտար, ամենաթեթեւ շնչառութիւնն իսկ զգալի կը լինէր, և հսկողը ժամացոյցին արկղին մէջ կծկտած, կը զղջար որ մէջը մոռած ժամանակ ճօճանակին շարժումն ակամայ կասեցուցած էր, որոյ մեծահնչիւն թիք-թաքն անշուշտ պիտի ծածկէր իւր շնչառութեան տկար շշնջիւնը։

Մնաց որ, գիշերային այցելուն անշուշտ չէր կասկածեր թէ զինքը կը լրտեսէին, վասն զի իւր փնտռած կնոջ անունն արտասանելով, թանկագին մատնութիւն մը կ՛ընէր ոստիկանութեան, որոյ գլխաւոր պաշտօնեայներէն մին ներկայ էր։

Ոստիկանութիւնը գիտէր այժմ թէ

Մարի անուն կին մը բնակած էր այդ տան մէջ։

Ապահովութեան պետը կրկնապատկեց իւր ուշադրութիւնն։ Իւր բոլոր ականջներով մոտիկ կ'ընէր, և իւր բոլոր աչերով կը պտտուէր նայիլ արկղին ծակէն, որոյ մէջ արձանի պէս անշարժ կեցած էր։

Մարդը միշտ գողի պէս կամաց կամաց քալելով ներքնասենեկին մոտեցաւ և դրան վարագոյրը վեր առնելու վրայ էր։

Սակայն վեր առնէ առաջ կանգ առաւ, և անգլիերէն լեզուով կրկնեց այն խօսքը զոր արդէն արտասանած էր։

Փոխանակ ըսելու, Մարի՛, հո՞ս էք, ըսաւ կէս ձայնիւ.

— Ա՞ր եռ հիր, Մէրի՞։

Բնականաբար ոչ ոք պատասխանեց այս կոչման։

Բայց ապահովութեան պետն անոր ոչ մի վանկը չկորսնցուց։

— Ա՛, կինն անգլիացի է, ըսաւ մտօքը, կամ գոնէ կը հասկնայ անգլիերէն։ Այս ալ նշանացից մ'է որ յետոյ պիտի օգնէ մեզ մեր ճանբան գտնելու։



Նորէն պահ մը դադար եղաւ. յետոյ ներքնասենեկին դրան վարագոյրը շարժեցաւ, ձեռք մը մէկ կողմ քրաւանոր ծանր կերպասին ծալերն, և գլուխ մ'երևցաւ բարձրաձեւ փեղոյրով, որոյ նոր մետաքսը կը ցոլար մոմին առկայծ լուսով, զոր ապահովութեան պետն՝ յանկարծակիի գալով՝ ժամանակ չէր ունեցած փոխելու։

Այս միակ ճրագն ընդհատ լոյս մը միայն կուտար, մերթ մարելու պէս լինելով, յետոյ յանկարծ վերստին վառելով մէկ երկու մանրերկրորդի չափ, և ապա նորէն մարելով և ներքնասենեակն ա՛յնչափ թանձր մութի մէջ թողլով, որչափ քիչ մ'առաջ վերակենդանացեալ լոյսը պայծառագոյն եղած էր։

Մոմին նուաղուածները թոյլ չէին տար ժամացուցի բնակչին՝ դիտել զանծանօթն, որ ներքնասենեկին վարագոյրը դեռ բոլորովին վեր առած չէր։

Ասկէց զատ, աչտանակն, որոյ մէջի մոմը կ'սպառէր, դեռինը դրուած լինելով, մարդուն երեսը շեղակի և վարէն վեր կը լուսաւորուէր։

Ձախող պայման առաջին անգամ տեսնելիք մարդու մը դէմքն որոշելու համար։

Ապահովութեան պետն հազիւ կրնար նշմարել զայն ժամացոյցի արկղին շեղանկիւն ծակէն, որ ճշդիւ իւր աչերուն հաւասար բարձրութեամբ բացուած էր։

Միայն սև ու թաւ մորուք մը կը նշմարէր, վասն զի փեղոյրին վար դարձած եզրը կը ծածկէր մարդուն ճակատն, և այսպէս երեսին վերին մասն ստուերի մէջ կը մնար։

— Արդեօք նե՞րս պիտի մտնէ, դո՞ւրս պիտի ելնէ, կը հարցնէր ինքնիրեն դարանակալն, և այս խնդիրը միայն չէր որ մտահոգութիւն կը պատճառէր իրեն։

Գիշերայածը ոճրագործն էր, այս մասին տարակոյս չունէր, և չպիտի



թողուր որ եկածին պէս երթար։

Բայց հարկ կը լինէր որոշել թէ անմիջապէս նշան տալով՝ ձերբակալե՞լ տալ պէտք էր թէ քիչ մ'սպասել։

Ազդարար սայլն անմիջապէս արձակելով՝ կը զրկուէր այն օգտակար տեղեկութիւններէն՝ զորս կրնար քաղել ոճրագործին վարմունքէն։

Անշուշտ առանց պատճառի չէր եկած թափառիլ այն տան մէջ՝ ուր ոճիրները գործած էր և ուր իւր զոհերէն միոյն դիակը փռուած։

Պատճառը կը գուշակէր կամ գուշակել կը կարծէր ապահովութեան պետն։

—Արեւ լուսին պէս պայծառ է, կ'ըսէր հետեւութիւն հանելու այն ապրագր թեամբ՝ որ սեփական էր իրեն։

Այս չարաճճին գիտէ որ իւր համբը բռնուած է և սպանեալ կինն ալ դիակնարանն է։ Բայց չգիտեր թէ մեք գիտենք այն տունն ուր ոճիրները գործած է, և հոն կ'սպասենք իրեն։

Միայն կը կասկածի թէ քանի մ'օ-

ըէն ամէն բան երևան պիտի ելնէ։

Մինչև իսկ եթէ մեք հոս եկած չլինէինք, դրացիները վերջապէս պիտի զարմանային այս տան վարձակալին յանկարծ չուելուն վրայ, առանց հաշուելու դիակին հոտն որ թաղին մէջ պիտի ծաւալէր։

Ասոնք մոռնալով՝ մեր մարդն ըսեր է ինքնիրեն թէ սպանութեան հետքն աներևոյթ ընելու համար պէտք էր օդուտ քաղել առաջին գիշերէն։

Այժմ ամէն բան կարգի պիտի դնէ ճաշարանին մէջ, դիակը պատշաճապէս պիտի ծրարէ գաւթին մէջ խռնեալ արկղերէն միոյն մէջ, և ինքնին պիտի շալկէ տանի այդ բեռը, զոր միւսին պէս համրին վերցնել տալ կը յուսար։

Այդ Մէրէն, զոր քիչ մ'առաջ կը կոչէր, սպասուհին է, որ իր դաւակիցը պարտի լինիլ, և երէկ իրիկուն տեսնելով որ չէր վերադառնար, մեկներ է՝ դռները բաց թողլով, որպէս զի կարենայ ներս մտնել։

Ածխավաճառուհին գրեթէ քսաւ



ինձ թէ սպասուհին անգլիացի էր, և ինքն ալ անգլիերէն խօսեցաւ։ Ճշդիւ այսպէս է, և այժմ գործը մատիս ծայրըն է։

Բայց ամենաճարտար սրիկայի մը հետ է մեր գործն, և եթէ իւր գործն սկսելէ առաջ ձերբակալել տամ, աներկբայ եմ որ իսկոյն պատմութիւն մը պիտի հնարէ իւր հոս ներկայութիւնը մեկնելու համար։

Ես ալ՝ եթէ անոր տեղը լինէի, չը պիտի վարանէի։ Կրնայ ըսել թէ սպանեալ կնոջ տարփածուն էր... դաղտնաբար զայն տեսնելու կուգար... ապացոյց՝ որ անոր մեռած լինիլը չէր գիտեր... կամ ուրիշ պատմութիւն մը այս ճաշակով։

Եթէ՝ ասոր հետ ի միասին՝ իւր ով լինիլը ծածկելու մասին ալ բաւական ճարպիկութիւն ունենայ, որ դժուարին չէ օտարազգիի մը համար... որովհետեւ անգլիացի կը թուի... կրնայ մեզ վեց ամիս կամ մէկ տարի մ'զբաղեցնել ամուլ և թերեւս իսպառ ապարդիւն հետախուզութեամբը։

Ո՛չ... ո՛չ... պէտք չէ այսպէս լինի. Զեմ ուզեր խաղի գալ։ Պէտք է որ այդ թշուառականը գործի վրայ բռնենք... այս է միակ միջոց անոր ուրատան արգիլելու։

Օ՛ն, մարդուկս, գնա՛ մաքրէ ճաշարանին տախտակամածն, և պահարանին մէջ քշած դիակդ ալ սնտուկին մէջ ծրարէ։

Երբոր կարգը սնտուկը վերցնել տանելու դայ, յայնժամ կ՚օգնենք քեզ։

Շչակս քովս է, դահլճին պատուհանը բաց է, և Բիէտուշի ականջը սուր։

Վայրկենի մէջ կը կատարուի գործը դ։

Այս ամեն եղբակցութիւնք հանուեցան, բոլոր այս յատակագիծ շինուեցաւ՝ գրելու համար պէտք եղածէն աւելի կարճ ժամանակի մէջ, մետաքսեայ փեղջյրով մարդուն սենեակը մտնելէ առաջ ըրած ջնջութենէն աւելի նուազ ժամանակի մէջ։

Ապահովութեան պեան, սպասելու մտադիր, լռիկ կեցաւ։



Անակնկալ դէպքերու համար պէտք եղած զգուշութեանց միջոցները ձեռք առած էր. շչակը ձեռքն էր, և միայն կը մնար հաստատիմ, քալ և արթուն Բիէտուշի ազդարարելու համար շրջթունքին տանիլ։

Ուստի բնաւ վախնալու բան մը չունէր, ընդհակառակն՝ ամեն բան պիտի շահէր թողլով ոճրագործն որ իւր գործողութեանց սկսէր։

Զարաճճին հոն էր միշտ. ոչ քայլ մ՚առաջ գնացած էր, ոչ ետ, այլ կը շարունակէր իւր շուրջը նայիլ՝ առանց գլուխը վեր առնելու։

Անշուշտ իւր ընելիքը կը մտածէր, կը թուէր նաեւ թէ դժկամակութիւն կ՚զգար ներքնասենեակին սեմէն ներս անցնելու։

— Հոս չէ, մրմռաց յոյժ լաւ ֆըրանսերէնով. ո՞ւր կրնայ լինիլ։

Դարանամուտը կը լսէր այս խօսքերն և ուրախութեամբ կ՚ըսէր ինքնիրեն.

— Բերնովդ կը բռնուիս, թշուա-

ռական։ Փնտռէ անգլիացի սպասուհիդ... չպիտի գտնես... քթիդ խընդացեր է... քեզնէ նուազ տխմար է եղեր... վասն զի չպիտի կրնանք բըռնել զայն այս գիշեր... ճշմարիտ է որ բան մը չկորսնցներ սպասելով...։

Եւ յանկարծ միտքը խորհուրդ մը իյնալով, ապահովութեան պետն ըսաւ ինքնիրեն.

— Եթէ վերն էր սպասուհին... անխոհեմութիւն ըրի առաջին յարկին սենեակներն աչքէ չանցուցելով... երկրորդ դիակին երեւան ելնելը վըրդովեց զիս։

— Դեռնին վրայ այս աշտանակը... զարմանալի է, ըսաւ անծանօթը, շարունակելով իւր մենախօսութիւնն։ Արդեօք նա՞ դրաւ հոս։

Այս միջոցին առկայծեալ մոմը վերջին լոյս մ'արձակեց, որ դժբաղդաբար չչակին վրայ ցոլաց, զոր դարանակալն իւր բերնին մօտ բռնած էր, այսինքն ճշդիւ ժամացուցին արկղին վրայ բացուած ծակին ետին։



Յետոյ մոմին պատրոյգը մարեցաւ՝ ծաւալելով այն պժգալի հոտն, որ իբր վերջին հառաչն է այն մոմերուն, զորս արդի ճարտարութիւնը խնայողաբար կը շինէ քիչ մը մեղրամոմով և շատ մը ճարպով։

Ապահովութեան պետն երկար կենալով ներքնասենեկին մէջ, ուր առջի իրիկունէն ի վեր կրակ չէր վառուած, պաղ առած էր, և չէր նշմարած թէ հարբուխ կը լինէր։

Հարբուխն առթի մը կ'սպասէր երևան ելնելու համար. մոմէն ելած ծխալից շոգին փռնգտալու ստիպեց զայն։

Ինքզինք բռնել ուզեց, բայց փըռընգտուքը զարհուրելի շառաչմամբ պայթեցաւ, և այնչափ ուժգին ցնցում մը տուաւ անոր, որ չչակը ձեռքէն պրծելով՝ արկղին յատակն ինկաւ։

Այս ձախող դէպքէն մասնուած դարանամուտն ինքզինք դեռ չգտած, անծանօթն, արտասովոր պաղարիւնութեամբ մ'և արագութեամբ ժամացոյ-

ցին քով վազեց, ձեռքը բանալին երկընցուց, որ փականքին վրայ մնացած էր, և երկիցս դարձունելով դուրս քաշեց, դրպանը խոթեց և մեկնեցաւ։

Ապահովութեան պետն իւր լարած որոգայթին մէջ բռնուելով, անկարող էր այնուհետև հետամտիլ անծանօթին, զոր այնչափ կը բաղձար ձերբակալել։

---

Դ.

Ապահովութեան պետը, ժամացոյցի պահարանին մէջ բանտարկուած, մինչև իսկ իւր մարդիկն օգնութեան կոչելու կարող չէր, որովհետև չչակը ձեռքէն ինկած էր։

Վերցնելու համար ծռիլ հարկ էր, և ժամացոյցին արկղին անձկութիւնը բացարձակապէս կ'արգելուր իրեն շարժիլ։

Ինչպէս կրնայ մարդ ծունգը ծալել՝ երբոր փակուած լինի նեղ ու երկայն պատեանի մը մէջ, ուր շարժելու ազատութիւն չունենայ՝ ինչպէս դագաղի մէջ փակուած մարդ մը։



Իւր թոքերուն բոլոր ուժովը գոչելէ զատ ուրիշ միջոց չկար. ուստի չը վարանեցաւ ի գործ դնել՝ աչքն առնելով իւր վրայ հրաւիրել ոճրագործին բարկութիւնն, որ անշուշտ զինեալ պարտ էր լինիլ, և կրնար ետ դառնալ և զինքը լռեցնելու համար խոշտանգել։

Բայց մարդկային ձայնը շատ հեռիէն չլսուիր, մանաւանդ երբոր վարագոյրներով, տախտակորմերով և պատերով շրջափակեալ լինի։

Արդարև գահլճին պատուհանը բաց էր. բայց դահլիճը կը գատեր բակէն ներքնապահնեակն, որոյ մէջ բանտարկուած էր ապահովութեան պետն, և բակն ալ կը գատեր դահլիճը փողոցէն, ուր Բիէտուշ և Բիկաշ պահպանութիւն կ'ընէին։

Եթէ չչակն հեռի հասնող հրացան մ'է, մարդկային կոկորդը գրպանի ատրճանակ մ'ըսել է։

Ապահովութեան պետն ի զուր ա-

մեն ձայնիւ գոչեց, շունչն սպառելու չափ պոռչտեց. ոչ ոք լսեց իւր ձայնն, և շատ չանցած հասկցաւ իւր ճգանց ունայնութիւնը։

Մնաց որ հասկցաւ նմանապէս թէ այս դժնդակ խաղն իրեն խաղցողը փախչելով ազատիլ միայն խորհած էր և ոչ իւր թշնամին սպաննել։

Տարօրինակ անծանօթն, որ առջի իրիկունն երկու սպանութիւն գործեւած տան մը մէջ կէս գիշերին այցելութիւններ ընելու կուգար, յանդուգն գիշերայածն, ո՛չ միայն ետ չդարձաւ իւր դարանակալն սպաննելու համար, այլ տունէն դուրս փախչիլ աճապարեց։

Ապահովութեան պետը լսեց տանը դրան ուժգնութեամբ փակուիլն, և ամեն բան լմնցաւ։

— Իւր գործն ամբողջացնելէ հրաժարեցաւ, կ'ըսէր ինքնիրեն, և մեղ թողուց կնճիռը լուծել երկու դիականց հետ, և անշուշտ ոչ ևս ոտք պիտի կոխէ հոս՝ այժմ որ դաւին դաղտնիքն երևան ելաւ։



Բարեբաղդաբար չկրնար հեռանալ։ Իմ թիւերս հոս են. Լոմոն փողոցին անկիւնը չհասած պիտի բռնուի ու ծրարուի։

Այս խորհրդածութեամբ քաջալերուած, և իւր ստորադասելոց ուշմութեան վրայ վստահ, բանտարկեալն առանց մեծ դժուարութեան յանձն առաւ սպասել որ գան զինքն ազատեն։

Բայց ո՛չ Բիէտուշ, ո՛չ Բիկաշ և ո՛չ ուրիշ ոևէ մէկը չերևցաւ։

Տան վայրկեան, ոառորդ մը, կէս ժամ անցաւ և իւր օժանդակներէն ոչ մին կենդանութեան նշան չտուաւ։

Յայնժամ հարկ եղաւ իրեն հասկընալ տխուր ճշմարտութիւնն, այսինքն թէ ոճրագործն յաջողած էր խաբել անոնց հսկողութիւնն և ինքզինք ազատել։

Աւելորդ է նկարագրել վաղեմի ոստիկանին զգացած դառն կսկիծն ու զայրոյթն։

Անշուշտ Նաբոլէոն առաջին ալ նոյն

զգացումներն ունեցած էր երբոր Վաթերլոյի պատերազմական դաշտին վրայ Պլիւխէր և իւր բրուսիացիներն երևան ելան փոխանակ Կրուշիի, որուն կ'ըսպասէր։

Որսորդն իւր որսը բռնել կը կարծէր, և ինք բռնուած էր. յուսացեր էր որ թակարդ լարելով պիտի բռնէր ոճրագործն, և յանկարծ ինք ինկեր էր թակարդին մէջ։

Որչափ և պաղարիւն ու տրամախոհ լինի մարդ, որչափ և հինցած լինի արհեստին մէջ, դարձեալ ինքզինք կը խաբէ իւր հնարած վարպետութեանց արժէքին վրայ, և երբոր անյաջող ելնէ, պատրանքն աւելի դառնապէս կ'զգայ։

— Հայր Լքքոք չէր բռնուեր այսպիսի խաղի մը, կ'ըսեր ինքնիրեն դառնութեամբ բաղդէն մատնուած ոստիկանապետն։

Եւ ամօթահար ինքնասիրութեան ցաւերուն վրայ կ'աւելնար ընկերական մեծ շահուն ծառայելէ վրիպելուն կսկիծն։



Ոճրագործն ազատած էր. կրնար տակաւին մարդիկ ղախչախել և կանայք խոզխոզել. և այդ ոճրագործն, այդ վտանգաւոր սիկարեանը ձեռք անցած էր, երբոր քիչ մ'աննախատեսութեամբ, և մանաւանդ մէկ սխալ գործողութեամբ երկվայրկենի մը մէջ իդերև ելաւ Ֆոնթի գետափը բնակող իմաստունին թելադրած տնօրինութեանց բոլոր պտուղն։

— Ահա այս է ամեն բան մէկէն պարզել ուզելուն հետևանքը, կ'ըսէր ապահովութեան պետն հառաչելով։ Զափազանց գրկողը լաւ չկրնար սեղմել (*)։

Եթէ հասարակ ծուղակ մը լարելով շատանայի, մեր մարդիկը կը բռնէին այդ թշուառականն այն վայրկենին որ վանդակադրան զանգակը կը բաշէր, և եթէ ես միտքս չդնէի գործի վրայ բռնել զայն, եթէ ներք-

(*) Ֆրանսերէն առած մը, որ մեր ՀԱՅԿ ձեռքով երկու ՀԱՅերուկ չկրնար բռնուիլ առածին կրնայ համապատասխանել։ Ծ. Թ.

նասենեկին վարագոյրը վեր առած վայրկենին սուլէի, փոխանակ սպասելու որ դիակը ծրարել սկսի, այժմ մեր ձեռքին մէջն էր նա, և կրցած էի խօսեցնել, վասն զի համր չէ, իւր մեղսակիցն երկու լեզուով կը կոչէ։

Վերջապէս թերեւս գտնուի այդ մեղսակիցն, ըսաւ բանտարկեալն ինքզինք մխիթարելու համար, այդ Մարին կամ Մէրէն, ինչպէս որ ոճրագործն անուանեց անգլիերէն։

Բայց ժամը քանիին դուրս պիտի ելնեմ այս տուփէն։ Այդ ապուշները կարող են մինչև լոյս սպասել գալու գիս ասոից հանելու համար ... և մինչ ես հոս կը կատղիմ, ոճրագործը ճանբայ կ'առնու ... առանց հաշուելու որ ես հոս կը սառիմ և ամեն անդամներս կը կծկին։

Վերջապէս վիճակը զուարթ չէր։

Հակրային բարեկարգութեան նահատակին իրանը փայտէ պատեանի մը մէջ սեղմուած էր, կրնակն ալ պղնձէ անհեթեթ ճօճանակի մը ծանրութենէն ճմլած։



Խոնջեալ սրունքն ոչ ես կը յօժարէին կրել զայն. զրոյէն վեց աստիճան վար ցուրտ կար, պաղը մինչև ոսկորներուն ծուծը կը թափանցէր, և հաղիւ կրնար շունչ առնուլ այն նեղ ծակէն, որ բարեբաղդաբար բերնին առջևն էր։

Ես չէր կարծեր որ իրաւ կ'ըսէր, երբոր կը նախատեսէր թէ այս տանջանք յունվարի այս երկար գիշերին հետ միայն վերջ պիտի գտնէր։

Արշալուսոյ առաջին նշոյլներն արդէն կը ճերմկցնէին դահլիճին ապակիներն, յանկարծ ձայն մը, որ ոճրագործին ձայնին չէր նմաներ բնաւ, ապահովութեան պետը կոչեց յանուանէ։

Աւելորդ է ըսել թէ զինքն աղաչել չտուաւ պատասխանելու համար թէ՝

— Հո՛ս եմ։

Հաւատարիմ Բիէռուշ իսկոյն ներքնասենեակը վազեց, և անոր ու մեծին միջև անցած տեսարանն անհնար է նկարագրել։

Խեղճ պահակին ապշութիւնն երբոր

իւր պետը ժամացոյցի մը առաջին մէջ դրաւ, բանտարկելոյն զայրոյթը, կըշտամբանքն ու չքմեղանքը, հարցու�ներն ու պատասխաններն օրք գիրար կը դիմաւորէին, տեսակ մը կատաղերգութիւն կը կազմէին, համեմեալ այնպիսի թիւրիմացութեամբ, որոց արդիւնքը դիւրին է երեւակայել։

Այս բազմընդհատ խօսակցութեան առաջին խօսքերը ժամացոյցին ծակին մէջէն փոխանակեցան, պարագայ մը, որ և ևս կ'աւելցնէր վիճակին այլանդակութիւնը։

Բարեբաղդաբար Բիէտուշ դիւրատար զինարան մ'ունէր իւր դրպանին մէջ· աքծաններ, հիւսան մկրատներ, դարբինի ճանկեր և այլ գործիներ, որք ինքզինք ամրափակող չարագործի մը վերջին ապաստանը բռնաբարելու կը ծառայեն։

Իսկոյն կոտրեց ժամացոյցին դրան փականքն, և ակնածաբար օգնելով դուրս հանեց իւր պետն այն բանտէն, ուր երկար և անհաճոյ ժամեր անցու-



ցած էր· միանգամայն թիկնաթոռ մը մատոյց հանգչելու և գաւաթ մ'օղի տաքնալու համար։ Բիէտուշ իւր արշաւանաց մէջ կնիւնապատ շիշ մը լցուն օղի կը կրէր։ Բայց պետը ո՛չ աթոռն ընդունեց, ո՛չ օղին։

— Գունե կը յուսամ որ բռնեցիր բանտարկեցիր զայն, հարցուց մէկէն։

— Ո՞վ, տէ՛ր իմ, ըսաւ ոստիկանը զարմանօք։

— Այն մարդն... որ կէս գիշերին հոս մտաւ և քառորդ մը յետոյ դուրս ելաւ։

— Ներեցէք, տէ՛ր· ես ոստիկանութեան բարձր պաշտօնատար մը միայն տեսայ... զոր Պ. քաղաքապետն առ ձեզ գրկած էր...։

— Խե՞նդ ես թէ վրան կը խնդաս։

— Ոչ մին, ոչ միւսը, տէ՛ր։ Կէս գիշերը զարկած էր· Լոմոն փողոցին կողմէն վայելչազգեստ մարդ մ'եկաւ երկարաստան կրկնոցով, ճերմակ փողպատով, մետաքսեայ նոր փեղջրով, գորշ կղբենի ձեռնոցներով... վան-

դակադրան առջև կանգ առաւ, դուռն հրեց և իւր տանը պէս ներս մտաւ։

— Եւ դու վրան չցատկեցի՞ր։

— Ցէ՛ր, ես ինձ տրուած հրահանգը միայն գիտեմ։ Դուք զիս պահակ դրած ժամանակիդ պատուիրած էիք որ եկողները թողում անցնին, և մինչեւ որ ձեր չչակին սոյլը չլսեմ, չշարժիմ տեղէս։

— Լա՛ւ. բայց երբոր մարդը դուրս ելաւ, հարցուց պետը բարկացայտ ձայնիւ։

— Դուրս ելնելու վերաբերեալ հրաման մը տուած չէիք ինձ, տէ՛ր։ Եւ որովհետև չսուլեցիք, բաւական տարակուսած էի։

Եւ սակայն պատասխանատուութիւն առի վրաս արգիլելով այն մարդն՝ երբոր վանդակադռնէն դուրս ելեր կ'երթար, և հարցուցի թէ ուստի՛ կուգար։

Ի սկզբան քիչ մը շփոթեցաւ, բայց իսկոյն պատասխանեց ինձ թէ «Տ—ՆԷ ԵՄ»։



— Դուն ալ կարծեցիր թէ «ոստիկանութենէն եմ» ըսել կ'ուզէր։

— Ո՛չ, չհաւատացի մէկէն ի մէկ... տոմակը տեսնել ուզեցի։

— Ցուցո՞ւց։

— Այո՛, տէր, կանոնաւոր էր. և աւելցուց թէ Պ. վերատեսչին կողմէ եկած էր կարևոր զեկոյց մը ձեզ ընելու։

— Կրկնապատի՛կ աւանակ, գոչեց պետն համբերութիւնն սպառելով, դու գիտէիր որ ոստիկանութեան պաշտօնատան մէջ չեն գիտեր մեր հոս գալն, ինչպէս նաեւ ոճրին Արպալէթ փողոցին մէջ գործուած լինիլն։

— Այո՛, քիչ մը զարմացայ Պ. վերատեսչին արդէն իմացած լինելուն վրայ, բայց ըսի մտօքս թէ գուցէ Բիկաշ, համին եւ տարած ժամանակ, իրողութիւնը պատմած էր Կեդրոնական բանտի տնօրէնին, նա ալ...

— Լռէ՛, անպիտան, և հասկցիր ըրածդ։ Ոճրագործը փախուցիր։

— Ոճրագո՛ւրծը, գոչեց Բիէտուշ

երիս քայլ ընկրկելով. ոճրագործն էր այն մեծ մարդն՝ որ այնպիսի ծանր կրկնոց մը հագած էր։

— Այո՛, նոյն ինքն էր, և քու աւանակութեամբդ կը պրծի մեր ձեռքէն, մինչդեռ ձեռքդ միայն երկնցնելով պիտի բռնէիր։ Պատճառ եղար որ կենացս մէջ այս առաջին անգամ ձեռքս անցած ամենադեղեցիկ առիթը կորուսինք։

Հաշիւդ տեսնուած է, տղա՛ս, կբրնաս ծրարդ կապել։ Մեք պէտք չունինք այնպիսի պաշտօնէից, որք այսպէս առաջին անգամ իրենց դէմն ելնողէն կը խաբուին... վասն զի այդ թաղեցին օ՛չ գող, օ՛չ չարագործ է արհեստիւ. և սակայն խաղ խաղաց քեզ, որ քսան տարիէ ի վեր ոստիկանութեան լրտեսի պաշտօն կը վարես. մե՛ծ ամօթ։

Պահակն առջեւը կը նայէր տրխրութեամբ, երբոր պետն այս կշտամբանքը կը տեղար անոր վրայ զայրագին շարժմամբք։

Սակայն առաջին տարափէն յետոյ, Բիւրեղուշ քիչ մը շոկուեցաւ և յուզեալ կերպիւ ըսաւ.

— Ճշմարիտ է, տէ՛ր, սխալեցայ։ Ցի՜. արժանի եմ վռնտուելու։ Քսան տարի ծառայած եմ, ինչպէս որ կը՛սէք, և միշտ պատուաւոր կերպիւ, կրնամ պարծիլ այս մասին։ Բայց հոգ չէ. մեր արհեստին մէջ մարդ մ՚իրաւունք չունի խաբուելու.

Ջնջել տուէք անունս ոստիկանութեան պաշտօնէից ցանկէն. վռնտեցէք զիս, թող նօթի սատկիմ երեք ը՞ն՞ր-հետ, որք ինձմէ զատ ընտանիք չունին քանի որ մայրերնին լուսապարանին մէջ տաք ու պաղ առնլով մեռաւ։ Արժանի է ինձ, որպէս զի խրատ լինի որ այսուհետեւ փողոցի մէջ քաղաքացիի մը խօսքերը չկենամ... Ակէ զատ, մեծ աւանակութիւն ըրի... պէտք էր հասկընայի իւր կերպարանքէն և իւր տոմսակը ցոյց տալու ձեւէն թէ մեղնէ չէր...։

— Արդեօք նայեցա՞ր տոմսակին թիւը։ Բայց անշուշտ պիտի ըսես ինձ

Ի ՅԻՇԱՏԱԿ ԻՒՐԱՔԲՐ ՄԻՐՈՐԵԱՆ ... 23 ՅՈՒՆՈՒԱՐԻ 1929 ԹՎԻՆ

թէ միտք չբրիր, ըսաւ պետը զայրա-
գին դառնութեամբ։

— Ոչ, միտք չբրի, տէ՛ր, ոչ ալ
ուշադրութիւն ըրի որ տումնակն...
այժմ կը յիշեմ... հին ձեւով էր...
հին տումնակ մը ղոր սրիկայն գտած կամ
գնած պէտք է լինի...։ Ես համրակ
զինուորի պէս վարուեցայ... ի՞նչ ը-
նեմ։ Անպիսի օրեր կան, ուր մար-
դու գործք ձախորդ կ'երթայ... կամ
լաւ չկատարուիր...։ Բայց միւս կող-
մէ, չեմ կրնար մնալ այս պաշտօնիս
մէջ... ընկերներս պիտի իմանան, և ոչ
ես պիտի համարձակիմ անոնց երեսը
նայիլ... պէտք է վռնտուիմ... յա-
նիրաւի ստակ առած կամ գողցած չեմ
լինիր... աւելածու կամ հնահաւաք
կը լինիմ որպէս զի ապրիմ հայ տա-
նիմ...։

Ձեր սիրտը շարժելու յուսով չէ որ
կ'ըսեմ ասոնք, տէ՛ր, աւելցուց Բիէ-
տուշ իւր պետին դէմքին վրայ գթու-
թեան շարժում մը նշմարելով։

Գիտեմ ինձ վայլածն և չեմ գան-



գատիր... մինչեւ իսկ չպիտի մոռնամ
երբէք որ դուք միշտ բարեսրտութիւն
ըրած էք ինձ... բայց պիտի չմոռնամ
նաեւ այն վատաշուէրն որ իմ դժբաղ-
դութեանս պատճառ եղաւ... պիտի
վնտռեմ զայն մինչեւ որ գտնեմ...
և պիտի գտնեմ, սրիկայն... և դոհ չը
պիտի լինիմ մինչեւ որ Ռոքէթի հրա-
պարակին վրայ գլխատուիլը չտեսնեմ։

— Կը կարծես ուրեմն թէ պիտի ճան-
չե՞ս զայն։

— Ա՛յո՛, աչերէն։ Թէեւ շատ լոյս
չէր, որովհետեւ կազի լապտերէն հեռի
էինք երբոր արգիլեցի զայն, բայց ա-
չերը կատուի աչերու պէս կը փայլէին։
Ասկէ զատ, յօնքը բթին արմատին վը-
րայ կցուած էր։

Փողպատեն և կրկնոցին խօսքը չեմ
ըներ. այնչափ աւանակ չէ որ զանոնք
նորէն գործածէ։ Սակայն, ո՛վ գիտէ.
անոնց դոյնը, ձեւը, նիւթն և այլ ա-
մէն բանը մտքիս մէջ է։ Թամբի հը-
նավաճառանոցին մէջ եթէ տեսնեմ,
կրնամ ճանչել։

Եւ, կրկին կ'ըսեմ ձեզ, տէ՛ր, ճըշմարտիւ, ինչպէս որ անունս Ժան Բիէտուշ է, պիտի բռնեմ այն անպիտանը որ իմ պաշտօնէ ճանբուելուս պատճառ եղաւ։

— Մանիկ ըրէ՛, ըսաւ պետը վայրկեան մը լուռ կենալէ յետոյ. այս առաջին անգամ է որ այդ բան կը պատահի քեզ։ Լաւ զօրական մ'իւր պաշտօնին մէջ մէկ անգամ պակասութիւն ընելուն համար չճանբուիր։ Ասկէ զատ, չեմ ուզեր որ զաւակներդ թշուառութեան մէջ իյնան։ Քեզ կը պահեմ, բայց երկու պայմանով։ Առաջինն այս է որ բան մը չպիտի ըսես ընկերներդ։

— Անհոգ եղիք, տէ՛ր, ես ապուշի տեղ դրուելու փափաք չունիմ.

— Երկրորդն այս է որ ըրած անմտութիւնդ դարմանելու համար ամեն հընար եղածն ի գործ պիտի դնես։

— Ներկայ եղիք, տէ՛ր. և եթէ երբէք պէտք ունենաք այնպիսի մէկու մը՝ որ ինքզինք կրակը նետէ ձեզ համար, ակնարկ մ'ըրէք ինձ։



— Խօսք չեմ ուզեր, գո՛րծ, գո՛րծ։ Այս գիշեր գէշ գործեցինք, ջանանք լաւ գործել այս առաւօտ։

Մեր թիւերն իրենց տե՞ղն են։

— Հրահանգը տալէս ի վեր շարժած չեն իրենց տեղէն։

— Լաւ։ Գնա ըսէ որ շարունակեն իրենց պահնորդութիւնն, և դու նախ Թաղին ոստիկանատունը գնա և ըսէ ոստիկանապետին թէ զինք հոս կ'սպասեմ դիակ մը վերցնելու համար։

— Ի՞նչ կըսէք, տէ՛ր, արդեօք...

— Սպանեալ մարդ մը կայ ճաշարանին մէջ, ըսաւ պետը նոյն ձայնիւ՝ որով ըսէր թէ չինական անօթ մը կայ դահլիճին վառարանին վրայ։

— Երկու սպանութի՛ւն, մրմռաց Բիէտուշ։ Բաւական յառաջադէմ է եղեր մեր կցեալ յօնքով մարդն։

— Ոստիկանատունէն պիտի երթաս Կոտոյ-աբ-Մորուա փողոցը թիւ...

— Գիտեմ, տէ՛ր, Գ. Թալպիաքի տունն։

— Օ՛ն, այնչափ տխմար չես որչափ

կրնաս կարծուիլ այս գիշերուան ըրածէդ իվեր։ Այո՛, Թոլպիաքի տունն։ Ըսէ իրեն որ անմիջապէս հոս գայ զիս տեսնէ։ Ասկէ աւելի բան մը չպիտի ըսես, կը հասկնա՞ս... և կ'առնուս ինձ կը բերես։

— Հասկցայ, տէ՛ր։ Ըսել է թէ գործը Գ. Թոլպիաքի պիտի յանձնէք... ձեր տնօրէնութեան ներքև։

— Ի՞նչ ըսել կ'ուզես։

— Ներեցէք, տէ՛ր. կը փափաքիմ գիտնալ թէ որո՞ւ հետ պիտի աշխատիմ... վասն զի, գիտէք, տէ՛ր, թէ մէն մի պետ իւր մեթոտն ունի... և ես կը ջանամ միշտ համակերպիլ...։ Օրինակի համար, ամեն անգամ որ Գ. Լը-քոքէն գործածուեցայ...

— Լը-քոք չուզեր այլ ևս աշխատիլ, ուստի Թոլպիաքի հրամանին տակ պիտի գործես։

— Ամենայն անձնուիրութեամբ, տէ՛ր, կրնաք վստահիլ։ Միայն թէ, ցաւալի է որ հայր Լը-քոք չուզեր այլ ևս աշխատիլ, վասն զի կրնամ վստա-



հութեամբ ըսել թէ անոր նմանը տակաւին գտնուած չէ։

— Թոլպիաք ալ անկէ վար չպիտի ծնայ երբոր քիչ մ'աւելի հիննայ Ֆրանսայի մէջ։

Բաւական շաղակրատեցիր, օ՜ն, ճանրայ եղ։ Կառք մը նստէ որպէս զի շուտ երթաս, և ջանայ որ անմոռութիւն չընես։

Բիէտուշ՝ ցնծալով ներսում գտնելուն վրայ, և իւր սխալը դարմանելու բաղձանքով վառուած, ողջունեց իւր պետն և դուրս ելաւ։

— Զգուշացիր որ ձիւնին վրայի քայլերդ չաւրես, գոչեց ապահովութեան պետն։

Եւ դահլիճէն անցնելով՝ գնաց նայեցաւ կիսաբաց պատուհանէն։

Դոհութեամբ տեսաւ որ Բիէտուշ՝ երևունևվեց ժամառաջ ոճրագործին և համրին թողած հետքը չաւրելու համար՝ երկար պտոյտ մը կ'ընէր։

Ուրիշ նոր քայլերու հետք մ'ալ կ'երևէր ձիւնին վրայ, առաջին երկու շաւիղներուն քով։

Այս նոր քայլերն անշուշտ դիւրաբային այցելուին էին՝ որ ապահովութեան պետը ժամացոյցին մէջ փակած էր, և առաջիններուն հետ չէին խառնուեր։

Բաղդատութեան յարմարագէպ կէտ մ'էր հաստատելու համար թէ նոյն այցելուն առջի օրն եկած էր արդէն. և ապահովութեան պետը միտրը դրաւ դատական իշխանութեան ուշադրութեանը ներկայացնելու։

Առ այժմ կանոնաւոր գործողութեանց ճանբուն մէջ մնալ միայն կը խորհէր. այն է դիակին վիճակը քննել, ապանելոյն ո՛վ լինիլն ստուգել, և այլ պաշտօնական ձեւակերպութիւնք՝ որք հասարակ դէպքերու մէջ կը գործածուին։

Այս պաշտօնական գործողութիւններն յապաղել տուող պատճառներ աչ ևս կը կենային, որովհետև սնրագործը գիտէր այժմ թէ տունն ոստիկանութեան ձեռքն էր։

Չէր կրնար յուսացուիլ թէ անգամ



մը ծուղակէն պրծելէ յետոյ վերստին կուգար բռնուիլ։

Ուստի ուրիշ բան չէր մնար պետին, բայց միայն թաղին ոստիկանապետին դալուն սպասել, և միչև անոր եկած ժամանակ՝ ինք տանն առաջին յարկն ոչքէ անցուց, ուր ոտք չէր կոխած տակաւին։

Վեր ելաւ, և՝ ինչպէս գեռնայարկին մէջ՝ բոլոր բանալիները դռներուն վրայ գտաւ։

Այլ կողմը, դահլճին և ներքնասենեկին վրայ, ննջասենեակ մ'և հագուելու խուց մը կար։

Հոն ալ չքեղ զարդանիւթերու և հասարակ կահերու խառնուրդ մը կար, բայց բնաւ անկարգութիւն։

Անկողինն ապրուած չէր, այլ վերմակներով ծածկուած։

Սակայն պահարանները դատարկ էին, և հագուելու խուցին քովի հանդերձարանին մէջ կնոջական զգեստ բնաւ չկար։

Առաւել ապացոյց մ'էր այս թէ

սպանեալ կին երկար ուղևորութիւն մ'ընելու կը պատրաստուէր, և թէ ոչ ևս այս տունը վերադառնալու միտք ունէր։

Ապահովութեան պետն այս քննութիւններն ընելու զբաղած էր, վանդակադրան առջև կանգ առնող կառքի մը շառաչիւնը լսելով պատուհանը դիմեց։

Տեսաւ որ Թաղին ոստիկանապետը վար կիջնէր կառքէն, վազեց ընդունիլ զայն, և շուտ մը տեղեկացուց գործին։

Յետոյ, որովհետև Արպալէթ փողոցի տան մէջ ըրած քննութիւնն աւարտելով՝ անյապաղ ոստիկանութեան պաշտօնատունը վերադառնալու փոյթ ունէր, ուղղակի պահարանը տարաւ զայն, ուր սպանեալ մարդուն դիակը փռուած էր։

— Նոյն ինքն է՝, գոչեց իսկոյն ոստիկանապետն։

— Ի՞նչ, կը ճանչէ՞ք այս մարդ, հարցուց ապահովութեան պետն։

— Այո՛, վաճառական մ'է, որ երկու օրէ ի վեր անյայտ եղած է, և զոր ընտանիքն որոնել կուտայ։ Որդին քիչ մ'առաջ քովս էր, և անոր յայտարարութիւնները կ'առնուի՝ երբոր Բիէտուշ եկաւ զիս կոչեց ձեր կողմէ։

Հոս եկած ժամանակս չէի բնաւ սպասեր մէկ քարով երկու հարուած ընել։

— Ես ալ չէի յուսար որ այսչափ շուտով պիտի պարզէր գործն։

Աներկբայ է՛ք որ ձեր ըսած վաճառականին դիակն է այս։

— Կատարեալապէս աներկբայ։ Այս գէմք գուցէ քսան անգամ տեսած եմ Լիւքսանպուրկի և Բուսարանական պարտէզներուն մէջ։

Ասկէ զատ մեծ յարդ ունի Թաղին մէջ, վասն զի հոն ծնած մեծցած է, և հայրն ալ հոն կը բնակէր իրմէ առաջ։

Կտաւի վաճառական էր։

— Հարուստ էր։

— Յոյժ հարուստ, և իւր հարստութիւնը նոր չէ, երկու կամ երեք սերունդէ կ'սկսի։

— Անունն ի՞նչ է։

— Պ. Լէօրէօ, իւր վաճառատան ընկերական անունն է Բիէռ Լէօրէօ, Պէրար եւ ընկերութիւն։

— Ուրեմն ընկեր մ'ունի։

— Ընկերը գործի չխառնուիր . . . կը կարծեմ իսկ թէ Փարիզ չընակիր։

— Ամուսնացեա՞լ է այս պարոնն։ Ի՞նչ էր ըսիք անունը։ Հա՛, Լէօրէօ . . : Անուններ կան որք չեն վայլեր կրողին։

— Ամուսնացեալ է եւ երկու որդիք ունի։ Ադրանիկ որդին եկաւ այս առաւօտ ժամ եօթնին գիս արթնցուց, եւ հօրն անհետանալը ծանոյց։

Խոստացայ որոնել տալ, բայց բնաւ չէր անցներ մտքիս թէ այսչափ շուտով պիտի կրնայի գտնել։

— Երէկուընէ ի վեր իմ ըրած խուզարկութիւններս այդչափ յառաջ գացած չեն գրեթէ։

Սակայն թել մը ձեռք անցուցած ենք... թել մը որ կրնայ խզիլ, արդարեւ, բայց կրնայ ալ մինչեւ ծայրը տանիլ մեզ . . . :



Տեսնենք թէ Թոլպիաք պիտի կրնա՞յ օգուտ քաղել։

— Թոլպիա՛ք, գործէ քաշուած էջ՞ն որ Անդլիայէն եկաւ մեզ։

— Այո՛, անոր կ'սպասեմ, որպէս զի այս գործն իրեն յանձնեմ, այսինքն երկրորդական հետախուզութիւնները, վասն զի մեք ալ պիտի աշխատինք . . . : Քննիչ դատաւորն արդէն գործի ձեռնարկած է։

— Արտառոց մարդ մ'է այդ Թոլպիաք։ Իրեն յատուկ եղանակներ ունի, ինչպէս նաեւ ձեզ նայելու ձեւեր։

— Իւր արհեստն ուրիշ դպրոցի մէջ սովրած է, բայց լաւ կը կատարէ։ Սակայն ես հայր Էրքոքն առաւել նախամեծար կը համարէի։ Դժբաղդաբար չուզեր գործի խառնուիլ։ Իւր վիճակն ապահոված է, որդին կ'ամուսնացընէ։ Կարճ խօսքով, շատ մ'անպիտան զատճառներ յառաջ բերաւ ինձ։

Սպասելով որ անոր յաջորդը գայ, կրնանք առեղծուածին օկզբնաւորութիւնը լուծել։

— Քիչ մը կնճռոտ կ'երեւի ինձ այդ սկզբնաւորութիւն։

— Բայց եւ այնպէս փորձենք. առաւել դժուարինները դուշակած ենք։

Արդ՝ կ'ըսենք թէ սպանեալ մարդը Պ. Լէօրէօ անուն հարուստ վաճառականն է, ամուսնացեալ, հայր ընտանեաց, ընտրող, ընտրելի և որ ի կարգին։ Ինչպէ՞ս մարդ ճանչցուած էր բարքով. զգա՞ստ էր։

— Գործի մէջ կանոնաւոր էր, մինչեւ իսկ քիչ մը խիստ, թաղին մանրավաճառներուն խօսքին նայելով։

Բայց կ'ըսուի նաւ թէ իւր առուտուրէն դուրս զբօսանքը կը սիրէր։ Ցաճախ թատրոն կ'երթար և փոքրիկ տիկնայքը չէր ատեր։

— Եւ ոչ իսկ Արպալէթ փողոցը բնակողներն։ Ես ալ այդպէս կը խորհէի։

Սիրակցելու համար եկեր է հոս և չփնտռածը գտեր է։

Աղէկ միտքս եկաւ. այս տան մէջ բնակող կինն ալ պէտք է ճանչէք։



— Ցոյժ քիչ, դիպուածով իմացայ թէ անգլիուհի մը բնակելու եկած էր հոս անցեալ աշնան վերջերը։

— Անգլիուհի՞ մը. ճիշդ է. սենեկապան կնոջ մը հետ, այնպէս չէ՞։

— Այո՛, և պատմեմ ի՞նչպէս իմացանալը։ Օվերնացի մը, որ այս տան վանդակորմին քով խանութ մ'ունի, եկաւ ըսաւ ինձ թէ երկու կանայք եկած մնած էին առաւօտ մ'այս տան մէջ, որ երեք տարիէ ի վեր դոց էր, և բնակութիւն հաստատած՝ առանց տանտիրոջ հաւանութեան։ Թէև շատ ծանր գործ մը չէր, բայց և այնպէս քննութիւն մը բացի և իմացայ որ ածխավաճառն իւր փայտերն ու խոիւները կը դնէր այս տան բակին մէջ. ուստի տան վարձուիլը գործին չգալով՝ ամբաստանութեան դիմած էր։

Կը յիշեմ որ վարձակալ տիկին եկաւ տեսաւ զիս դրասենեկիս մէջ... արդարև գեղեցի՛կ կին մը։

— Կը ճանչէ՞ք զինքը, եթէ տեսնէք։

— Կարծեմ։

— Մէկ պահէն դիակնարանը կ'երթանք։

— Դիակնարա՞ն։

— Այո՛, այդ տիկին անուկի մը մէջ գտնուեցաւ՝ սրտէն դանակով զարնուած։

— Շան-տը-լ'Ալուէթ փողոցին գո՞ր. ծը։

— Ճշդիւ։ Կը տեսնէք որ ձեր տալիք տեղեկութիւնները մեծ կարևորութիւն ունին։

— Անշուշտ, բայց կարճ են ունեցած տեղեկութիւններս։

Տիկինը տան տիրոջ հետ կնքուած երեքամեայ վարձակալութեան կանոնաւոր պայմանագիր մը ցոյց տուաւ ինձ. ես ալ հրամայեցի ած խալաճառին որ իւր փայտերը վերցնէ բակին մէջէն. գործն ուրիշ հետևանք չունեցաւ։

— Ուրեմն, այդ անգլուհին պարկեշտաբա՞ր կ'ապրէր։

— Գոնէ գանգատի պատճառ մը չէր տար։ Եթէ գայթակղական գործ մ'ընէր, կրնայի իմանալ, վասն զի կիսաշխարհի իշխանուհիներն (խառնակեցիկ կանայք) հաղուագիւտ են Վալտը-Կռասի թաղին մէջ։ Միւս կողմէ, Օվէրնացին՝ թշնամի լինելով անոր՝ չէր վարաներ ամբաստանել զայն։

— Այդ Օվէրնացին հարցաքննել պէտք է։ Ես արդէն խօսեցայ երեկ իրիկուն անոր կնոջ հետ։ Զանոնք երկուքն ալ պիտի յանձնարարեմ Թղպիսաքի։

Տանտիրոջ անունը չէ՞ք յիշեր։

— Ո՛չ. այսչափ միայն մնացած է միտս թէ Անգլիա կը բնակի։ Վարձակալութեան պայմանագիրը Լոնտրայէն թուագրեալ էր։

— Լաւ, բայց անշուշտ ներկայիչ մը պարտի ունենալ ի Փարիզ։ Կ'իմանանք զայն կաղուածական տուրքն ստացող հաւաքչէն։

Այժմ, եղբայրներնե՛ք։ Դեռատի և գեղեցիկ օտարազգի կին մ'առանց պատճառի չգար բնակիլ Արպալէթ փողոցն։

Ո՞ւր կը բնակէր Գ. Լէօրէօ։

— Բանթէոնի հրապարակը։

— Աստի երկու քայլ հեռի։ Կը հասկրցուի գործը։ Կնոջ պաշտպանն իւր մօտ բնակեցուցած էր զայն, և այնպիսի փողոց մ'ընտրած, ուր նշանաւոր վաճառական մը կրնայ՝ առանց իւր պատիւը վտանգելու՝ ստէպ այցելութիւն տալ գեղեցիկ երեւոյթ ունեցող տան մը վարձակալուհւոյն։

— Շատ հաւանական է արդարեւ։ Միայն թէ... ինչո՞ւ համար կինն ըսպանած լինի զայն։ Ոսկի հաւկիթ ածող հաւը չեն սպաններ։

— Անշուշտ կողոպտելու համար չէ. ժամացոյցն ու ոսկի շղթայն վրան են։

— Մինչև իսկ թղթապանակն։ Ահա կը տեսնեմ ռուսական սեկէ պատեանի մը ծայրն զգեստին գրպանէն դուրս ելած։

— Եթէ արժէքներ պարունակէ, մեր կարծիքը կը հաստատուի։

Մնաց որ, ես արդէն գաղափարս կազմած եմ այս կրկին սպանութեանց



պատճառներուն և գործադրութեան եղանակին վրայ։

Բայց հետաքրքիր եմ տեսնելու նախ թէ Թոլպիաք ինչպէս պիտի նկատէ գործն։ Այստեղից խելք մ'է և իրեն յատուկ եղանակներն ունի։

Սպասենք։

— Երկար չպիտի սպասէք, ըսաւ ոստիկանապետը պատուհանին մօտենալով։ Ասսիկ կառք մը կանգ կ'առնու և Բիէտուշ վար կ'իջնէ ան։

— Շատ լա՜ւ, գոչեց ապահովութեան պետն ալ պատուհանին մօտենալով և փողոցը նայելով. առանց ժամանակ կորսնցնելու յաջողեր է գտնել զԹոլպիաք։ Բարեբաղդութիւն մ'է այս, վասն զի այդ սիրելի Թոլպիաք յաճախ գեղերը կ'երթայ և շատ անգամ դուրսը կ'օթեւանի։

Բայց, աւելցուց ապահովութեան պետը, կը թուի խօ թէ չաճապարեր կառքէն իջնել։

Թէեւ ապսպրած եմ Բիէտուշի որ բան մը չյայտնէ անոր, և սակայն կը-

նայ կասկածիլ որ գործն ատիպողական է, և թէ իրեն հետ Արեւելեան պատերազմին կամ Ֆոնտոյնէրուն ընթացքին վրայ խօսելու համար չէ որ կը կոչեմ զինք։

Արդէն երկար ժամանակէ ի վեր լուսցած էր, և ձմրան գեղեցիկ արեւու մը ճառագայթները կը լուսաւորէին տխրատեսիլ Արպալէթ փողոցը։

Բիէտուշ՝ կառքին բաց դռնակին առջեւ կանգնած՝ կը խօսակցէր կառքին մէջ կեցած անձի մը հետ։

Կարծես թէ կը ջանար համոզել որ դուրս ելնէ կառքէն, և այն անձն ալ կը դժկամակեր։

Ա՛ծխալաճառն և կինն՝ իրենց խանութին սեմին վրայ կանգնած՝ կը նայէին հետաքրքրութեամբ։

— Այս մարդիկն առժամապէս իրենց ծակին մէջ փակել պէտք էր, մրմռաց ապահովութեան պետը։

Վերջապէս, Պ. Թոլպիաք — արդարեւ նա ինքն էր — դուրս ելաւ կառքէն լայն մուշտակի մը մէջ փաթթուած՝ այր օձիքը, մինչեւ ականջներն ելած, կը ծածկէին երեսին երեք չորրորդը։

Քանի մ'Երկվայրկենի չափ վարանեցաւ տակաւին. յետոյ նշմարելով ապահովութեան պետն և թաղին ոստիկանապետն, որ հեռիէն բարեկամական ակնարկներ կ'ընէին իրեն, վանդակադուռն հրեց՝ արագ ակնարկ մը ձգելով աջ ու ձախ, և բակը մտաւ։

— Օ՛ն ուրեմն, գոչեց ապահովութեան պետը, պահ մը կարծեցի թէ սա աղ ինքզինք ծածկել կ'ուզէր հայր Էքքոքի պէս։

Բիէտուշ կառքը քիչ մը հեռին կեցընել տուաւ, և ինք դնաց կանգնեցաւ Օվէրնացիներուն առջեւ, որք իսկոյն խանութին տակն իջան։

Սակայն Պ. Թոլպիաք պատերուն քովէն անցնելով դէպի տանը ներսի դուռը կ'երթար։

— Աւասիկ մարդ մը, որ արհեստին բնազդումն ունի, ըսաւ ապահովութեան պետը. ձիւնին մէջ ապակ



ուած՝ այր օձիքը, մինչեւ ականջներն ելած, կը ծածկէին երեսին երեք չորրորդը։

Քանի մ'Երկվայրկենի չափ վարանեցաւ տակաւին. յետոյ նշմարելով ապահովութեան պետն և թաղին ոստիկանապետն, որ հեռիէն բարեկամական ակնարկներ կ'ընէին իրեն, վանդակադուռն հրեց՝ արագ ակնարկ մը ձգելով աջ ու ձախ, և բակը մտաւ։

— Օ՛ն ուրեմն, գոչեց ապահովութեան պետը, պահ մը կարծեցի թէ սա աղ ինքզինք ծածկել կ'ուզէր հայր Էքքոքի պէս։

Բիէտուշ կառքը քիչ մը հեռին կեցընել տուաւ, և ինք դնաց կանգնեցաւ Օվէրնացիներուն առջեւ, որք իսկոյն խանութին տակն իջան։

Սակայն Պ. Թոլպիաք պատերուն քովէն անցնելով դէպի տանը ներսի դուռը կ'երթար։

— Աւասիկ մարդ մը, որ արհեստին բնազդումն ունի, ըսաւ ապահովութեան պետը. ձիւնին մէջ ապակ

քայլերուն մէջէն չերթար, որպէս զի ոճրագործին քայլերուն հետքը չաւ-
րուի կամ չչփոթի։

— Ճշմարիտ է, մտմտաց ոստիկա-
նապետն։ Մինչև իսկ հոդ կը տանի
իւր քայլերուն հետքը չթողու։ Կար-
ծես թէ հաւկիթներու վրայ կը քալէ։

Զգուշութիւնն աւելորդ էր։ վասն
զի ցուրտը կարծրացուցած էր ձիւնն,
և նոր ծագած ժամդոյն արևը դեռ չէր
կակղած զայն։

Պ. Թոլպիաք նշմարեց անշուշտ թէ
շփոթութեան երկիւղ չկար, որովհետև
սկսաւ այնուհետև համարձակ իւր կօշ-
կին կրունկները դետեղել ձիւնին վրայ,
որ ոչ ևս հետք կը պահէր։

Սակայն երկար պատմ մ'ըրաւ հին
հետքերը չաւրելու համար, և երբոր
պատուհանին տակն հասաւ, ապահո-
վութեան պետն ըսաւ անոր ժպտելով.

— Կեցցե՛ս, սիրելի՛դ իմ Թոլպիաք։
Աւասիկ ադոր կ'ըսեն «վարպետի
մուտք»։ Համբակ մ'ուղղակի կ'անցնէր
կուգար։



Գոնէը պատասխան չտուաւ, այլ
վեր ելաւ, ոչ առանց քիչ մը վարանե-
լու, գաւթին դրան աստիճաններէն,
և ներս մտաւ։

Ապահովութեան պետն և թաղին
ոստիկանապետը կ'սպասէին գաւթին
մէջ։

— Հոս մտի՛ք, ըսաւ անոր ապա-
հովութեան պետը դահլճին դուռը
բանալով։ Գործի ձեռնարկելէ առաջ
պէտք է խօսինք։

Պ. Թոլպիաք դահլիճը մտաւ, եր-
կու պաշտօնատարք ալ ետևէն։

— Ի՞նչ գործ է, հարցուց մուշտա-
կին օձիքը վար դարձուցելով։

Յայնժամ տեսնուեցաւ դէմքը, զոր
խնամով ծածկած էր կառքէն իջնելէն
ի վեր։

Քառասունէն քառասունն հինգ տա-
րեկան մարդու մը դէմք էր, կատա-
ղելապէս գերծուած, որոյ կանոնաւոր
դիծերը պաղարիւնութիւն և անտար-
բերութիւն միայն կ'արտայայտէին։

Ճակատը խորշոմ չունէր, բերանը

փոթ չունէր, և իւր ուղիղ ու բարակ քիթին յատուկ հանգամանք մը չունէր։

Քառանկիւնի և ցցուեալ կզակն արդարև բաւական անյողդողդ բնաւորութիւն մը ցոյց կուտար, բայց դորշ աչքերը կրակ չունէին և նայուածքը դըրեթէ քաղցր էր։

Երեսին գոյնը միակերպ էր և քիչ մը թխորակ, գիծերը կարծր վէմի վրայ փորուած կիսարձանի մը ճշդութիւնն և խստութիւնն ունէին։

Մի՛չհասակ էր, ո՛չ գէր, ո՛չ նիհար· իւր շարժմունքն ու կերպերը մասնաւոր բան մը չունէին։

Կարծես թէ բնութիւնն յատկապէս կերտած էր զայն, որպէս զի շատ մը տարբեր անձանց դեր կատարէ՝ առանց ճանչուելու։

Թանկագին առաւելութիւն մ'է այս ոստիկանութեան լրտեսի մը համար, և անհնարին չէր որ այս ֆիզիքական հանգամանքն անոր կոչումն ուրիշներու նպաստած լինէր։

Այն օրը, սակայն, Գ. Լըքոքի վարչական յաջորդը սովորականէն քիչ մը պակաս անզգած կ'երևէր։



Իւր սուր աչերը կարծես բան մը կարդալ կ'ուզէին ապահովութեան պետին աչերուն մէջ, և իւր ձայնը սովորականէն նուազ աղօտ հնչիւն մ'ունէր երբոր հարցուց թէ ի՞նչ բանի համար կոչուած էր։

— Զէ՞ք կասկածիր քիչ մը, հարցուց ապահովութեան պետը ձեռները չփելով։

— Ամենևին, պատասխանեց Թոլպիաք· թերևս Օ'Սիլլիվանի ժառանգութեան համար լինի, որոյ վրայ ոստիկանութեան Գ. վերատեսուչը տեղեկութիւնները խնդրած էր ինձմէ անցեալ շաբթու։

— Եւ զոր անտարակոյս պիտի պարզէք ժառանգորդները գտնելով, սիրելի՛դ իմ Թոլպիաք։

Բայց, առ այժմ, ինդիրն ուրիշ բանի վրայ է, և երբէք լաւագոյն առիթ մը չպիտի ունենաք ձեր տաղանդին դիմելու։

— Տաղանդս պատրաստ է ծառայել ձեզ։

— Շատ գոհ եմ, վասն զի քիչ մը առաջ վանդակագրան առջեւ ձեր վարանումը տեսնելով, վախցեր էի . . .

— Ինչ բանէ։

— Վախցեր էի թէ յօժարամտութիւն չունէիք մեզ օգնելու։ Դժկամակութեամբ քալող մարդու մը դէմք ունէիք։

— Ես գործի մ'ինչ լինին հասկընալէ առաջ մերժելու սովորութիւն չունիմ, և դեռ չեմ գիտեր թէ ինչ գործ է որ յանձնել կ'ուզէք ինձ։

— Ճշմարիտ է ձեր ըսածն, և ես պիտի . . .

— Կառքէն դուրս ելնել չուզելուս պատճառն այս է որ ձեր 29 թիւը տխմար մ'է։

Փոխանակ կառքը փողոցին ծայրը կեցնել տալու, բերաւ կեցուց տան մը դրան առջեւ, ուր հաւանաբար քանի մ'անգամ պիտի գամ. վասն զի կ'ենթադրեմ թէ առանց պատճառի չէք կոչեր զիս հոս։



Դրացիներէն նշմարուելու հոգ չունէի, և մուշտակիս օձիքը վեր դարձընելու համար քիչ մը ժամանակ կորուսի։

— Հարիւր անգամ իրաւունք ունիք, սիրելի՛ վարպետս, և ես պիտի լուամ Բիէտուշի գլուխն։ Ստուգիւ այդ տըղան իմնալու վրայ է։

Դանք գործին։

Անշուշտ իմացած էք արդէն արկղին գործն։

— Ա՛յն արկղի՞ն, որոյ մէջ կնոջ դիակ մը գտնուեցաւ . . . Շան-տը-Լա-Լուէթ փողոցն։ Ա՛յո՛ . . . երէկ իմացայ ոստիկանութեան պաշտօնատան մէջ, ուր Օ'Սիլլիվանի ժառանգները գտնելու գործին համար գնացած էի . . . բայց մանրամասնութիւնները չեմ գիտեր . . . ։ Սակայն գիտեմ որ համր մը կամ համր ձեւացող մը կայ, եւ գործն ուշագրաւ կ'երևի ինձ։

Թոլպիաք իւր խօսքերն զգուշութեամբ իրարմէ զատելով կը խօսէր, ինչպէս որ բակին մէջ քալած ժամանակ ըրեր էր։

— Ձեր կարծածէն շատ աւելի ուշադրաւ, մանաւանդ ձեզ համար։ Բոլորովին ձեր մասնագիտութեան շրջանակին մէջ կը մտնէ։ Անգլիական գործ մ'է, գո՞նէ մասամբ։

Կը հաճի՞ք ստանձնել։

Այս առաջարկին առջև Թոլպիաք անզգած կեցաւ և չփութաց պատասխանել։

— Կը խորհիք ուրեմն, հարցուց պահ մը լռութենէ յետոյ, թէ օժանդակի մը դիմելու պէ՞տք ունիք։

— Բացարձակապէս։ Մեր թիւերն արհեստով շարագործներ գտնելու մասին լաւ են. մեք հոս մեծ ընկերութեանց մէջ պիտի աշխատինք, և այս անոնց գործը չէ։ Ո՞ւնին դուրս մարդ մը պէտք է մեզ։

— Բայց... Գ. Էրքոքն ունիք։ Կը թուի ինձ թէ ձեր փնտռած ամէն պայմաններն ունի։

— Էրքոք, հարստացած լինելով, այժմ չուզեր գործել։

— Այնպէս կը ձևացնէ, բայց եթէ ես իւր հետց վրայ քալեմ...



— Ինքը խօսեցաւ ինձ ձեզ համար, և ցերմնպէս յանձնարարեց։

— Ձեի կարծեր որ այդչափ բարեկամ լիներ ինձ։

— Կը սխալիք. Էրքոք կը գնահատէ արժանիքն, և ձերն անժխտելի է։ Այսպէս, սիրելի՛դ իմ Թոլպիաք, մերժելու պատճառ մը չունի՞ս։ Գործը բացառիկ է, պատիւ և շահ պիտի բերէ ձեզ, վասն զի պարզեւն յոյժ մեծ պիտի լինի։ Կ'ընդունիք, այնպէս չէ՞։

— Ձեզ պատասխանելէ առաջ, նեբեցէք ինձ հարցնել ձեզ թէ ինչ վիճակի մէջ է։

— Երկու խօսքով պատմեմ ձեզ ինչ որ արժանի է ձեր ծանօթութեան։ այսինքն խաղին կարևոր մասերը։ Մընայեալն ի միասին կը տեսնենք, վասն զի չեմ ուզեր ազդեցութիւն ընել ձեր տպաւորութեանց վրայ։

Արդ՝ աւասիկ իրողութիւնը։ Կինն անծանօթ։ Մարմնոյն քննութիւնն օգտակար յայտնութիւն մը չբրաւ, և ոճիրը գործուած տեղը գտնելու հա-

մար մոռածուեցաւ համրը թող տալ և զինքը լրտեսել։ Նա բերաւ մեզ հոս, և պիտի տեսնէք հիմա տունը պաքտած ժամանակնիդ թէ սխալ տեղ չէ բերած։

Այժմ դուք ալ գրեթէ ինձ չափ գիտէք։ Որոշեցէք։

—Սիրելի՛ վարպետս, պատասխանեց Թոլպիաք քիչ մը խորհելէ յետոյ, կ'ընդունիմ. . . պայմանաւ մը։

—Ինչ որ ուզէք պիտի տրուի ձեզ։

—Այդ չէ մտահոգութիւս. բայց եթէ գործն ստանձնեմ, բացարձակ ազատութիւն ունենալ կ'ուզեմ.

—Քաջ գիտէք թէ մեք երբէք փայտ չենք դներ ձեր անիւներուն առջեւ։

—Գիտեմ, բայց այս անգամ առաւել ընդարձակութիւն ունենալ կ'ուզեմ։ Գործը նկատեցի և մասնաւոր եղանակաւ մը կը հասկնամ։ Ուստի կ'ուզեմ միայնակ և ուղածիս պէս վարել։

—Այդ մասին դժուարութիւն մը չկայ։



—Ձեր մորդիկ պարտին ինչ որ ըսեմ կատարել, ուրիշ բան չեմ ուզեր։ Զպիտի հարցուի ինձ երբէք թէ ինչո՞ւ այսպէս կամ այնպէս կ'ընեմ, և չպիտի պարտաւորեն զիս այս կամ այն միջոցը գործածել, որ լաւ չթուի ինձ։ Միով բանիւ, բացարձակ տէր պիտի լինիմ հետախուզութեանց տնօրէնութեան մէջ։

—Ո՞րչափ ժամանակ պէտք է ձեզ, ըստ ձեր դատողութեան, գործն ի կատար ածելու համար։

—Ամիս մը։ Եթէ մինչեւ մէկ ամիս չկրնամ ճարտարագործը ձեզ յանձնել, գործը վարչութեան կը թողում։

—Կ'ընդունիմ, սիրելի՛ս։ Ես առած եմ մեծերուս կարծիքն և տարակոյս չունիմ որ հաւանութիւն կուտան մեր մէջ եղած բերանացի պայմանագրութեան։

Այս վայրկենէն սպարապետ էք դուք։ Ինձ ուրիշ ընելիք չմնար, բայց միայն տեղեկութիւններ մատակարարել ձեզ, և պիտի սկսիմ բան մը ցու-

ցընելով որ ձեր ուշադրութիւնը պիտի դրաւէ։

Հետս եկէք, աւելցուց ապահովապետը Թոլպիարի ձեռքէն բռնելով և ճաշարանը տանելով։

Պահարանին դուռը բաց էր, և առաջին բանը զոր Թոլպիաք տեսաւ, դժբաղդ վաճառականին դիակն էր, որ արիւնաշաղախ տախտակամածին վրայ փռուած էր՝ դանկը ջախջախած։

Պ. Թոլպիաք իւր անձին տէր էր։ Իւր անզգած դէմքն ո՛չ վախ, ո՛չ խանդ, ո՛չ զարմանք, ո՛չ սրտայուզութիւն արտայայտած էր։

Եւ սակայն, երբոր յանկարծ այս սոսկալի տեսարանին առջեւ գտնուեցաւ, չկրցաւ ծածկել ջղային ցնցումը, և ապահովապետը կարծեց իսկ նշմարել թէ երեսին գոյնը թեթեւ մը դեղնեցաւ։

— Ցիրաւի, ըսաւ ժպտելով, կըրնայ երդնուլ մարդ թէ այս դիակին տեսիլն ազդեցութիւն ըրաւ ձեր վրայ։ Թող տակաւին պնդեն թէ արհեստին



կիրառութիւնը կը կարծրացնէ սիրտը։

Կը խոստովանիմ սակայն թէ ես այդչափ զգայուն չէի կարծեր ձեզ։ Այս պիսի բաներ շատ տեսած ենք, դուք ալ ես ալ...։ Զէ՞ք յիշեր Սապոյ փողոցի տան սենեկին մէջ խողխողեալ մայրն և երկու զաւակներն...։ Ես զարհուրած էի... իսկ դուք բնաւ չդրդուեցաք... և ուրիշ օր յետոյ գտաք ոճրագործն...։ Ցուսանք որ այս անգամ ալ այնպէս շուտով կը գտնենք... թէ և քիչ մը սրտայուզութիւն զգացիք ի սկզբան։

— Այո՛, սրտայուզութիւն զգացի գոհունակութենէս, պատասխանեց Թոլպիաք, որ արդէն իւր պարարտութիւնը գտած էր։ Դարձին մէկ մասը միայն գիտնալով՝ մթին կը գտնէի։ Ահա յայտնութիւն մը՝ որ կը լուսաւորէ զայն։

Այս երկրորդ դիակին անձնաւորութիւնը միւսէն աւելի դիւրութեամբ կրնայ ստուգուիլ։

— Արդէն ստուգուած է, սիրելի՛ս։ Այս մարդը Թաղիս մէջ բնակեալ պատ-

ուաւոր վաճառական մ'էր, որ այս տունը բնակող տիկնոջ հետ ապօրէն կապակցութեան մը ձեռնամուխ լինելու պակասութիւնն ունեցած է։ Աչքի զարնելու չափ յայտնի է այս։

— Անունը գիտէ՞ք։

— Այո՛, և միչև իսկ այս պաշտօնակիցս կը ճանչէր զայն։ Պ. Լէօրէօ կը կոչուի, կտաւի վաճառական, Բանթէոնի հրապարակը բնակեալ։

Թոլպիաք բան մը չըսաւ։ Կը թուէր թէ կը խոկար այս նոր ծանօթութեան վրայ։

— Կարևոր նշանակ մ'է որ բան մը գողցուած չէ վրայէն, յարեց ապահովապետն։ Իւր թանկագին նիւթերը վրան են։

Այս կէտը կրնաք աւելի կատարելապէս ստուգել աւելցուց՝ առնչով թղթապանակն, որ կիսով դուրս ելած էր սպանելոյն գրպանէն։

Աւասիկ, ըսածիս հաստատութի՛ւն. երկու գրամատոմս հազարական ֆըրանքնոց, մէկ հինգ հարիւրնոց և չորս



ալ հարիւրնոց... ստակին ձեռք դըպած չէ։

Տեսնենք ուրիշ ի՞նչ կայ, քանի որ կը նայինք... վճարեալ հաշուեցուցակներ... Շարլ Լէօրէօ անուամբ այցեստոմներ...։ Ա՛, նամակ մ'ուղղեալ առ Պ. Լէօրէօ... գիրը կնոջ մ'է...։

— Տեսնեմ, ըսաւ մէկէն Թոլպիաք երկնցնելով ձեռքն։

— Ի միասին պիտի կարդանք։ բայց պէտք է որ միւս թուղթերուն հետ կենայ։

Նայինք... թերևս ասոր մէջ է առեղծուածին լուծումն...։ Երկու տող է միայն։ «Այս իրիկուն, իմ տունս, ժամը ճիշդ տասնին։ Վանդակադուռը բաց պիտի լինի։»

Այս նամակ մեծ բան մը չսովրեցներ մեզ։ Բայց տարակոյս չկայ որ ըսպանեալ կնոջ գրածն է, վասն զի անգլիերէն Մէրէ ստորագրուած է։

— Գիտէ՞ք ուրեմն որ այդ կնոջ անունը Մէրէ է։

— Այո՛, և երբոր հասկցնեմ ձեզ

թէ ի՛նչպէս գիտեմ, պիտի պարտաւորիմ բնականաբար ըսել ձեզ ինչ որ կ՚ուզէի պահել՝ անակնկալ բան մ՚ընելու համար ձեզ. այսինքն թէ ես տեսայ ոճրագործը։

— Տեսա՞ք, ո՞ւր, ե՞րբ։

— Հոս, այս գիշեր։ Թակարդ մը լարած էի, և ներքնասենեկին մէջ պահուրտած։ Կէս գիշերին մարդ մ՚եկաւ, մեղմով դահլիճը մտաւ, և այս խօսքն արտասանեց. Մարի՛, հո՞ս է.՝... նախ ֆրանսերէն և ապա անգլիերէն։

— Եւ յետոյ, երևցա՞ւ, երեսը տեսա՞ք։

— Ոչ ճանչելու չափ։ Փեղոյրը մինչեւ աչերուն վրայ իջուցած էր, և բերանը փողպատով ծածկած։ Թուեցաւ ինձ սակայն թէ մօրուք էր և հաստ յօնքեր ունէր։

— Եւ չկրցի՞ք ձերբակալել տալ։

— Ա՛, խոստովանիմ եղելութիւնն. անմտաբար խորհեցայ ներքնասենեկին ժամացոյցին արկղին մէջ պահուրտիլ։ Փունդտացի։ Վազեց վրաս, բանալին



դարձուց, և զիս հոն փակելէ յետոյ փախաւ։

Եւ ամենէն ծանրն այս է, որ մարդիկս փողոցին մէջ պահնորդութիւն կ՚ընէին, և թողուցին որ անցաւ գնաց՝ ոստիկանութեան գործակալի տոմս մը ցուցնելով իրենց։

— Ոստիկանութեան գործակալի տո՛մս։ Այս անգամ ահա նշան մը, և ադով չյաջողելու համար յոյժ ապիկար պէտք է լինիմ։

Հնար եղածին չափ շուտով ինձ ղրկեցէք այն երկու թիւերն որք այդ մարդուն հետ խօսեցան։

— Ադկէց աւելի կ՚ընեմ. զանոնք ձեր հրամանին ներքև կը դնեմ մինչեւ ամիս մը։ 29 և 33 թիւերն են։

Բայց աւելի հեռին երթալ՝ առաջ՝ հարցում մը։ Դուք չէ՞ք երկբայիր թէ երկու սպանութիւններն ալ միեւնոյն մարդն ըրած է։

— Ոչ, չեմ երկբայիր։

— Սակայն միեւնոյն եղանակաւ չէ գործած երկու սպանութիւններն։

Մարդը գլխէն հարուածուելով բբռ-
նամահ եղած է, կինը դաշոյնով զար-
նուած։

— Ի՞նչ փոյթ։ Կ՚ուզէ՞ք գիտնալ թէ
ես ի՞նչպէս կը հասկնամ երկու տեսա-
բանները։ Կինը դարանի մէջ ձգած է
վաճառականն։ Ըստ իս, կինը դաւա-
կից էր առաջին ոճրին մէջ։

Այդ միամիտ մարդուն հետ ընթրած
միջոցին, տարփածուն, որ խորշ մը
պահուրտած էր, մեկէն վրան յարձակեր
և դանկին դաւաղանի բուռն հարուած
մ՚իջեցուցելով սպաններ է։

Յետոյ դիակը պահարանին մէջ քը-
շեր են, և իրենք դահլիճն երթալով
ի խորհուրդ նստեր են իրենց ընելիքին
վրայ։

Հոն, տարփածուն, որ կանխաւ ո-
րոշած էր կինն ալ սպաննել, դանակի
հարուած մը տուեր է անոր սրտին և
արկղին մէջ թխեր է։

Համրն, որ կանխաւ պատրաստ-
ուած էր, որոշեալ ժամուն եկեր և սընտ-
ուկը շալկեր տարեր է։



— Ուրեմն, եթէ քաղաքապահ
գինուորք զայն չբռնէին, իր տիրոջ
հետ հոս պիտի վերադառնար միւս
դիակն ալ տանելու, այնպէս չէ՞։

— Անշուշտ։

— Գոնէ շատ հաւանական է։ Բայց
ի՞նչպէս կը մեկնէք ոճրագործին հե-
տեւեալ գիշերն հոս մնալն և «Մարի՛,
հո՞ս էք» ըսելն, երբոր՝ ըստ ձեր կար-
ծեաց՝ ինքն սպաննած էր զայն։

Այս առարկութիւն քիչ մը շփոթեց
զՊ. Թոլպիաք, բայց շուտով ինքզինք
ուղղեց և ըսաւ պաղութեամբ.

— Սենեկապանուհի մը պէտք էր
լինէր։

— Այո՛, անգլիուհի մը, դրացի կին
մ՚ըսաւ ինձ։

— Ուրեմն այդ սենեկապանուհին
էր Մարին, և համոխոհ պէտք էր լի-
նէր սպանչին հետ, վասն զի աներե-
ւոյթ եղած է, այնպէս չէ՞։

— Ոճրին իրիկունն։

— Ուրեմն մեղսակցութիւնն յայտ-
նի է։

— Իմ ալ կարծիքս այդ է։ Եւ սակայն վաճառականին թղթապանակէն ելած նամակը սենեկապանուհին գրած չէ։

— Ինչո՞ւ չէ։ Թերևս տիկինը պատճառներ ունէր անձամբ չգրելու։

— Արդարեւ այդ ալ տեսնուած է։ Բայց, որովհետեւ սպասուհւոյն վրայ կը խօսինք, անոր սենեակն ելնենք, զոր միայն աչքէ չեմ անցուցած։

— Ելնենք, ըսաւ Թոլպիաք լակոնաբար։

Այս վերջին այցելութիւն նոր բան մը չյայտնեց։

Հոն ալ կատարեալ բարեկարգութիւն կը տիրէր ինչպէս միւս սենեկաց մէջ, ի բաց առեալ պահարանն ու ճաշարանը։

Հոն ալ դարակներն ու պահարանները դատարկ էին։

— Սպասուհին ալ, իւր տիկնոջ պէս, պատրաստած էր իւր տեղափոխումն, ըսաւ ապահովապետն։ Եթէ դաւթին մէջ կեցած արկղերուն մէջ անոր վերաբերեալ հագուստներ չկան, այս ալ աւելի ապացոյց մ'է թէ իւր հագուստներուն արկղը տարած է, հետևաբար ողջ է, և յոյժ հաւանաբար համախոհ ոճրագործին։



Այժմ, ուրիշ ընելիք չունինք այս տան մէջ, բայց միայն բժշկական և դատաւորական գործողութիւններ, որոց ձեր ներկայ գտնուիլն անօգուտ կ'երևի ինձ, վասն զի ատենագրութեանց օրինակը պիտի ղրկեմ ձեզ։

Նմանապէս տանտէրը գտնելու և տունն որո՛ւ վարձած լինիլն իմանալու համար ընելիք խուզարկութեանցս արդիւնքը պիտի հաղորդեմ ձեզ։

Մնացեալը ձեզ կը վերաբերի, սիրելի՛դ իմ Թոլպիաք, և այս վայրկենէս սկսեալ ազատ էք ձեր գիտցածին պէս գործելու։

— Շնորհակալ եմ, և այժմէն կ'իմացնեմ ձեզ թէ միտք չունիմ այս տունն անգամ մ'ալ գալու՝ մինչև որ գտնեմ ոճրագործը։ Պէտք չէ որ դրբացիք տեսնեն զիս։

—Շատ իմաստութեամբ խորհած է՛ք։ Կ՚ուզէի սակայն ցուցնել ձեզ ձիւ-նին մէջ քայլերու տպաւորութիւնները։ Այս գիշեր եկող և Մարի կոչող մարդուն ոտից տիպերն յոյժ դիւրաւ կը զանազանին միմանցէն։ Եթէ՝ զանոնք բաղդատելով՝ հասկնանք թէ համրին հետ ընկերացող մարդուն քայլերէն բնաւ տարբերութիւն չունին, ապացոյց մը կ՚ունենանք թէ երկուքն ալ մի և նոյն մարդուն են։

— Աւելի լաւ է, կարծեմ, որ այդ բաղդատութիւն առանց ինձ ընէք։ Ես չեմ ուզեր որ զիս տեսնեն։ Միւս կողմէ, կրնաք կաղապարել տալ այդ հետքերն, և ապա ի միասին կը քննենք։

— Իրաւունք ունիք, և պէտք է որ առանց ժամանակ կորսնցնելու ձեր յատակագիծը շինէք, որովհետև ամիս մը միայն կը խնդրէք յաջողելու համար։

— Ամսէ մ՚առաջ կը յաջողիմ։

— Աւելորդ է ըսել թէ մեր բոլոր պաշտօնեայք ձեր տրամադրութեան ներքև են, և թէ իմ սենեկիս մէջ



պիտի ընդունիմ ձեզ ամեն անգամ որ ինձ հաղորդելիք կամ ինձմէ խնդրելիք բան մ՚ունենաք։

Օրինակի համար, երբոր համրը տեսնելու պէտք ունենաք...

— Ես չեմ ուզեր տեսնել զայն։ Եթէ տեսնեմ, իմ բոլոր յատակագիծս ի դերև կ՚ելնէ, վասն զի այդ համրը գործածելու համար պէտք է որ երեսս չտեսնէ և զիս չճանչէ։

— Դուք բացարձակ ազատութիւն ունիք. արդէն որոշուած է այս, ըստաւ ապահովութեան պէտք սեղմելով Թոլպիաքի ձեռքն, որ հրաժեշտ առնելով՝ մեկնեցաւ, մուշտակին օձիքը մեծ խնամօք վեր դարձնելով անցաւ բակէն, և քանի մը խօսք Բիկաշի ըսելէ յետոյ կառքը մտաւ և հեռացաւ։

---

## Ե.

Ամեն բան կը փոխուի այս աշխարհի մէջ, և նորաձեւութիւնն իւր օրինաց կ՚ենթարկէ ամեն ինչ։

Ժամանակաւ ոտիկանութիւնը կարգով և վարչաբար կը գործէր անյեղի կանոնաց համաձայն։

Ծպտումներն իսկ նախատեսեալ էին, և աղնուական մարդու կերպարանք մտնող լրտեսի մը տիպը դասական հնութեան կարգ անցած է։

Լաւ յարդարուած կեղծամը, լաւ փակած ծնօտամօրուքները, ճերմակ վզկապն, ոսկի կոճակներով կապոյտ զգեստն և օղակին վրայ պատուանշանը՝ ծպտման վերջին սահմանն էր։

Այժմ այնպէս չէ. արդի ոտիկանական լրտեսները չեն նմանիր հին ժամանակի լրտեսներուն, ինչպէս այժմեան վաշխառուներն՝ որք ձիեր, կառքեր, և Իտալական թատրոնին մէջ օթեակ ունին՝ չեն նմանիր շաբաթեայ պայմանաժամաւ փոխատուներուն, որք հին բարի ժամանակաց մէջ կարկատուն տափատ կը հագնէին և գծուծ անակներու մէջ կը բնակէին։

Հասկցուեցաւ որ լրտեսի մը յաջողութեան առաջին պայմանն է իւր



բուն անձնաւորութեան դէմքը չունենալ. երկրորդ և մանաւանդ՝ իւր ներկայելիք անձին ո՛չ միայն կերպարանքն, այլ և ձեւերն առնուլ։

Պէտք է բացարձակապէս մարդուն մարմնին մէջ մտնել, ինչպէս կ'ըսեն թատերաց մէջ, ուր նոյնպէս գիտեն ծպտիլ։

Եւ՝ աչք պատրելու համար՝ լրտես մը դերասանի չափ դիւրութիւն չունի, վասն զի կը պակսին իրեն թատերաբեմի կանդեղներուն շարքը, դերձանները, շարժուն դռնակներն և մանաւանդ հասարակութիւն մը՝ որ պատրանքով միայն գոհ լինիլ կ'ուզէ։

Ոստիկանութեան լրտեսը չկրնար ի հեռուստ գործել։ Հարկադրեալ է գերկ գրկի գալ իւր խաբել ուզած մարդոց հետ, որոց տանէն ինը կը կասկածին։

Դիւրաւ կը հասկցուի որ այս պայմանաց մէջ՝ ճերմակը, կարմիրը, սուտ մազերը, սուտ մօրուքները, սուտ պաճուճանքներն և կեղծ պատուանշանները մեծ արժէք մը չունին։

Պէտք է՝ փոխանակ սին երեւոյթներու՝ լուրջ երաշխաւորութիւններ ընծայել, ճշմարիտ բնակատեղի մը, կարգաւորեալ տուն մը, գո՞նէ ըստ երեւութին կանոնաւոր կեանք մը, և հընարաւոր անուն մը։

Սէն-Պէրնարները, Սէն-Ռոպէրները, Սէն-Ֆիրմէններն և վաղեմի ոստիկանութեան օրացուցին ուրիշ սուրբերն այժմ ա՛յնչափ հինցած են, որ այսպիսի անուններ հագնելու տխմարութիւնն ընող լրտես մը շուտով կասկածելի կը լինի։

Վարք-Սրբոցէն առնուած այս ազնուականութիւնք չափազանց թափանցիկ են, և ուշադրութիւն չհրաւիրելով գործելու համար՝ հոլիւրապատիկ լաւագոյն է համեստ քաղաքացիներու անուն առնուլ, Գ. Մարդէս կամ Գ. Լէկրան։

Այսպէս քրած էր առաջիններէն մին՝ հայր Լէքոք։ Կրնար ճշմարիտ շարժառիթն համարուիլ այն դրութեան՝ որ է լրտեսութիւն ընել, առանց իւր անունն ու սովորոյթները փոխելու. վասն



զի քսան տարի շարունակ ոստիկանութեան ամենէն մեծ գործերը կատարած էր առանց իւր ամենէն մօտաւոր գրացեաց իսկ կասկած տալու, որք հաստութառու մը միայն կը կարծէին զայն։

Այն ժամանակ միայն Գ. Լէքոք որ ժանթիլեի եղած էր, երբոր գ՞ործէ քաշուած էր բոլորովին։

Գ. Թոլպիաք, աւելորդ է ըսել, նոր դպրոցէն էր. և եթէ ինքզինք Թէնշպրէ կը կոչէր, իւր հռչակաւոր նախորդին միջավայրին մէջ գործելու համար չէր։

Աշխարհի մէջ լաւ դիրք ունեցող ոճրագործներ լրտեսելու մասնագիտութիւնը կը հարկադրէր զինք յաճախել կենցաղասէրները, խաղացողներն, արշաւական մրցմանց մէջ գրաւ բռնողներն և կասկածելի կիներն։

Ուստի պարտաւորուած էր այնպիսի անուն մը հագնելու, որ յարգ ունենար աւելի կամ նուազ ոսկեզօծ երիտասարդութեան մէջ, միանգամայն յա-

տուկ բնակարան և ճոխ ու փայլուն կեանք մ'ունենալու։

Պ. տը Թէնշպրէ, որ միայն ոստիկանութեան մարդոց համար Թոլպիաք էր, Կոտոյ-տը-Մորուա փողոցին մէջ առաջին յարկ մը կը բնակէր, և քառասուն հազար ֆրանք հասոյթ ունեցող խելօք մարդու մը կեանք կը վարէր, որ իւր եկամուտը կանոնաւորապէս կ'ուտէ, բայց դրամագլխին չդպչիր բնաւ։

Երկու հեծելաձի ունէր, սպասաւոր մը, զոր Լոնտրայէն բերուած էր, և միանստարան կառքով մը կը շատանար։

Նախաճաշն իւր տան մէջ և իրիկուան ճաշը նորաձև ճաշարանաց մէջ կ'ընէր, Պուլոյնի անտառը կ'երթար կանոնաւորապէս, ամեն առաջին ներկայացմանց ներկայ կը գտնուէր, բուվանդակ Փարիզի ծանօթ էր, գրեթէ ամեն ընկերութեանց մէջ մուտ ունէր, և երբոր հեշտասիրաց մէջ մտնէր, որ յաճախ կը պատահէր իրեն, կնահաճութեան սպայակոյտին հետ միայն կը մրցէր։



Մտերիմ բարեկամներ չունէր. իւր զուարճութեանց ընկերներն իւր տունը չէր ընդուներ երբէք, և յաճախ բացակայ կը գտնուէր տունէն՝ առանց ուր երթալն իմացնելու։

Բայց խաղի պարտքերը մեծ ճշդութեամբ կը վճարէր. բարի խորհուրդ տուող և մինչեւ իսկ բարեկամութիւն ընող էր. մենամարտի առջեւ չէր ընկրկեր. կանանց հետ պատուաւորապէս կը վարուէր. կռուասէր, անձնապարծ, շատախօս չէր, և կրնար ոք վստահիլ անոր խորհրդապահութեան վրայ։

Այս պատճառներով յոյժ աղնուաբարոյ մարդ մը համարուած էր, և ոչ ոք անոր ծագումն իմանալ ուզած էր։

Տանը դռնապանը մեծապէս կը յարգէր զայն, և չէր զարմանար տեսնելով որ մերթ ընդ մերթ աղքատիկ կերպարանքով մարդիկ կ'ելնէին առաջին յարկի հարուստ և պատկառելի վարձակալին քով։

Պ. տը Թէնշպրէ կը սիրէր բարերա-

ըել. և իւր ողորմածութեան համբաւը մուրացկանաց այցելութիւններ կը հրաւիրէր իւր տունն։

Երբոր Բիէտուշ զայն կոչելու դնացեր էր, բարեմիտ դռնապանը կարծելով որ գլխարկաւոր և սուկանաղգեստ ոստիկանն իւր ծննդարեր կնոջ և առանց հացի մնացած զաւակաց համար օգնութիւն խնդրելու եկող աղքատ մ'էր, քսքանչացեր էր իւր փարթամ վարձակալին քաջասրտութեան վրայ, որ առաւօտեան ժամ ութն (կէս օրէն չորս ժամ առաջ) տունէն դուրս կ'ելնէր թշուառ ընտանիքի մ'այցելութեան համար։

Երեք օր անցած էր յորմէ հետէ ապահովութեան պետն իւր իշխանութեան մէկ մասը Կոտոյ փղոցի լրտեսին յանձնած էր։

Մերունի Էրքոքի նախան ձորդը չէր ննջեր գոնէ մի վրայ։ Կը գործէր, գործել կուտար, և ոստիկանութեան պաշտօնատունն յաճախ երթեւեկելէ զդուշանալու համար՝ ամեն օր, իբր թէ դիպ-



ուածով, Մատէնի առջեւ կամ Շանղէյիզէի զբօսավայրին վրայ, և կամ վերան գոց անցքի մը մէջ՝ երբոր օդն անձրեւոտ էր, համեստօրէն բայց մաքուր հագուած մարդու մը կը հանդիպէր, որ իւր գլանիկէն կրակ խնդրելու պատրուակաւ քանի մը խօսք կը փոխանակէր իրեն հետ։

Այդ ճեմողն, որ փողոցի մէջ գլանիկ կը վառէր, մերթ հոս, մերթ հոն, բայց միշտ ժամը ճիշդ երկուքին (կէս օրէն երկու ժամ յետոյ), Բիէտուշ էր, որոյ փութաջանութիւնը վար չէր մնար ճշդութենէն, վասն զի երդում քրած էր անպատճառ գտնելու զոճրագործն, որ այնպէս լաւ ծիծաղեր էր իւր վրայ ոստիկանութեան գործակալի սուտ տոմս մը ցոյց տալով իրեն։

Արդ, երրորդ օրը, հանապազօրեայ ժամադրութենէն քսան վայրկեան առաջ, Պ. տը Թէնշպրէ, դուրս ելնելու համար արդէն հագուած, իւր սենեկին մէջ թուղթեր կը խառնէր։

Ծնապան կնոջ մը հետ խօսակցած

էր, զոր յատկապէս Անգլիայէն բերել տուած էր իւր տունը կառավարելու համար, որ իւր նոյնպէս անգլիացի, բայց բաւական ստահակ սպասաւորին ձեռքը մնացած էր բոլորովին։

Այս անգլիուհի տնապանը դեռ հմտացած չլինելով իւր պաշտօնին, Պ. Թոլպիաք պարտաւորուեր էր մանրամասն հրամաններ տալ անոր, և Բիէտուշի հետ ընելիք տեսակցութենէն չը վրիպելու համար, իւր գրասեղանին վրայ կեցած թուղթերու խուրձ մը կը խուզարկէր շտապով։

Այն թուղթերն սպանեալ կնոջ գործին վերաբերեալ չէին թուեր. վասն զի անոնց մէջ ամենէն աւելի աչքի զարնողը տոհմաբանական ճիւղագրութեան ծառ մ'էր՝ մեծ թերթի մը վրայ ծրագրեալ։

Պ. տը Թէնշպրէ ուշադրութեամբ կը քննէր զայն երբև բուն իւր ազգատոհմին ճիւղագրութիւնը, կը բաղդատէր պաշտօնական կնիքներով նկարէն մագաղաթներու հետ, և ծանօթութիւններ կ'առնուր փոքրիկ յուշատետրի մը վրայ, զոր գրպանէն հանած էր։

— Ամեն բան կարգին է, մրմռաց երբոր աւարտեց այդ դիւանապանի աշխատութիւնը, ժառանգորդութեան կարգն յատկապէս հաստատուած է։

Ճաք Օ'Միլիվան, 1811 ին վախճանեալ Արևելեան Հնդկաստանի Բունահ քաղաքին մէջ (գաւառ Պոմպայի), չորս քոյր ունէր, զորս տասնևհինգ տարիէ ի վեր տեսած չէր մեռած ժամանակ։

Ամուսնացած չէր երբէք, հետևաբար անորդի մեռաւ։ Կտակ ըրած չէր. ուստի, թողած հարստութիւնը Տուպլինի պանքան դրուելով, այսօր՝ բաղադրեալ շահերովը հանդերձ չորս հարիւր հազար անգլիական լիրայի կը հասնի։

Չորս քոյրերէն, որոց երկուքը Ֆրանսայի և երկուքն Անգլիոյ մէջ ամուսնացած էին, այս տարւոյ յունվար 1 ին չորս ժառանգորդ միայն մնացած էին այլ և այլ աստիճանաւ, երբեք կին և մէկ այր։

Այս ժառանգորդներէն ոչ մին, նմանապէս ասոնց նախորդներէն ոչ մին, ձեռնարկ մ'ըրած էր երբէք այս հարստութիւնը ձեռք անցուցնելու համար, այն գերազանց պատճառաւ որ չէին գիտեր անոր գոյութիւնն, որովհետև անոնց մեծ հօրեղբայրն, Օ'Սիւլիվան հաղարապետ, իւր հարստութիւնն հեռաւոր երկիրներու մէջ շահած և երկար ժամանակէ ի վեր ամէն յարաբերութիւն դադրեցուցած էր իւր ընտանեաց հետ։

Կողմնական գծով ամենէն մերձաւոր ժառանգն ի բաց կը հանէ միւս ամէն ճիւղերը։

Մեռնողն, առանց գիտնալու, իւր իրաւունքն իրմէ յետոյ եկողին կը թողու, և այսպէս յաջորդաբար մինչև ամենէն հեռաւորն։

Աւասիկ գեղեցիկ գործ մը... գործ մը, որոյ նմանն անցած չէ երբէք հայր Լաքոքի ձեռքը...։

Տեսնենք այժմ ֆրանսական ճիւղին վրայ հաւաքուած ծանօթութիւններն...



այժմ միմիայն ասոր պիտի զբաղիմ։

Թիւ մէկ. Թէրէզ Լաքոնթ, կրտսեր դուստր Պ. Լաքոնթի, սեղանաւոր ի Փարիզ, որ թոռն էր, մօրը կողմէ, Օ'Սիւլիվան հաղարապետին անդրանիկ քրոջ՝ Ճորճինա Օ'Սիւլիվանի։

Թիւ երկու. Բօլին Պէրնիէ, կին Բիէր Քամպրըմէրի և դուստր Քաթէրին Պէրնիէի, որոյ մայրն էր Էլիզապէթ կրտսեր դուստր վախճանեալ Օ'Սիւլիվանի։

Թէրէզ Լաքոնթ ողջ է, իւր մօր տունը կը բնակի ի Պուլոյն-Սիւր-Սէն, և երբոր չափահաս լինի, գեղեցիկ հարստութիւն մը ձեռք պիտի անցուցնէ։

Բօլին Պէրնիէի վրայ տեղեկութիւնք այնչափ բացայայտ չեն. ողջ լինիլն հաւատի չէ։ Եթէ մեռած է, աղջիկ զաւակ մը թողած է։ Այրը գործաւոր է Օ'լէանի երկաթուղւոյն վրայ։

Ժամանակ ունիմ այցելութիւն տալու այդ երկու ժառանգորդաց, այսօր կէս օրէն յետոյ, Բիէտուշի հետ խօսակցելէ վերջ, ըսաւ Պ տը Թէնշ-

պրէ՝ իւր գրասեղանին մէկ ծածուկ դարակին մէջ դնելով տոհմաբանական ծառն և յարակից վկայականներն։

Այն աւուր հիմնագիրն այսպէս որոշելէ յետոյ, հրամայեց կառավարին որ երթայ Կապրիէլ ծառուղւոյն անկիւնն սպասէ միանստարան կառքովը՝ զոր ամնականով վարձած էր, և արդարեւ յոյժ գեղեցիկ երեւոյթ մ'ունէր։

Յետոյ քանի մը պատուէրներ տալով իւր նոր տնապանուհւոյն, հետի դուրս ելաւ, և փոխանակ Պուլվարէն Քոն.քորտի հրապարակն երթալու, Սէջ փողոցը մտաւ, որպէս զի Մատլէնի եկեղեցւոյն ետեւէն անցնի։

Չէր մոռցած գլանիկ մը վառել, և Բիէտուշ, որ ժամադրեալ տեղն ա՛նոր կ'սպասէր, ըստ սովորութեան մոտենալով կրակ խնդրեց։

Օրն ու տեղը նպաստաւոր էին խոսակցութեան. վասն զի դառնաշունչ հով մը կար որ անցորդները կը հալածէր, և Թրոնչէ փողոցին ծայրի հարթավայրն ամայի էր։



Ուստի Պ. Թոլպիաք որ թէնչպրէ կրնար, առանց իւր բազմաթիւ բարեկամներէն նշմարուելու երկիւղի, սովորականէն քիչ մ'աւելի երկարել իւր խոսակցութիւնը 29 թուոյն հետ։

Բիէտուշ գեղեցկացած էր։ Իւր երկայն և կուրծքն իրարու վրայ կոճկուած զգեստով, լայնեզր փեղոյրով և ոսկեխնձոր գաւազանով՝ կատարեալ վայելմի զինուորական մը դարձած էր. և որովհետեւ արդեամբ զինուորութիւն ըրած էր, ուստի ձև, շարժում, սթափութիւն անթերի էին։

— Ի՞նչ կայ նոր, հարցուց Թոլպիաք համառօտիւ։

— Ոչինչ։ Արկղերուն քննութիւնը կատարուեցաւ, և ճերմակեղէնէ ու շրջազգեստներէ զատ ուրիշ բան չը գտնուեցաւ անոնց մէջ։ Օրինակի համար, գեղեցիկ ճերմակեղէններ, լայն երիզներ, մետաքսներ, թաւիշներ և ն։

Կ'երեւի որ հարուստ էր կինն, և ես կը կարծեմ որ հարստութիւնը կապտելու համար սպաննած են։

— Թուղթ չգտնուեցա՞ւ հագուստներուն մէջ, տանը մէջ։

— Մի՛ վախնաք։ Հարուածն ընողը ստոյգ մարդ է։ Ամենն ալ այրե է։ Վառարանին մէջ մոխիրէ զատ բան չկար։

Սակայն մեր պետը վառարանին մէջէն նամակապատեանի կտոր մը գտաւ, որոյ վրայ հասցէին մէկ մասը դեռ կը կարդացուի. «Տիկին Մարի Ֆասիթ...» գիտէք որ կինն այս անուամբ ճանչուած էր թաղին մէջ... Թղթատարութեան դրոշմը վրան է... Նամակը Փարիզէն եկած է Թէաթր-Ֆրանսէի հրապարակին գրասենեակէն։

— Անշուշտ պահեցին զայն։

— Այո՛, պետը պիտի ցուցնէ ձեզ։

— Տանտիրոջ անունը գիտե՞ն։

— Դեռ ոչ. կալուածական տուրքը տարի մ'ետ մնացած է։ Հաւաքիչը կը կարծէ թէ Լոնտրայի մէջ սուտ բնակավայր մը ցոյց տրուած է, և մեր պետն ինձ յանձնեց ըսել ձեզ թէ Անգլիայէն ստուգելու համար ձեր վրայ դրած է յոյսն։



— Արդէն գրած եմ։

— Ապա՞ պրեց ինձ նաեւ իմացնել ձեզ թէ կիրակիէն երկուշաբթի գիշեր տունն եկող մարդուն քայլերուն տիպն տուչի օրուաններուն հետ նոյն չէ։

— Անկարեւոր մանրամասնութիւն մ'է այդ. մարդը թերեւս փոխած էր կօշիկը։

Դիակնարանին մէջ ծանօթ երա՞ւ։

— Ոչ։ Ամբողջաւորապէս չկերցին կարեւոր տեղեկութիւն մը տալ։ Կը հաստատեն թէ տիկինն յոյժ քիչ դուրս կ'ելնէր, և գրեթէ մարդ չէր ընդուներ։ Սակայն երկու երեք անգամ միջին տարիքով պարոն մը տեսեր են, որ օտարականի դէմք ունի եղեր, և վերջին օրերս ալ գեղադէմ բայց ամբողջ մօրուք ունեցող երիտասարդ մը։

— Այդ վերջինն է ոճրագործն, ըսաւ Թոլպիաք հաստատական ձայնիւ։

— Ես ալ այդպէս կը կարծեմ, վասն զի տրուած նկարագիրը բաւական կը նմանի այն չարաճճիին՝ որ խօսեցաւ ինձ հետ վանդակադրան առջեւ և խարեց զիս։

— Ահա այդ մարդը պէտք է գըտնել։ Եթէ կարենաս ձեռք անցունել, ես իմ գրպանէս հազար ֆրանքնոց պանքտոմս մը կուտամ քեզ։ Ամեն կողմ վազէ, և աչքդ չորս բաց։ Դիպուածը կրնայ հանդիպցնել քեզ անոր։

— Անհոգ եղիք. հազար ֆրանքին համար չէ, թէ և ստանալը մեծ հաճոյք կը պատճառէ ինձ... և խնայութեան գանձարանը կը դնեմ ըՀեբրոս համար... այլ առանց որ և է բան մը ստանալու ալ կը բռնեմ թշուառականը, վասն զի քիչ մնաց որ պաշտօնս կորսընցնել պիտի տար ինձ։

— Տեղեկութիւն ստացա՞ր Լէօրէօի վրայ, ինչպէս որ ապսպրած էի քեզ։

— Կտաւի վաճառականի՞ն։ Այո՛, մանրամասն, և իմացայ որ մարդ չգիտէ եղեր թէ ծանօթ կին մ՚ունէր Արպալէթի փողոցին մէջ։

— Ճշմարիտ է։ Առած տեղեկութիւններդ համաձայն են իմ առածներուս...։

— Աւելի հետաքրքրականն այս է



որ տանը քով բնակող Օվէրնացիները կը յայտնեն թէ այդ վաճառականին հոն երթալը տեսած չեն երբէք։

Դիակը ցոյց տրուեցաւ անոնց, և չճանչեցին։

— Թերևս այդ մարդ գիշերը միայն կ՚երթար հոն, ըսաւ Պ. Թոլպիաք անհամբեր կերպիւ։

Եթէ ուրիշ ըսելիք մը չունիս ինձ այսօր, երթամ, վասն զի ստիպողական գործ ունիմ։

Փնտռէ՛ երիտասարդն և մնացեալը մի՛ մտածեր։ Մնացեալն իմ գործս է։

— Հասկըցայ, պարոն Թոլպիաք։ Ես մեկնիմ, որպէս զի մէկը չտեսնէ մեզ։

Միայն թէ, ի՞նչ ըսեմ մեր պետին՝ երբոր հարցնէ ինձ թէ գործն ի՞նչ վիճակի մէջ է։

— Կ՚ըսես իրեն թէ հետք մը գտած եմ... աւելի երկու քան թէ մէկ... և թէ պիտի երթամ տեսնեմ շաբթուս վերջն։

— Այդչափը կը բաւէ։ Մնաք բարեաւ, Պ. Թոլպիաք։

Բիէտուշ արդէն կէս շրջան մ'ըրած էր, եւ դարձաւ։

— Մոռցայ իմացնել ձեզ թէ մեր պետը մտադիր է խօսիլ սովրեցնել համրին։

— Ի՞նչ, խօսի՞լ։

— Այո՛, խուլ-համրերու վարժապետ մը կայ որ ամեն օր կուգայ երկու ժամ կը կենայ բանտարկելոյն խցիկին մէջ։

— Ի՞նչ գաղափար, տարիներ պէտք են որպէս զի այդ համրը խօսակցելու կարող վիճակի մէջ դրուի։

— Կ'երեւի որ այնչափ երկար չպիտի տեւէ։ Համրն ուշիմ է՝ առանց երեւոյթն ունենալու, և զարմանալի յառաջդիմութիւն կ'ընէ։

— Աւելի լաւ, ըսաւ պաղութեամբ Պ. տը Թէնշպրէ։ Բայց ես չեմ վստահիր անոր վրայ, և կը յուսամ որ անոր կրթութեան աւարտելէն առաջ ես կը կատարեմ իմ գործս։

Եւ կրնակը դարձուցելով 29 թուոյն, արագապէս երթալ սկսաւ դէպի Պուասի-տ'Անկլա փողոցն, ուր իւր կառքը կ'սպասէր Սէրքլ-Էնբէրիալի պարտիզին անկիւնը։

Մէջը ցատկեց՝ ըսելով կառավարին.

— Պուլոյն, գետափ Քաթը-Մէրթանպրի, թիւ 95։

Կառաջիգ երիվարն, որ յոյժ կորովի էր, նետի պէս երթալ սկսաւ, և Շանզ-Էյիզէի ծառուղիէն սրարշաւ վերելնելով՝ Ցաղթական Կամարն անցաւ և Պուլոյնի ծառաստանը մտաւ։

Պ. տը Թէնշպրէ ծախքի չէր նայեր, և առատապէս վճարելուն պատճառաւ՝ իւր գործն սքանչելապէս կը կատարուէր միշտ։

Երեք քառորդ չէր քշած, կառքը կեցաւ ամարանոցի մ'առջև, որ չէր նմաներ Արպալէթ փողոցի տան։

Գեղեցիկ և մեծ տուն մ'էր բակի մ'և պարտիզի մը միջև կառուցեալ, Սէնի աջ եզրն երկնցած գետափին վերայ, հանդէպ Սէն-Քլուի զուարթ գիւղակին։

Այս նոր բնակարան մեծահարուստ

քաղաքացւոյ մը սեփականութիւն լինելու երեւոյթ ունէր։

Շինող ճարտարապետն, իւր անձնական հաճոյքին համար Լուի ԺԴ-ի ոճին նմանած էր, բայց մեր ժամանակի պիտոյից կատարելապէս յարմար օթեւան մը չինած էր՝ գետնայարկէն քիչ բարձր ընդունելութեան յարկով և ստորերկրեայ խոհարանով. իսկ ախոռները, կառքերն, նայլն ներքնագաւթի մը մէջ տարուած էին։

Այդ արուարձանական ապարանքի ետին ընդարձակ ծառաստան մը կար մեծամեծ ծառերով, մարգագետիններով, ծաղիկներով, և որպէս զի բան մը պակաս չլինի, երկուք ալ վաղուկ ջրով։

— Այս մարդիկ առ նուազն հարիւր հազար ֆրանքի հասոյթ ունին, ըսաւ ինքնիրեն Պ. տը Թէնչպրէ. երկու չոր գլուխ կանանց համար պէտք եղածէն շատ աւելի է։ Կը մնայ գիտնալ թէ Օ'Սիւլիվանի ժառանգութեան խայծէն պիտի բռնուի՞ն։

Բա՛, այդ խայծէն միշտ կը բռնուին մարդիկ, թէեւ հարուստ լինին։



Միայն պէտք կը լինի ուժով բռնել գործն։

Եւ առանց երկար խորհելու՝ քաշեց զանգակը։

Կապոյտ զգեստով դռնապան մ'ելաւ բացաւ և այցելուն տարաւ առաջին յարկի դրան սանդուղին առջև, ուր սենեկապան ծառայ մ'անոր այցեւորը խնդրեց։

— Տիկին Լբքոնթէն ճանչնալու պատիւը չունիմ, պատասխանեց լրտեսը, զոր անշուշտ կարելի չէր այնպէս կարծել։ Հաճեցէք ըսել իրեն թէ ամենակարեւոր գործի մը վրայ խօսելու եկած եմ. . . այնպիսի գործի մը՝ որ մանաւորապէս օրիորդ Լբքոնթի համար կարեւորութիւն ունի։

Սպասաւորը վայելչազարդ փոքրիկ դահլիճ մը մտցուց զայն և գնաց զեկուցանել իւր տիկնոջ։

Վայրկեան մը յետոյ դուռ մը բացուեցաւ և երիտասարդ մը ներս մտաւ, որոյ դէմքն իսկոյն Պ. Թալպիաքի ուշադրութիւնը գրաւեց, և որ բաւական պաղ կերպիւ մ'ըսաւ.

— Դո՞ւք էք, պարո՛ն, որ տիկին Լբքոնթը տեսնել կ'ուզէք։

— Այո՛, պարոն։

— Տիկինն ինձ յանձնեց ընդունիլ ձեզ։

— Որո՞ւ հետ խօսելու պատիւն ունիմ։

— Իմ անունս չկրնար բան մը յայտնել ձեզ. միւս կողմէ, դուք ալ յարմար չդատեցիք ձեր անունն ըսել ինձ... Հաճեցէք ուրեմն շատանալ գիտնալով թէ ամիս մը չանցած՝ փեսայ պիտի լինիմ տիկին Լբքոնթի։

Պ. որ Թէնշպրէ գլխովը խոնարհութիւն ըրաւ առանց պատասխանելու այս նախաբանին, որ, պէտք է ըսել, հրապուրիչ չէր։

— Ա՛հ, փեսայ մը կայ եղեր, ըսաւ Պ. Թոլպիաք ինքնիրեն, պէտք է աճապարել, ապա թէ ոչ ..

— Հաճեցէք յայտնել ձեր այցելութեան նպատակը, պարո՛ն, յարեց երիտասարդը։

Կը կրկնեմ ձեզ թէ տիկին Լբքոն-



թի ներկայիչն եմ ես, որովհետեւ ա-նոր աղջիկը պիտի առնում։

Ուստի կրնամ անմիջապէս բանակցիլ այն կարեւոր գործին վրայ՝ որ ձեզ հոս բերած է... մանաւանդ որ այդ գործն, ըսիք... ի մեծ զարմանս ինձ, մասնաւորապէս օրիորդ Լբքոնթի կը վերաբերի։

Մինչդեռ ապագայ փեսայն այսպէս ցամաք կերպիւ կը խօսէր, լրտեսն ա-նոր երեսը կը նայէր այսպիսի ուշադրութեամբ մը, որ անքաղաքավարութեան կը հասնէր, և այսպիսի անպատշաճութիւն մը գործելու համար Պ. Թոլպիաք ծանր պատճառներ պարտէր ունենալ, վասն զի սովորաբար իբրեւ բարեկիրթ մարդ կը վարուէր։

— Պարո՛ն, ըսաւ երիտասարդը բարկութեամբ, չեմ կարծեր որ իմ վրայ ծիծաղելու եկած լինիք հոս... և սակայն ձեր վարմունքն այնպէս կը կասծեցնէ... արդ՝ կը յայտարարեմ ձեզ թէ ոչ ումեք կը ներեմ անպատշաճութեն վարուիլ, և...

— Ներեցէք, պարո՛ն, ընդմիջեց Պ. տը Թէնշպրէ յոյժ քաղաքավար կերպիւ։ Արդարեւ արժանացայ ձեր ինձ ուղղած քիչ մը խիստ խօսքերուն, և կ՚աղաչեմ որ հաճիք ընդունիլ իմ չքմեղանքս։

Եթէ պատշաճից ներածէն աւելի ուշադրութեամբ ձեր երեսը նայելու համարձակեցայ, պատճառն այս է որ թուեցաւ ինձ թէ ձեզ տեղ մը տեսած լինելու պատիւն ունեցած եմ, եւ իմ յիշողութիւնս քրքրելու զբաղելով կը ժառնայի պատասխանել ձեզ։

Ուստի կրնաք յիշողութիւնս ճշդել՝ եթէ պատիւ ընէք յայտնել թէ ասկէց քանի մը տարի առաջ Անգլիա բնակա՞ծ էք։

— Կրթութեանս մէկ մասն հոն ըրած եմ՝, պարո՛ն. և որովհետև այդչափ հետաքրքիր էք իմ անձիս վերաբերեալ բաներն իմանալու, անուն է Լուի Լբքոք տը Ժանթիլեի։

Եւ պատրաստ եմ ձեր հրամանին, ե՛րբ և ինչպէս հաճոյ թուի ձեզ, աւելի-



ցուց երիտասարդն ա՛նպիսի արտասանութեամբ մը, որ բնաւ երկբայութիւն չէր թողուր նշանակութեանը վրայ։

Այցելուն չպատասխանեց այս խօսքին, ինչպէս որ կրնար սպասուիլ, և որ առաւել անհեթեթն է, տիկին Լբքոնթը տեսնելու համար ալ չպնդեց։

Թէպէտ և Պ տը Թէնշպրէ ինքզինք կառավարելու մասին շատ վարպետ էր, բայց և այնպէս չէր կրցած ծածկել ո՛չ զարմանքն, ո՛չ ալ յուսախաբութիւնն երբոր Լբքոքի անունը լսած էր։

Բայց շուտով նուաճեց ինքզինք, և պաղ կերպիւ պատասխանեց.

— Կը տեսնեմ, պարո՛ն, որ կը սխալէի։ Նմանութիւն մ՚անշուշտ մոլորեցուցեր էր զիս, վասն զի ձեր անունը... ձեր անունները կ՚ուզեմ ըսել, բոլորովին անծանօթ են ինձ։

Կ՚ուզէի տեսնել զտիկին Լբքոնթը բայց նա չուզեր ընդունիլ զիս։ Թերևս յետոյ զղջայ. բայց, ինչ որ ալ լինի, մեկնելէ զատ ուրիշ գործ չմնար ինձ։

Եւ թեթեւապէս ողջունելով զերի-

տասարդն որ չպատասխանեց անոր ողջունին, դուրս ելաւ։

Պ. Լը-քոք չկանգ ետ դարձուներ զայն, և Թոլպիաք գաւթին դրան մէջէն իւր կառքը ցատկեց՝ գոչելով կառավարին.

— Օրլէանի երկաթուղւոյն կայարա՛նը։

Լաւ կը տեսնուէր որ կառքը քաշող երիվարն իրենք չէր, վասն զի չէր խնայեր անոր։

Հազիւ կառքը ճանրայ ելաւ Պուլոյնի գետափն Օրիթալի պողոտայէն բաժնող բազմաթիւ հաղարամեթրներն անցնելու համար, Պ. Թոլպիաք մենախօսութիւն մ՚սկսաւ, որուն իմաստը դուշակել բաւական դժուարին էր, թէ և մաքուր ֆրանսերէն կը խօսէր։

— Ի՛նչ պիծակներու բոյնի մը մէջ պիտի մտնէի, կ՚ըսէր ակռաներուն մէջէն։

Այդ տղան ծերունի Լը-քոքի որդին միայն կրնայ լինիլ, և պիտի ամուսնանայ ժառանգներէն միոյն... կամ մանաւանդ միակ ժառանգին հետ...



վասն զի միւսն ասոր մեռնելէն յետոյ միայն կրնայ ժառանգել։

Ստուգիւ, կարծես թէ սատանան կը մտնէ այս գործի մէջ։

Միւս կողմէ, անհերկբայ եմ որ այս Լը-քոքին երեսը տեսած եմ տեղ մը... նմանապէս անհերկբայ եմ որ հօրը հետ տեսած չեմ երբէք... թէ և կենացս մէջ երեք անգամ խօսած չեմ անոր հետ...։

Կը թուի ինձ նաև թէ տեսած ժամանակս աւելի երիտասարդ էր։

Ո՞ւր տեսայ արդեօք։ Գուցէ Լոնդրայի մէջ... ինքն ըսաւ ինձ թէ իւր կրթութեան մէկ մասն Անգլիոյ մէջ ըրած է։

Պէտք է որ ստուգեմ զայս... վասն զի վերջապէս, եթէ հոն հանդիպած լինէր ինձ...։ Բայց ոչ... ինքն ալ զիս պիտի ճանչէր, և իւր նայուածքէն կը հասկցուէր թէ իմ դէմքս անծանօթ էր իրեն... ճշմարիտ է որ այն ժամանակ մօրուք էի ես...։

Նա ալ մօրուք է այժմ, և գուցէ

Անգլիա եղած ժամանակ դեռ բուսած չէր։

Վերջապէս քանի մ՚օրէն կը տեղեկանամ։

Հոս Պ. Թոլպիաքի դէմքն զդալապէս տխրեցաւ, և սկսեց մրմռալ։

— Այո՛, պիտի իմանամ, բայց ժառանգորդին հետ ընելիք գործս չյաջողեցաւ։ Էրքոքի ընտանեաց հետ խնամութիւն կնքելու վրայ եղող կանանց հետ բանակցելու միջո՛ցն։ Եթէ իրաւախոհութիւն մ՚առաջարկեմ, իբրեց փեսացուին հետ կը խորհրդակցին, նա ալ հօրը կը հարցնէ, և այն հին չարաճճին ալ շուտով կը հասկնայ իմ խաղս։

Ուրիշ միջոց մը պէտք է գործածել... այն ալ վտանգաւոր է, մանաւանդ այս միջոցիս։ Բայց հոգ չէ. իրիկուն մը կուգամ տանը շրջականերն աչքէ կ՚անցունեմ. ո՛րչափ շուտով ընեմ՝ ա՛յնչափ լաւ կը լինի, վասն զի կորսնցնելու ժամանակ չունիմ։

Առ այժմ պէտք է զգուշութեան



միջոցներ ձեռք առնում փեսին դէմ... ուղեպանի մ՚աղջկան դէմ, որ աւելի դիւրին կը թուի ինձ...։ Միայն թէ, ասոր հետ կարգադրութիւն մ՚ընել կարելի չէ, որովհետև վեց տարու է։

Կ՚երթամ նախ տեսնել թէ ի՞նչ է հայրն, և ապա կ՚որոշեմ գործելու եղանակս։

Այս երկար մենախօսութենէն յետոյ, Պ. Թոլպիաք կառքին մէկ անկիւնին կրթնեցաւ և այնուհետև զգուշացաւ բարձրաձայն խորհրդածելէ։

Արդարև, եթէ ապահովութեան պետը կարենար տեսնել և մանաւանդ լսել զայն՝ յորմէ հետէ բաժնուած էր Բիէտուշէն Մատլէնի հրապարակին վրայ, դաւական պիտի զարմանար։

Վասն զի Թոլպիաք որ կը պարծէր ամէն մ՚առաջ գտնել Արպալէթ փողոցի կրկին ոճիրներուն հեղինակը, բոլորովին ուրիշ գործով մ՚զբաղեալ էր։

Սակայն ապահովութեան պետն իւր օժանդակին վրայ բացարձակ վստահութիւն մ՚ունէր, և թերևս կը կարծէր

թէ այս ճարտարամիտ լրտեսին ձեռ-
նարկներն ու մտահոգութիւններն ա-
նուղղակէս կապակցութիւն ունէին ի-
րեն յանձնուած հետախուզութեան
գործին հետ։ Ինչ և իցէ, Պ. տը Թէնշ-
պրէ իւր հանդարտութիւնը կատարե-
լապէս գտած էր՝ երբոր իւր կառքը
կեցաւ այն շէնքին առջև, ուր զետեղ-
ուած են Օրլէանի երկաթուղւոյն ընկ-
երութեան գործոն պաշտօնեայք։

Կը ճանչէր երկաթուղւոյն վարչու-
թիւնն և քաջ գիտէր թէ որո՛ւ պէտք
էր դիմել իւր փնտռած մարդուն վրայ
տեղեկութիւն ստանալու համար, ո-
րովհետև քիչ ժամանակ առաջ առիթ
ունեցած էր գրպիլ կարևոր գողու-
թեան գործով մը, որ երկաթուղւոյն
կայարանին գրասենեակներէն միոյն մէջ
կատարուած էր։

Ուստի գնաց ուղղակի գտաւ պետն,
որոյ հրամանին ներքև էր Բիէր Ֆամպ-
ըրմէր, և պատմեց անոր թէ եկած էր
քննութիւն մ'ընել ինչ ինչ իրաց վրայ՝
որոց մասնակցած էր այդ պաշտօնեայն,



և ոստիկանութիւնը կ'ուզէր պարզել։

Ներում խնդրեց աւելի բացայայտ
չխօսելուն համար, վասն զի գործը վեր-
ջին ծայր գաղտնապահութեամբ պիտի
կատարուէր, և աղաչեց որ թոյլ տայ
իրեն անձամբ հարցաքննել զԲիէր
Ֆամպրրմէր։

— Ադկէ դիւրին բան չկայ, ըսաւ
պետն, և ես յօժարութեամբ ծածուկ
կը պահեմ ձեր այցելութիւնը, վասն զի
կրնայ ցնասել այդ բարի մարդուն, որ
մեր լաւագոյն գործակալներէն մին է։

Չեմ գիտեր վրան եղած ամբաս-
տանութիւնը, բայց գրեթէ անհաւատալի
եմ որ անիրաւ է։ Ցասն տարիէ ի վեր
ամենափոքր յանդիմանութիւն մ'ուղ-
ղած չեմ իրեն, և իւր ուղղութիւնն
ամեն կասկածներէ բարձր է։

— Կը հաւատամ ձեր խօսքին և կը
ջանամ որ վտանգի մէջ չիյնայ, ըսաւ
Պ. տը Թէնշպրէ։ Պարզ ձևակերպու-
թիւն մ'է ըրածս... քանի մը տեղե-
կութիւններ քաղել, որոց պէտք ու-
նինք, և զորս նա միայն կրնայ տալ մեզ։

Ամուսնացեալ է, կարծեմ։

— Ո՛չ, քանի տարիէ ի վեր մեռած է կինը, զոր շատ կը սիրէր և որ բաւական լաւ ընտանիքէ մ'էր։ Անկից աղջիկ մ'ունի զոր կը պաշտէ և ինք կը մեծցնէ։ Իւր միակ պակասութիւնն այս է, բայց պակասութիւն է, վասն զի վայրկեան մը չբաժնուիր անկէ։ Պաշտօն կատարած ժամանակ իսկ իւր հետ կը պտըտցնէ, և մեք ալ աչք կը դոցենք այս կանոնազանցութեան վրայ։

Այսօր երկաթուղւոյ ճանրուն վրայ է, և տարակոյս չունիմ որ իւր փոքրիկ աղջիկն ալ հետն է։

— Կրնա՞մ երթալ հետը խօսիլ հիմա առանց արգելք լինելու անոր աշխատութեան։

— Կատարելապէս։ Մէկը կը դնեմ ձեզ հետ որ մինչև աքծանը (կառախմբին շաւիղը փոխելու տեղը) տանի ձեզ, ուր կ'աշխատի Քամպրըմէր։

Կ'աղաչեմ ձեզ միայն որ աղջիկը չը վախցնէք. մեր երես ելած տղան է նա։

— Մի՛ վախնաք այդ մասին, ըսաւ



փութով Պ. տը Թէնշպրէ։ Ցոյժ փոքր է, այնպէս չէ՞։

— Նոր վեց տարու եղաւ։

— Օ՜, ուրեմն խօսք կուտամ ձեզ թէ և ոչ իսկ պիտի նշմարէ թէ կը հարցաքննեմ զիւր հայր։

Կրնա՞մ հարցնել ձեզ թէ ի՞նչ է այդ Քամպրըմէրի կատարած պաշտօնն։

— Աքծանող է, դժուարին արհեստ մը, և վարձքն ալ յոյժ քիչ, կը խոստովանիմ։

Քսանչորս ժամուն տասներկուքն անձրևի, հովի, ձիւնի կամ արևու ներքև կ'անցունէ եղանակներուն համեմատ, խուղ մը միայն ապաստան ունենալով, ուստից ամեն վայրկեան դուրս ելնելու հարկադրուած է աքծանը դարձուցանելու համար։

Բրած աշխատութիւնը մեծ ուժի կարօտ չէ, բայց դարձեալ դժուարին է. ուշմութիւն և անդուլ ուշադրութիւն հարկ է։

Այս պատճառաւ մեր աքծանողները մեր լաւագոյն գործակալաց մէջէն կ'ընտրուին։

Շատ պարզ է այս։ Կառախմբի մը տրուած սիալ ուղղութիւն մը հարիւրներով ուղևոր ի մահ կ'ուղարկէ, և այդ ուղղութիւն բացարձակապէս աքծանողէն կախում ունի։

— Կը հասկնամ, պարո՛ն, թէ շատ կը յարգէք զՖամպրըմէր, և ստուգիւ մեծ պիտի լինի ցաւս՝ եթէ խառնուած գտնուի անհաճոյ գործի մը մէջ. բայց կը յուսամ որ բան մը չլինիր իրեն, վասն զի ամեն կարելի եղած ջանք պիտի ընեմ որ պատուաւորապէս դուրս ելնէ գործին մէջէն։

Նմանապէս կը յուսամ որ աղջկանն ալ դժբաղդութիւն մը չպատահիր։

Սակայն մեծ անխոհեմութիւն է երկաթուղւոյն վրայ տանիլ զայն։

— Օ՛, իւր հասակի աղջկամէ շատ վեր խելք ունի։ Ասկէ զատ, կառախմբոց ընթացքը գոնէ ամենէն հին պաշտօնեայներուն չափ գիտէ։

Պետը՝ խօսակցելով հանդերձ՝ զանգակը քաշած էր։

Մարդ մը ներս մտաւ՝ ձեռքը բռնած այն կլոր ու տափակ գլխարկը, զոր երկաթուղեայ պաշտօնեայները շրջանաձև ԸՆԸՆԷ կը կոչեն ընտաներաբար։



Պետը ցած ձայնիւ քանի մը խօսք ըսաւ անոր, և յետոյ ողջունեց՝ հասկցնելու համար թէ ունկնդրութիւնը վերջացած էր։

Պ. տր Թէնշպրէ ալ ողջունելով դուրս ելաւ իրեն տրուած աւաջնորդին ետեւէն։

Շատ չանցած՝ գոնէը նշմարեց որ այն մարդը գիտէր իւր ոստիկանութեան վերաբերիլն։

Ոչ ոք համակրութիւն ունի ծածուկ ոստիկանաց վրայ, որչափ և լաւ հագուած լինին, մանաւանդ որ Ֆամպրըմէր յոյժ սիրելի էր իւր ընկերաց։

Ոստի շատ բնական էր որ պաշտօնեայն դժկամակութեամբ առաջնորդէր ծածուկ ոստիկանի մը, որ անշուշտ իրենց ընկերին հաճելի լինելու չէր գար։

Պէտք չէ իսկ երդնուլ թէ պաշտօնեայն շատ պիտի ցաւէր եթէ երկա-

թագծերուն վրայ պտտող շոգեգործիներէն մին ջախջախէր զՊ. տը Թէնշպրէ։

Եւ սակայն առաջնորդեց նմա այն երկաթագիծ ուղիներու բաւղին մէջ, որք մեծ կայարանի մը շուրջը քսան տեղ իրար կը կտրեն, և խղճմտաբար ազդարարեց որ երթեւեկող կամ շարժող շոգեգործիներէն զգուշանայ։

Բայց չոր «այո կամ ոչ» ով պատասխանեց այն հարցումներուն՝ զոր Պ. Թոլպիաք կ'ուղղէր իրեն, և հանգրուանէն երկու հարիւր մէթրոյ անդին կանգ առաւ։

— Կը տեսնէ՞ք, ըսաւ անոր՝ առանց պարոն տիտղոսի, սա խղճին առաջին սկաւառակին մօտ։

Ահա հոն կը կենայ Քամպրըմէր։ Շատ չանցած պիտի դուրս ելնէ, վասն զի 16 ժիւ կառախումբը տասն վայրկեանէն հոս պիտի հասնի։

Ուստի փութացէք, եթէ կ'ուզէք հետը խօսիլ։

Եւ երբոր ոստիկանական լրտեսն ա-



ւելի տեղեկութիւն խնդրելու համար բերանը կը բանար, պաշտօնեայն կէս ճրճան մ'ընելով դէպի կայարանը դառնալ սկսաւ։

— Զարաճճի՛, մրմռաց Պ. Թէնշպրէ, քեզ դէմ տեղեկագիր մը չինեմ և տեսնես։

Բայց շուտով մեղմացաւ խորհելով որ աւելի լաւ էր առանց վկայի տեսակցիլ աքծանողին հետ։

Մի՛ս կողմէ, քսան քայլ առաջ փոքրիկ աղջիկ մը տեսեր էր, որ դէպի խղճիկը կ'երթար ձեռքը զամբիւղիկ մը բռնած որոյ մէջէն շիշի մը վիզը դուրս ելած էր։

— Ա՛յս է, ըսաւ ինքնիրեն։ Ուտելիք կը տանի իւր հօր։

Եւ բսել թէ այս լակոտը տասն միլիոն պիտի ժառանգէ՝ եթէ Պուլոյն-Սիւր-Սէն բնակող օրիորդն ասկէ առաջ մեռնի առանց զաւակ մը տալու Պ. Լէքոքի որդւոյն։

Ա՛յ, բայց նախ օրիորդ Լէքոնթ քաջառողջ է, և յետոյ Քամպրըմէր

հաւանաբար չգիտէ թէ այդպիսի ժառանգութիւն մը կայ, որոյ վրայ իւր զաւակը կրնայ օր մ'իրաւունք ունենալ։

Նախ պէտք է հասկնամ թէ տեղեկութիւն ունի՞ այս ամենէն։

Ուզեց աղջկան ետեւէն հասնիլ, բայց նա արագ կը քալէր և իրմէ առաջ խղիկը հասաւ։

Աքծանողը դուրս ելաւ, աղջիկը գրկեց, և իւր ուսերուն վրայ նստուցընելու վրայ էր, պարոն մը տեսաւ որ դէպի իրեն կուգար։

Զարմացմամբ վար դրաւ աղջիկը խղիկին սեմին վրայ, և օտարականին առջեւ գնաց, որոյ հոն ներկայութիւնը չէր կրնար մեկնել։

— Ողջո՛յն, պարո՛ն Քամպրբմէր, ըսաւ անոր ֆոնէը սիրալիր քաղցրութեամբ. այս փոքրիկ սիրուն աղջիկը ձե՞ր է։

— Այո՛, պարոն, պատասխանեց աքծանողը վարանմամբ. բայց կ'ուզեմ նախ գիտնալ թէ որո՞ւ հետ խօսելու պատիւն ունիմ...։



— Գրաւ կը դնեմ թէ դժբաղդ մօրը կենդանի պատկերն է։

Քամպրբմէրի դէմքն իսկոյն տխրեցաւ, և խռովեալ ձայնիւ մ'ըսաւ.

— Կը ճանչէք ուրեմն կինս։ Զարմանալի բան, ես երբէք տեսած չեմ ձեզ։

— Ո՛չ, բարեկամ, չէի ճանչեր ձեր կինը, բայց ժամանակաւ անոր մայրը տեսնելու առիթ ունեցած եմ։

Տիկին Պէրնիէ կը կոչուէր, այնպէս չէ՞։

— Այո՛։ Զայդ ըսելու համա՞ր եկած էք հոս։

— Զայս և ուրիշ բաներ։

— Մարթա՛, գնա քիչ մը հեռուն խաղա, զաւա՛կս, ըսաւ Քամպրբմէր աղջկանն, որ զամբիւղը թողուց և վազելով հեռացաւ։

Ցետոյ դոչեց ետեւէն.

— Զգուշացիր աչ կողմի ճանբէն. գիտես որ ելնող կառախումբը պիտի անցնի հիմա։

Տղեկն ետին դարձաւ խնդալով,

համբոյր մը ղրկեց հօրն և ճանրուն ե-
ղերեայ զառիվայրին խոտերուն մէջ մա-
նիշակներ փնտռել սկսաւ։

— Այժմ, պարո՛ն, ըսաւ Քամպրը-
մէր, ըսէք ինձ ձեր հոս գալուն նը-
պատակը, բայց շուտով ըսէք, վասն զի
աքծանին քով պիտի երթամ։

— Ըսելիքս երկայն չէ, պատասխա-
նեց լրտեսը. տեղեկութիւն մը միայն
պիտի խնդրեմ ձեզմէ։ Կրնա՞ք ըսել
ինձ, և այս ալ ձեր և աղջկանդ շա-
հուն համար, թէ ձեր ղոքանչը, տի-
կին Պէրն/է, ամուսնանալէն առաջ ի՞նչ
կը կոչուէր։

— Ձեմ կարծեր որ լսած լինիմ եր-
բէք։ Իմ ամուսնացած ժամանակս մե-
ռած էր։

— Դոնէ գիտէ՞ք ո՛ւր տեղացի էր։

— Բիքարտիայէն էր, կարծեմ, բայց
ստուգապէս չեմ գիտեր։ Կինս Ապվիլ
ծնած էր։

Բայց ինչո՞ւ համար են այս ամեն
հարցումները։

— Վասն զի կը կարծէի թէ ձեր



աղջիկը կրնար երաւունք ունենալ ժա-
ռանգութեան մը վրայ... բայց այժմ
կը վախնամ թէ սխալած եմ։

— Ես աներկբայ եմ, ժառանգու-
թիւնները մեզ պէս մարդոց համար չեն։
Զոքանչս իւր աշխատութեամբ կ'ապ-
րէր, և սու մը չթողուց իւր աղջկան։
Ուստի, պարո՛ն...

Հեռիէն երկար սոյլ մը կարեց
խօսքն։

— Ահա 16 թիւ կառախումբը, գո-
չեց. պէտք է երթամ աքծանիս քով,
հազիւ ժամանակ ունիմ. ներեցէք։

Եւ հոն թողլով տեղեկախնդիրը,
Բիէր Քամպրըմէր վազեց իւր խղիկէն
քանի մը քայլ անդին կեցած լծակն ա-
ռաւ և կոխելով դարձուց սկաւառակն,
որ պիտի ծանուցանէր կառախումբը
վարող մեքենագործին թէ ճանբան
բաց էր։

Շոգեգործին դալը տեսնելու հա-
մար բռնած դիրքով՝ Քամպրըմէր կը-
նակը Պ. Թոլոյիաքի դարձուցած էր,
որ ոչ ևս հօրն հարցնելու բան մ'ունե-

նալով, դիմեց այն կողմն՝ ուր աղջիկը կը խաղար։

Կայարանը վերադառնալու ճանբան այն էր, ուստի դնացած միջոցին կը խորհէր.

— Այս մարդ անկեղծ է, տարակոյս չկայ. բնաւ չգիտէ թէ իւր կինն Օ'Սիւլիվան հաղարապետին քրոջ թոռն էր։

Այո՛, չգիտէ... բայց դիպուած մը կրնայ իրեն իմացնել վաղը... և այն ժամանակ... այն ժամանակ միւս ժառանգներն ի հաշիւ պիտի առնուն ոսկիքը... կամ մանաւանդ աղջիկը։

Նոյն միջոցին տղան ետին դարձաւ։ Մանիշակ չէր գտած, և կ'ուզէր մօտէն անցնող պարոնը տեսնել։

Սկսաւ անոր նայիլ իւր խոշոր կապոյտ աչերով, հրեշտակի աչերով։

Խարտեաշ մազերն ուսերուն վրայ ինկած էին երկայն գանգուրներով, այտերը վարդագոյն էին, բերանը կը ժպտէր։

Երկինքէն ինկած քերովբէի մը կը նմանէր։



Հայրը չէր տեսներ զայն։

16 թիւ կառախմբին վրայ կը հսկէր, որ սրարշաւ կը հասնէր։

Բայց Պ. տը Թէնշպրէ կը տեսնէր զայն, անշուշտ սքանչանալով անոր շքեղորհ.քին և սրտաշարժ գեղեցկութեան վրայ, վասն զի ընծայ մը տալ ուզեց անոր։

Ոսկեղից քսակն հանեց, որպէս զի մէջէն փոքրիկ ոսկի մը հանելով անոր տայ։

Տղան գլուխը թօթվեց և չշարժեցաւ տեղէն։

Պարգև չընդունելու վարժեցուցած էին զայն։

Պ. տը Թէնշպրէ ուսերը թօթվելով՝ քսակը ծոցը դրաւ, բայց այնպէս ձախող կերպիւ, որ երկոտասանեակի չափ լուիներ ցանուեցան ճանբուն վրայ, ճշդիւ այն երկու գիծերուն միջեւ, որոց վրայէն պիտի անցներ կառախումբը։

Հաւանաբար Պ. Թոլպիաք չնշմարեց այս դէպքը, վասն զի շարունակեց իւր ճանբան։

— Պարո՛ն, պարո՛ն, գոչեց աղջիկը որ ոսկիներուն անկումը տեսած էր։

Պարոնն ետին չդարձաւ։

Յանկարծ աղջիկը ճանրուն վրայ վազելով լուիները ժողվել սկսաւ որպէս զի տիրոջը տայ։

Զմրան ժամանակն արև մը կը լուսաւորէր այս տեսարանն, որ Ամպիկիւի հինգերորդ արարուածէ մ'աւելի եղերական էր։

Բայց այս եղերերգ հանդիսատես չունէր, վասն զի հոն գանուողներուն ամենն ալ դեր մը կը խաղային։

Թուլպիաք դէպի կայարանը կ'երթար մեծաքայլ, երկու ձեռքը կբրկնոցին գրպաններուն մէջ, և երևոյթ չունէր գիտնալու թէ իր քսակէն լուիներ թափած էին ճանբուն վրայ, ուստից շրջեցողներ մ'և տասն կառք պիտի անցնէին։

Աղջիկը մոռցած էր կառախմբին գալը։

Չէր տեսներ, վասն զի կրնակը դարձուցած էր, և երկու երկաթագիծերուն միջև վազվազելով խղճմտութեամբ կը ժողվէր ոսկիներն և շունչը կ'սպառէր բարձրաձայն կոչելով պարոնն որ չէր լսեր, կամ, Քամպրըմէրին ըսելիք մը չունենալով այլ ևս, չէր ուզեր ականջ կախել տղեկի մը կարկաչման։

Կանգուն իր մեքենային վրայ, ինչպէս նաւապետ մ'իր նաւարանին վրայ, մեքենավարը չէր կրցած տեսնել տղեկը։

Տեսեր էր որ ուղեցոյց սկաւառակը կը ծանուցանէր թէ ճանբան բաց էր։

Առաւել զգուշութեան համար նայեր էր թէ աքծանողն իր տե՞ղն էր, և տեսած էր որ կանոնական դիրքով կեցած էր, կէս ծռած, ձեռքը լծակին վրայ, գլուխը վեր անկած, և աչերն ի խոյզ։

Այսպէս կեցած, Բիէր Քամպրըմէր բաւական կը նմանէր Ռէմուլէօրի արձանին, որ Թիւլրիի պարտիզին մէջ կը տեսնուի։

Վաղեմի քանդակագործը, կ'ըսեն, գերի մը ներկայացուցած է, որ դա-

նակ մը սրած միջոցին՝ դաւադիրներ կը լրտեսէր։

Իւր ղեկին վրայ ծռած, ցամաքի նաւուղիղն ալ թաւալագիլ նաւուն ընթացքը կը դիտէր, զոր նաւահանգիստը մոցնելու պաշտօն ունէր։

Մեծահարուստ ընկերութեան մ'այս խոնարհ պաշտօնեայն, ճարտարագործութեան մեծ բանակին այս անշան մարտիկն հոն կեցած էր՝ իբրև թշնամին դիտող յառաջապահ։

Թշնամւոյն յարձակումն արգելող զօրավարը՝ շարժման պետն է։

Իսկ զօրականն՝ աքծանողն է։

Եւ այս անդուլ ճակատամարտին մէջ զոր Երկուքն ալ կը մղեն անակնկալին դէմ, ամենափոքր սխալ մը սարսափելի աղէտ կը բերէ։

Կայարաններ կան արուարձանաց դիծերով բեռնաւորեալ, ուր այս ծանր խնդիրն անդադար կը ներկայանայ։

Արևմտեան երկաթուղւոյն վրայ մեկ աւուր մէջ հինգ հարիւր տոն և ութ կառախմբոց շրջաբերութիւնը տեսնուած է, և ասոնց իւրաքանչիւրն իւր տեղն հասած է որոշեալ ժամուն՝ առանց որ և է ցնաս մը կրելու, իբր թէ բոլոր անցած ճանբուն վրայ յատուկ դիծ մը պահուած լինէր իրեն համար։

Եւ այդ դիծն ունէր, վասն զի իւր չուելուն, անցնելուն և հասնելուն ժամերն երաշխաւորեալ էին, ազատ ճանբայ թողուած էր իրեն։

Խաղաղ ռազմագէտ, շարժման պետն ամեն ինչ կանոնաւորած է կանխաւ։ Զուագիր մը գծած է, զոր ամեն կառախումբ իւր հետ կը տանի, և որ արուեստին լեզուով նշանագիր կ'անուանի։

Մեծ ռազմավարաց պէս՝ ուրիշ վախնալու բան մը չունի բաց ի այն զօրութենէն՝ որ ամեն նախատեսութենէ վեր է, այն է դիպուածը, չարաբաղդութիւնը, լիսեռնի մը մէջ ծածկուած յարդի շիւղը, կամ երկաթագծի մը վրայ ինկած քարն։

Եւ մեծ ռազմավարաց նման չկրնար բան մ'ընել եթէ իւր հրամաններն ուշ-

մութեամբ և ճշդիւ չկատարուին։

Կայարանապետի մ'անհոգութիւնը, մեքենավարի մ'անուշադրութիւնը բաւական է խաթարել ամենէն հանճարեղ կարգադրութիւններն և ամենէն ճարտար յատակագիծերն։

Աւելի ծանր է երբոր աքծանող մը սխալի։

Ամենքս ալ տեսած ենք այն մարդն՝ որոյ ձեռքին մէջ է ուղևորաց կեանքն։

Հասարակ գործաւորէ մ'աւելի լաւ հագուած չէ, ոչ ալ անկէ աւելի վարձատրուած, և իւր ահեղ պաշտօնը դիւցազնական պարզութեամբ կը կատարէ։

Անոնք, որ առաջին աստիճանի կառքի մ'անկեանը ծուլաբար կրթնած, շոգեգործին զօրութեամբ արշաւասոյր կ'անցնին այդ մարդուն առջևէն, չեն խորհիր բնաւ թէ իրենց փրկութիւնն անկէ կախում ունի, և մինչև իսկ չեն հասկնար անոր կատարած գործողութեան կարևորութիւնն։

Եթէ կ'ուզէք հասկնալ, Արևմտեան



կայարանին Բլատ տը լ'Էօրօբ հրապարակին կամուրջին վրայէն նայեցէք։

Անհուն կիթառի մը կը նմանի, որոյ թելերն են երկաթագիծերն, և բոյթերն են իւրաքանչիւր ճիւղակցութեանց նշանաձողերը։

Կառախումբք կ'երթեւեկեն ամեն կողմ։

Կարծես թէ ոստայնանկի գործիքին վրայ երժեւեկող կկոցներ են։

Այդ կառախմբոց իւրաքանչիւրը, թէ՛ չուէ և թէ՛ ժամանէ, կանխաւ որոշուած ուղեայ մը պիտի հետեւի, և յաճախ այն ուղիէն զատ ուրիշ աղատ ուղի չկայ։

Եթէ շոգիին կոյր ուժէն քաշուելով դէպ ուղիղ երթայ, ուրիշ կառախմբի մ'ընդհարելով կը ջախջախի, վասն զի մեքենավարը կարող չէ ընդհարման առաջն առնուլ։

Առ առաւելն՝ անոր թափը կը մեղմացնէ՝ կառախմբին ընթացքն յամրացընելով։

Կառավար մ'է որ կրնայ կեցնել իւր

ձին, բայց չկրնար ընթացքը փոխել։

Բարեբաղդաբար աքծանողն հոն է, գիտէ կառուցոյն երթալիք ուղին, և անվրէպ ձեռքով մ'այն ճանբուն մէջ կը մղէ՝ լծակ մը ճնշելով, որ երկու երկաթագիծերու շարժուն ճիւղերը կը մօտեցնէ կամ կը հեռացնէ։

Եթէ սխալի, վայրկենական, երկվայրկենական մոռացում ունենայ, կառախումբն և մէջը գտնուողներն անդարձաբար կորսուած են։

Բիւր Քամպրըմէր չէր սխալեր, չէր մոռնար երբէք։

Լռասէր մարդ մ'էր, ինք իւր վրայ ամփոփուած, մանաւանդ իւր կնոջ մեռնելէն ի վեր, և անմատոյց այն անպարկեշտ հրապոյրներէն, յորոց երբեմն կ'ընկճէին իւր ընկերները։

Գինետունն ալ հրապոյր չունէր անոր համար, որչափ ուրիշ տեսակ զբաղումներ։

Այս պատճառաւ երբէք մտաղբաղութիւն չունէր իւր պաշտօնը կատարած ժամանակ։



Իւր աղջիկը միայն կրնար մտաղբաղութիւն տալ իրեն, վասն զի անդադար անոր վրայ կը խորհէր. բայց աղջիկը քաջառողջ էր և իւր քովէն չէր զատուեր։

Այս ալ բարեբաղդութիւն մ'էր. վասն զի օր մը որ տղան հարբուխ ունենալով տունը կեցած էր, հայրը սրտատանջութենէն գրեթէ կը կորսնցնէր խելքն, և իբրեւ շնորհ կը խնդրէր որ ուրիշ մէկը դնեն իւր տեղ։

Եթէ խնդրած հրամանը չհասնէր, թերեւս ձգէր երթար իւր պաշտօնատեղիէն։

Դառք Աստուծոյ, այն օրն ուր Պ. Թոլպիաք զինքը տեսնելու եկաւ, Քամպրըմէր մտահոգութեան պատճառ մը չունէր, վասն զի աղջիկն յոյժ քաջառողջ և զուարթ էր։

Վարժոյին ելեր՝ իւր նախաճաշը կը բերէր իրեն. ինքն ալ ուրախ կը լինէր խորհելով որ ժամ վեցին իւր գործէն աղատելով՝ զայն իւր փոքրիկ բնակարանը պիտի տանէր։

Այս հանապազօրեայ վերադարձն յաղթական ընթացքի մը կը նմանէր։ Օրիթալի պողոտային վրայ, խանութպանք դուրս կ'ելնէին դանգրահեր մանկիկին վրայ սքանչանալու համար, և քամպրըմէը ալ մեծ աշխատութիւն կը կրէր թող չտալու համար որ քաքարներով ու շաքարներով խճողէին զայն։

Բայց այս միջոցիս անոր վրայ չէր խորհեր։

16 Թիւ կառախումբը կը մոտծէր, որ սրարշաւ կուգար, և աքծանէն հարիւր մէթրոյ միայն հեռի էր։

Սկաւառակն իւր տեղն էր, մեքենավարը տեսած էր զայն, և անոր վստահելով՝ համարձակ կուգար։

Բիէր, լծակն առնլու դիմելով, թողեր էր իւր աղջիկն և այն օտարականն՝ որ այնպէս անպատեհ ժամանակ եկեր տեղեկութիւններ կը հարցնէր իրեն։

Ցղուն համար վախնալու պատճառ մը չունէր, վասն զի վարժուած էր ըզգուշանալու, և կառախմբոց երթեւեկութեան ժամերուն քաջածանօթ էր։



Ասկէ զատ ինքն ալ արդէն իմացուցած էր թէ կառախումբ մը կը մօտենար, և լիովին վստահ էր անոր ուշմութեան ու ճարպիկութեան վրայ։ Բայց փոքր ինչ մտահոգութիւն ունէր այն մարդուն համար, զոր այնպէս իրստիւ ճանրած էր։

Անոր անձն առաջին տեսութեամբ անհաճոյ եղած էր իրեն, և ըրած հարցումներն ալ ո՛չ միայն զինքը զարմացուցած էին, այլ և վիրաւորած։

Բիէր չէր ախորժեր որ իւր կնոջ վրայ խօսին իրեն, զոր կաթոդին կը սիրէր, և ամեն անգամ որ Բոլին Պէրնիէի անունն արտասանուէր իւր առջեւ, յօնքը կը պռստէր իւր թռած ելլիանկուվթեան յիշատակը ձախողաբար զարթուցանելնուն համար։

Արդ, այցելուն, որ եկեր զինքը մինչև իւր խուղին մէջ թախանձեր էր, իւր դժբաղդ կնոջ աղդատոհմին վրայ հարցումներ ընելով, թէ՝ իւր սիրտը վիրաւորած և թէ՝ իւր դիւրազդածութեանը դպած էր։

Քամպրիմէր դիւրագրգիռ էր, վասն զի խրոխտ էր, և այս պարկեշտ ուարի աշխատաւորին խրոխտութիւնն առաւել օրինաւոր էր՝ քան դաս մը դատարկասուն և մոլի հարուստներու խրոխտութիւնն։

Չէր ախորժեր որ այն մարդն իւր գործերուն խառնուէր, և կը հարցնէր մտովին թէ ի՛նչ իրաւամբ կը համարձակէր հարցումներ լնել իրեն։

Միւս կողմէ, բնաւ չէր հաւատար անոր յիշած ժառանգութեան, և անշուշտ զայն կոչելու համար չէր որ ետին դարձաւ։

Ամենեւին փափաք չունէր տեղեկութիւններ խնդրելու այդ կեղակարծ ժառանգութեան վրայ։ բայց կ'ուզէր դիտնալ թէ մարդը կ'երթա՞ր թէ կառախմբին անցնելուն կ'սպասէր՝ վերոտին իւր հետ խօսելու համար։

Տեսաւ որ հեռացած էր, բայց միանգամայն տեսաւ իւր աղջիկն որ Թոլպիաքի ետեւէն կը վազէր՝ առանց շուգեկառքին ճանբէն դուրս ելնելու։



Տակաւին քսան երկվայրկեան և տղան պիտի ջախջախէր։

Քսան քայլ հեռի էր Քամպրիմէրէն, և շոգեկառքին ալ երեսուն մէթրոյ միայն մնացած էր աքծանին քով հասնելու։

Երկաթեայ ճիւաղը կը վազէր կուդար մոլեգին, ծուխ ժայթքելով, գետինը դղրդելով, և փոքրիկ աղջիկը չէր լսեր անոր գալը, վասն զի հիւսիսային բուռն հով մը կը փչէր դիմացի կողմէն։

Այն հասակին մէջ տղայք անխորհուրդ լինելով, խելք տղեկը մոռցած էր հօրը պատուէրն։

Ասկէ զատ, ոսկիները թափող օտարականին ետեւէն հասնելու միայն մտադիր էր։

Անոր ետեւէն վազած միջոցին՝ անդադար կը ծռէր ճանբուն վրայ ցրուած լուինները ժողվելու համար, և ետին չէր դառնար բնաւ։

Ազատում չունէր։

Եթէ նշմարէր ոսկ խարտիշագեղ

հրեշտակը, զոր իւր մեքենայն պիտի ջախջախէր, մեքենավարը ժամանակ չունէր սանձերը սեղմելու և շոգեդոր-ծին կեցնելու։

Մէկ մարդ մը կրնար տակաւին փրր-կել Մարթայի կեանքն, և այն մարդն էր Բիէր Քամպրըմէր։

Եթէ աքծանն այն կերպիւ շարժէր որ կառախումբը բաց ճանբուն վրայ գար, իւր աղջիկը կորսուած էր։

Բայց իւր ձեռքն էր կառախումբն ուրիշ երկաթագիծերու վրայ քշել, և յայնժամ կ'ազատէր Մարթա։

Միայն թէ, ոճիր պիտի գործէր, վասն զի կառախումբը՝ ճանբէն խոտո-րելով՝ արդելքներու պիտի հանդիպէր, և անոնց զարնուելով խորտակէր։

Իւր զաւակն ազատելու համար, Քամպրըմէր հարիւր հոգի անխուսա-փելի մահուան պիտի մատնէր։

Դիտէր զայս։ Եւ չէր կրար լռե-ցընել իւր խիղճն որ կը դոչէր իրեն. Եթէ ընես զայդ, ոճրագործ մը պիտի լինիս։



Բայց նմանապէս թողուլ որ ջախ-ջախէր տղեկն, սպանութիւն մ'էր, և ի՞նչ սպանութիւն։

Իւր սիրելի դստեր փոքրիկ մար-մինն արդէն Քամպրըմէր կը տեսնէր ջարդակոտոր եղած, արիւնուռչտ խար-շած մսի պէս. մազերը կը տնկուէին գլխուն վրայ և ձեռքը լծակին վրայ կը ծանրանար ակամայ։

Եթէ քիչ մ'աւելի կոխէր, կառա-խումբն երկաթագիծերը փոխելով կ'անցնէր՝ առանց իւր զաւակին դպչելու։

Հազիւ տասն երկվայրկեան կը մնար իւր զաւակին և ուղևորաց կեանքին մի-ջեւ ընտրութիւն ընելու։

Եւ իւր հայրական սիրոյն զոհելիք կառախմբին մէջ ո՛չ միայն անծանօթ-ներ կային, այլ և ընկերներ։

Ջեռուցիչն իւր բարեկամներէն մին էր, և անտարակոյս պիտի սպաննուէր, վասն զի արկած մը պատահած ժա-մանակ առաջին բախիւնը շոգեդործին կը կրէ։

Խեղճ Քամպրըմէրի գլխուն մէջ նոյն

միջոցին անցած անցքն ստուգիւ բանաստեղծի մը կոչածն էր. «Գանկի մը տակ փոթորիկ»։

Կը թուէր իրեն թէ խելքին պիտի գար։

Տժգոյն, դողահար, շրտնած, մատները գալարեալ կեցած լծակին երկաթէ ձողին վրայ, յորմէ միայն կախեալ էր Մարթայի կեանքը, կը նայէր ահաւոր մեքենային, որ յառաջ կուգար սպառնալից, և կը կարծէր թէ ամէնի գաղան մ'իւր որսին վրայ կը յարձակէր։

Ցանկարծ գաղափար մ'անցաւ փայլակի պէս իւր գառանցեալ ուղեղին մէջէն։

Ըսաւ ինքնիրեն.

— Ժամն երեքն է... 69 թիւ կառախումբը ժամ չորսին կը չուէ... և մինչեւ այն ժամանակ բան չկայ... ասոր մինչեւ կայարանը հազար մէթրոյէն աւելի է... պաշտօնեայք պիտի տեսնեն թէ աքծանը սխալած է, կենալու նշան պիտի տան... մեքենավարը գիտէ իւր արհեստը... կը ճանչեմ զայն... մեքենայ կառավարելու մասին նմանը չունի... ժամանակին կը կեցնէ...։

Չիս պիտի վռնտեն, բայց Մարթաս ալ չվախվախիր, և մէկու մը ձեռաս չէր լինիր։

Այս մտածութիւն երկվայրկենի մէջ եղաւ, և խեղճ Քամպրըմէր վերջապէս պիտի կոխէր լծակին վրայ, յանկարծ երկար սոյլ մը թրթռաց ականջին։

Այս սոյլ կայարանին կողմէն կուգար, և Քամպրըմէրի փորձառութիւնը չէր կրնար խաբուիլ։

Կառախումբ մը ճանրայ կ'ելնէր, և արդէն վար իջնող ճանրուն մէջ մտած էր։

Անպատճառ պիտի հանդիպէր վերելնող կառախմբին՝ եթէ աքծանողին յանցանքովն իւր ճանրէն խոտորէր, և դիւրաւ կրնայ երեւակայուիլ թէ ինչ սարսափելի բան է դէմ առ դէմ եկող երկու կառախմբերու ընդհարումն։

— Ա՛. մրմռաց Քամպրըմէր խեղ-

դուկ ձայնիւ մը, մոռցեր էի . . . այսօր յատուկ կառախումբ մը կ'ելնէ Էթամբ երթալու համար ժամ երկուքն յիսունեւհինգ անցած . . . որսորդութեան գնացող հարիւր երիտասարդները տանելով . . . :

Ա.յդ պարոնները զուարճանալու համար պէտք է որ աղջիկս մեռնի, գոչեց խօլ քրքիջով մը : Ո՛չ, ո՛չ . . . կարելի չէ այս . . . անոնց կեանքը չարժեր Մարթայիս կեանքը . . . կ'առնում անոնց կեանքը . . . մարդիկ պիտի դատապարտեն զիս . . . Աստուած ալ պիտի դատէ :

Ա.յս ա՛դամ ալ երկու ձեռքն երկաթէ ձողին վրայ դրաւ :

Ուրիշ երկվայրկեան մ'ալ անցած էր : Հազիւ չորս երկվայրկեան կը մնար իւր որոշումն ընելու :

Բայց արդէն որոշած էր ընելիքն :

Աչերը փակեց որպէս զի չտեսնէ զարհուրելի մահուան մը դատապարտած անձերուն անցնիլն, և շարժուն երկաթագիծերը տեղափոխելու համար լծակը կոխել սկսաւ :



Շոգեգործին տան մէթրոյ միայն հեռի էր աքծանէն :

Իջնող կառախումբն արագապէս կը մօտենար : Թաւալումը կը լսուէր : Ծերմակ ծուխի փունջը կ'երկնար :

Քիչ մ'աւելի ուժով ճնշում մ'անխուսելի պիտի ընէր քստմնելի աղէտ մը :

Նոյն միջոցին՝ յատուկ կառախումբը վարող մեքենավարն, աքծանողին աղդարարելու համար սկսաւ կարճ և ստէպ փչմամբ սուլել :

Թերեւս ղդացած էր վտանգն :

Ա.յդ սոյլերը լեզու մ'ունին . մերթ յամր և տխուր իբրև հեծութիւն, մերթ չոր և խրոխտ իբրեւ հրաման, վարչական լեզու մը, զոր պաշտօնեայք ըսքանչելապէս կը հասկնան :

Ջերմ կամ բորբոքեալ երևակայութեանց ալ կը խօսին, և Քամպրըմերի երեւակայութիւնն ալ տարապայման դրդռեալ էր :

Թուեցաւ իրեն թէ շոգեգործին սուլելով կ'ըսէր իրեն .

— Ի՞նչ ըրին քեզ այս պատանիներ

ը, զոր պիտի սպաննես։ Եւ այն մայրերն ու հայրերն, որք իրենց զաւակաց վրայ պիտի լան այս ի՛ սիկուն, չե՞ս դթար անոնց վրայ։

Եւ, մինչ Քամպրըմէր կը վարանէր տակաւին, սոյն երկու հրաւէր ևս արձակեց առաջիններէն աւելի սուր, և Քամպրըմէր կարծեց թէ կը դուչէր իրեն.

— Ոճրագործ, ոճրագործ։

Յանկամ ձեռքը թող տուաւ լծակը և բերանը մրմնջեց.

— Ո՛չ... ո՛չ... չեմ կրնար... Մարթա՛, ներէ ինձ։

Լմնցած էր։ Ելնող կառախումբն՝ ուղիղ ճանբուն վրայ մնալով՝ անցած էր իւր առջևէն։

Այն սպանդներուն արեան պէս, զոր հին հեթանոսներն աստուծոց ցասումն ողոքելու համար կը զոհէին, խեղճ փոքրիկ աղջկան արիւնն ալ՝ պարտականութեան նահատակ աքծանողին դառն դիւցաղնութեամբ խնայեալ կեանքերը պիտի գնէր։



Քամպրըմէր սիրտը՝ պնդելով նայեցաւ։

Կ'ուզէր անգամ մ'ալ տեսնել իւր աղջիկը՝ դեռ չջախջախուած։

Կ'ըսէր մտովին.

— Երբոր զաւակս լմննայ, ես ալ դիս յատուկ կառախմբին անիւներուն տակ կը նետեմ։

Աղջիկը շոգեկառքին ճանբուն վրայ էր։

Ոտքի վրայ կեցած, գլուխը ծռեր բան մը կը զննէր զոր գետնէն վերցուցած էր, և վտանգը կասկածելու երեւոյթ չունէր։

Սև ու անհեթեթ կոյտն արագապէս կը դիմէր փոքրիկ սիրուն աղջկան վրայ, որոյ խարտեաշ վարսերը կը ծածանէին հովէն։

Կարծես թէ աղաւնեակ մը փիղէն ոտնակոխ պիտի լինէր։

Քամպրըմէր, սրտին կսկիծէն խելայեղեալ, մէկ ոստմամբ ցատկեց անցաւ իջնող ուղին, վազեց տղուն քով, զոր ոչ ես կը յուսար կորզել մահուան

ճիրանէն, վասն զի մեքենայն գրեթէ վրան հասած էր։

Աստուած տուաւ որ Մարթա ետին դարձաւ։

Մէկէն տեսաւ հայրն որ թևերը կ'երկնցնէր իրեն, և կառախումբն որ գինքը պիտի փչրէր։ փոքրիկ ձեռներն իրար կցեց, ծունգի վրայ եկաւ և մահուան սպասեց աղօթելով։

Յայնժամ Քամպրըմէր երկնային ներշնչութիւն մ'ունեցաւ։

— Պառկէ՛, գոչեց որոտագին ձայնիւ։

Նոյն վայրկենին շոգեգործին ծածկեց աղջիկն իւր աչքէն։

Ողջ պիտի գտնէ՞ր։

Կը յուսար գրեթէ, վասն զի հաշուած էր որ Մարթա բաւական նիհար լինելով կրնայ ճանրուն վրայ պառկելով ազատել։

Եթէ ուղիղ պառկէր և անշարժ կենար գետնին փակած, կառախումբն առանց դպչելու կ'անցնէր վրայէն։

Երբոր հայրը վերստին տեսաւ զայն,



երեսի վրայ պառկած էր երկու երկաթագիծերու միջև, երկու թևերը տարածած, զամբիւղիկը քովն, և չէր շարժեր։

— Մեռած է, մրմռաց դժբաղդ աքծանողը։ սեպ մը, երկաթագիծերը կապող հեծան մը, կառքերն իրարու լծող շղթայ մը դպած է անոր։

Աստուա՛ծ իմ, վիրաւորուած չլինի։

Քովը վազեց, և մինչ կը ծռէր որ դրկէ վերցնէ, աղջիկը վեր առաւ գլուխը։

Կապոյտ աչերն և բոսորագոյն շուրթերը կը ժպտէին։ այտերը տժգունած լսկ չէին։

Վայրկենի մէջ ոտքի վրայ ելաւ և Քամպրըմէրի պարանոցը ցատկելով,

— Ա՜հ, հա՛յր իմ, գոչեց համբուրելով զայն, ո՜րչափ վախցուցիր զիս։

Քամպրըմէր չպատասխանեց։ Ուրախութենէն կը խեղդուէր։

— Ես գիտէի որ գետինը պառկիլ պէտք էր, յարեց զուարթագին։ Զեռուցիչ բարեկամդ յաճախ ըսած է

ինձ. անդամ մ'ինք այսպէս ընելով ա-
զատած էր... և ես անկէ շատ բա-
րակ եմ։ Մի՛ լար ուրեմն, հայրի՛կ,
քանի որ մէկ կողմն չցաւիր... այսին-
քըն այո՛... ականջս կը ցաւի... կա-
ռախմբին վրայէս անցած ժամանակ
ըրած շառաչիւնէն։

Եւ մինչ հայրը սրտին վրայ կը սեղ-
մէր զայն առանց բառ մ'արտասանե-
լու, Մարթա շարունակեց քիչ մը սի-
գալով.

— Բնաւ չչփոթեցայ, վասն զի,
նայէ՛, չաղտոտեցի այս գեղեցիկ դե-
ղին դրամներն՝ որք այն պարոնին վը-
րայէն թափեցան... ոչ ալ անոր այ-
ցետոմը՝ զոր նոյնպէս ճանբուն վրայէն
գտայ... իւր անունը գրուած է բա-
րակ գիրերով... և ես խոշոր գիրեր
միայն գիտեմ կարդալ տակաւին... և
սակայն արդէն կէսը հեգեցի... այս
դրամներն անոր պիտի տանիս տաս,
այնպէս չէ՞, հայրի՛կ։

— Այո՛, պիտի տանիմ, մրմռաց
Քամպրըմէր, և պէտք պիտի լինի որ
ըսէ ինձ...



Խօսքին կէսը շառաչիւնին մէջ կոր-
սուեցաւ։

Յատուկ կառախումբը կ'անցնէր,
տանելով ուրախ որսորդներն, որք բնաւ
չէին կասկածեր իրենց անցուցած սոս-
կալի վտանգը։

---

## Զ.

Վաղուն այն աւուր, ուր Պ. Թոլպի-
աք երկու ապարդիւն այցելութիւն ը-
րած էր մին ի Պուլոյն և միւսն Օռլէանի
երկաթուղին, մեծ բազմութիւն շար-
ուած էր դիակնարանին դրան առջեւ։

Մաղայ աղջիկ կինն, այս անունը
կուտային լրագիրք և հասարակութիւ-
նն սպանեալ տարաբաղդ կնոջ, պորմի
տիկինն, ինչպէս կ'ըսէին ոստիկանու-
թեան պաշտօնատան մէջ, առջի օրէն
ի վեր ի ցոյց դրուած էր դիակնարանի
սալաբարերուն միոյն վրայ։

Ապահովութեան պետը նախահո-
գութեամբ զմռսել տուած էր զայն՝
երբոր երեւան ելաւ այդ անլուր ոճիրն

որ համայն Փարիզի ուշադրութիւնը դը-
րաւեց, և քիչ մ'ուշ հրաման տուած
էր ի տես հասարակութեան դնելու։

Այս տխուր միջոցին անմիջապէս դի-
մելու արդելք եղող պատճառներն ոչ
եւս կային։

Ոճրին լուրն արդէն Եւրոպիոյ ա-
մեն կողմը ծաւալած և մինչեւ իսկ Ատ-
լանտեան ովկիանոսն անցած լինելով,
ոչ ևս կը յուսացուէր որ ոճրագործը,
տիրող լռութենէն քաջալերուած, դար
ծուղակն ելնար։

Արդարեւ եկած ինկած էր, բայց
պրծած, յորմէ վստահաբար կարելի
էր եզրակացնել թէ այլ ևս յաւիտեան
երեւնալիք չունէր Արպալէթ փողոցին
մէջ։

Մինչեւ իսկ շատ կը վախցուէր թէ
սահմանագլուխն իսկ անցած էր արդէն։

Եւ սակայն չէր ուզուեր միակ հա-
ւանականութիւնն իսկ զանց ընել։

Արդ, ապացուցուած է թէ, ինչ-
պէս նապաստակներն՝ որք անտառին
ամեն կողմը պտըտելէ յետոյ կը դառ-



նան նոյն ոտնահետքին մօտ իրենք զի-
րենք սպաննել կուտան, մարդասպանք
ալ հակում մ'ունին իրենց ոճրագոր-
ծութեան տեղւոյն և զոհին մարմնոյն
շուրջը թափառելու։

Դիակնարանը զանոնք առ ինքն կը
քաշէ, ինչպէս որ լոյսն առ ինքն կը
քաշէ գիշերային տխուր թիթեռնիկներն,
որք իրենց կրնակին վրայ մեռելի գըլ-
խու պատկեր կը կրեն, և երբեմն բըռ-
նուած են հոն։

Մնաց որ, ներկայ պարագային մէջ,
ամեն բանէ առաջ պէտք էր որ կինը
ճանչուէր, վասն զի՝ առանց այդ ծա-
նօթութեան՝ այս տարօրինակ գործը
քննելու պաշտօն ունեցող դատաւորք
հետախուզութեանց սկիզբէն անգոր-
ծութեան կը դատապարտուէին։

Դիակին զմեռսումը թոյլ կուտար ի
տես դնելու գործն երկարել կանոնա-
կան ժամանակէն աւելի, որ եօթանա-
սուներկու ժամ։ Չանցնիր և որովհետեւ
սպանութիւնը մեծ ձայն հա-
նած էր, կրնար յուսացուիլ թէ Փարի-

զի ժողովրդեան կէսէն աւելին պիտի գար վայելել տեսարան մը, զոր ամեն ժամանակ կը սիրէր։

Աւելորդ է ըսել թէ անհրաժեշտ նախազգուշութիւնք ձեռք առնուած էին։

Դատական դիւանագիրն հոն էր, ինքնայօժար յայտարարութիւններն ու տրուած տեղեկութիւններն արձանագրելու համար։

Եւ հասարակութեան բացուած սրահին մէջ քանի մը պարոններ կը պըտրտէին սուր աչերով և նուրբ ականջներով զինեալ, մաքուր հագուած պաշտօնեայներ, որք հոն դրուած էին հասարակութեան մէջ եղած խօսքերը լսելու և դէմքերը դիտելու համար։

Դէպքը կը պնդէր թէ այս հինցած միջոցը չէր կրնար բնաւ յաջողիլ, և վստահութեամբ կը խոստանար իւր գիւացած միջոցներով գտնել ոճրագործը, մինչդեռ ապահովութեան պաշտօնեայք դիակնարանին մէջ հսկելով ժամանակ կը կորսնցնէին։



Ոստիկանութիւնն ականջ չէր կախած այս դիտողութեան, և պատճառ մը չունէր իւր այս որոշման վրայ ղղջալու, վասն զի դիակնարանն իսկապէս պաշարուած էր ամբոխէն։

Այսպիսի բաղմութիւն տեսնուած չէր Վիլէրի մանկան դէպքէն ի վեր, որ ամիսէն աւելի ի տես դրուած մընաց 1840ին, և վերջապէս ճանչուեցաւ։

Ուստի ներելի էր յուսալ, որ այս անգամ ալ, հազարաւոր հանդիսատեսաց մէջ, մի կամ միւս օրը մէկը գտնուէր և ըսէր թէ այս կնոջ անունը սա է, կամ ըսէր միայն թէ այս ինչ տեղ տեսած եմ, այս անուն անձին տունը կը յաճախէր։

Սպասելով այս բաղձացեալ դիպուածին, ոստիկանութեան պաշտօնեայք լաւ հսկողութիւն կ'ընէին։

Ապահովութեան պետն անոնց հետ դրած էր Բիէտուշ և Բիկաշ, որք արուեստին մէջ ունեցած յաջողութենէ զատ՝ գործին ալ քաջածանօթ էին։

Գլխաւորապէս Բիէտուշի վրայ յոյս դրած էր, որ ապտասուոր եռանդով կ'աշխատէր ոճրագործին հետքը գտնելու, որպէս զի իւր գործած սխալը դարմանէ։

Խեղճը տակաւին չէր կրցած մխիթարուիլ մարդասպանը փախցնելուն վրայ։ Իւր միակ մոռացութիւնն այն մարդն էր. զայն կ'երազէր գիշերն։

Եւ վախնալով որ ականջին հասած ծանօթութիւնները կը մոռնայ, իւր յուշատետրին մէջ նշանակել փութացեր էր։

Փողոցներուն մէջ տեսած ամէն երկարատև կրկնոցներն և ճերմակ փողպատներն անոր ուշադրութիւնը կը գրաւէին, և եթէ զանոնք կրողը սև մօրուք, հաստ յօնք և քիչ մը վառվռուն աչք ունենար, անխոնջ հետախոյզն անոր ետևէն կը պտտէր։

Այս հետախուզութիւնք չէին յաջողած, բայց Բիէտուշ չէր վհատեր բնաւ։

Միայն թէ կը կասէր որ Պ. Թոլպիակ յոյժ քիչ կը գործածէր զինք։

Մինչև այն ժամանակ ֆոէվին հետ ունեցած բոլոր յարաբերութիւնն հանապազօրեայ ամենակարճ տեսակցութիւն մ'էր փողոցի մէջ։

Եւ այն հակիրճ ու արագ խօսակցութեան միջոցին, Պ. Թոլպիակ տեղեկութիւն կը հարցնէր, և իւր կողմէ բընաւ տեղեկութիւն չէր տար։

Ճշմարիտ է որ հազար ֆրանք պարգեւ խոստացած էր իւր օժանդակին եթէ բռնէր այն մարդն որ կիրակիէն երկուշաբթի լուսցած գիշերն եկած պորտին մէջ պտրտած էր։

Բայց, Բիէտուշ, թէև հարուստ չէր, պատիւը դրամէ, և իւր համբաւին վերահաստատումն ամենվարձատրութենէ դատամեծար կը համարէր։

Միւս կողմէ, Պ. Լեքոք վարժեցուցած չէր զայն բնաւ այս բրիտանական ձևերուն. Պ. Լեքոք ֆրանսական ձևով կը վարուէր երբոր գործածէր զԲիէտուշ, շատ բան կը յանձնէր անոր։

Սակայն Բիէտուշ կը ճանչէր Պ. Թոլ-

պիտքի արժանիքն, և կրցածին չափ լաւ ծառայել կ'ուզէր անոր։

Բայց, այն օր, պետն արձակուրդ տուած էր իւր ստորադասին մինչև հետևեալ օրը։ Նա ալ գնացեր իսկոյն ապահովութեան պետէն հրաման խնդրեր էր, որ իւր պարապոյ ժամերն օգտակար ընելու համար մինչև իրիկուն հսկողութիւն ընէ դիակնարանի այցելուներուն վրայ։

Եւ հրամանը դիւրութեամբ ստանալով, իւր Բիկաշ ընկերին հետ առաւօտուն կանուխ գնացեր տեսակցեր էր դատական դիւանադպրին հետ, որ շատ գոհ լինելով՝ դիակնարանի սրահին կից խուց մը տուած էր անոր։ Խուցին պատը ճարտարապէս ծածկուած ծակեր ունէր, որոց մէջէն յոյժ դիւրին էր ընել հասարակութիւնը։

Բիէտուշ նստած էր այն դիտարանին մէջ, և դռներուն բացուելէն ի վեր չէր շարժած այն տեղէն։

Բիկաշ ալ հոն էր, բայց երկրորդական դերով, այսինքն բռնական



գործ մը պէտք եղած ժամանակ գործելու պաշտօնով։

Ուրիշ չորս թիւեր ալ ամբոխին մէջ խառնուած էին։

Ելլելուց շարին կը հետևէին ուրիշ ամեն մարդոց պէս, բայց նոյն միջոցը կը գործածէին ինչ որ երբեմն կը գործածուէր Սիրք-Օլիմպիք թատրոնին մէջ, ուր վաթսուն մարդ՝ մէկ ժամ շարունակ ետևէ ետև անցնելով՝ առաջին Նաբոլէոնի մեծ զօրաբանակը կը ներկայացնէին։

Դռնէ մը դուրս ելնելուն պէս՝ կ'երթային նորէն շարին մէջ կ'անցնէին և միւս դռնէն ներս կը մտնէին, այնպէս որ իրենցմէ մին ապակափեղկին առջև դանուէր միշտ։

Մնաց որ, գիտէին թէ իրենց Բիէտուշ և Բիկաշ ընկերները պատին ետին ընտիր դիրք մը բռնած էին։

Որսորդք, երբոր զգան թէ որսն հեռի չէ, դարանավայրէն չեն մեկնիր երթալ ճաշելու համար։ այսպէս մեր վեց դէտերն ալ այն օրն ոտքէ

վրայ կտոր մը չոր հաց ուտելով շատացան։

Ժամերեքն անցած էր, և յունվարի մէջ շուտ իրիկուն կը լինի։ Սակայն ամբոխը չէր նուազեր հին դիակնարանին շուրջն, որ առաջին կայսրութեան օրով շինուած էր Սէն-Միշէլի կամրջին հիւսիսային-արևելեան անկիւնն։

Ս.ին գրեթէ վայելչաձև տնակն, ինչպէս գիտեն շատեր, Սիթէի կղզւոյն արևելեան ծայրը բռնած է, և՝ դուրսէն դայելով՝ յուսահատելոց այդ վերջին ապաստանը պահականոցի կամ թաղապետութեան գրասենեկի երևոյթ ունի։

Մնաց որ, այնպիսի ժամանակի մը մէջ կ'ապրինք, ուր բանտի մ'արտաքին տեսքը չտարբերիր զգալապէս ապարինարանի մը տեսքէն, և ուր դահիճը նախարարական պաշտօնէի մը կերպարանքն ունի։

Նոր դիակնարանն ոսին ծառերով զարդարուած ճեմելիքի մը դիմացը շինուած է, և Նոթր-Տամի եկեղեցւոյն դասին հանդիպորմերն իրենց ստուերն



այն տխուր հարթավայրին վրայ կը ձգեն, ուր թաղին տղայքը կ'երթան կը խաղան աւելի քիչ աղմուկով քան Մոպերի հրապարակին վրայ։

Կարծես թէ կը վախնան արթնցնել այդ կրաներկ սպիտակ շէնքին մէջ հնչող մեռեալները։

Դիակնացոյցի սրահը մեծ քառակուսի մ'է յոյժ բարձր ձեղունով և ընդարձակապէս լուսաւորուած։

Երկու մասի բաժնուած է ապակեայ տախտակորմով մը, որոյ ետեւը շարուած են վեց առ վեց, երկու զուգահեռական գծի վրայ, տասներկու սալաքար, որոց վրայ կը դրուին այն դիակներ, զորս սարսափելի կավրոշներն, յաճախորդք այս տխուր թատրոնին, դերասան կը կոչեն։

Երբոր սալաքարերը դատարկ են, կ'ըսեն թէ Խաղրոնն հանգչաց կ'ընէ։

Ս.ին օրը դերասանք բազմաթիւ էին, միչեւ իսկ արտասովոր ներկայացում կար։

Երբէք տեսնուած չէր Փարիզի մէջ

այսպիսի սրտայոյզ և մանաւանդ այս-
պիսի նոր տեսարան, վասն զի Արպա-
լէթ փողոցի սպանեալ կինն ի տես դըր-
ուած էր անպէս հագուած, ինչպէս
որ գտնուած էր արկղին մէջ։

Եւ կուրծին վրայ, սրտին տեղը, Մա-
չային աղջիկը կեցած էր սպանչին ձե-
ռամբ գամուած։

Զմուսման շնորհիւ, մեռելուհւոյն
հրաշալի դեղը բնաւ չէր այլայլած, և
տարակոյս չկար որ զայն ողջ տեսնող-
ները, թէեւ մէկ անգամ տեսած լի-
նէին, պիտի ճանչէին։

Խարտեաշ մ'էր սեւ աչերով, խարտ-
եաշ մը ոսկեհեր, խարտեաշ մ'անփայլ
գունով, խարտեաշ մը, որոյ նմանն յա-
ճախ չտեսնուիր Անգլիոյ մէջ։

Իւր կիսափակ կոպերն և թերաբաց
շրթունքը տեսնողը կ'երդնուր թէ նը-
ջած էր, և պիտի արթնար՝ եթէ ա-
նունն արտասանուէր։

Իւր սպիտակ և նուրբ ու երկայն
ձեռները բռնած էին այն քամէլիան,
զոր ոճրագործը թողած էր իրեն։



Ծաղիկը դէմքէն աւելի թարշա-
մած էր։

Իւր ժանեկաղարդ սենեկազգեստին
մէջ փաթթուած, մարդարտագոյն մե-
տաքսէ գուլպայներ և վարդագոյն մոյ-
կեր հագած, կարծես թէ պարահան-
դէսի երթալէ առաջ երկայն աթոռի
մը վրայ հանդչող կնոջ մը երեւոյթն
ունէր։

Երկայն աթոռը մարմարէ սոսկալի
մահիճ մ'էր, այն գորշ կապոյտ մար-
մարէն, որովք վառարաններու ծնօտ-
ներ կամ յարդարանաց սեղաններ կը
կերտեն։

Քիչ մ'անդին, երկրորդ դասակար-
դին մէջ, երկու ջրահեղձք կային, ճրագ-
մուած տղայ մ'և ինքզինք պատուհա-
նէն վար նետած կին մը։

Ասոնք մերկ էին, այս անկարեւոր
մեռելք· մորթէ զգեստ դողնոց մ'ու-
նէին. իրենց աղքատիկ հանդերձները
կախուած էին իրենց գլխուն վերեւ,
ուրիշ գրգռեակներու քով, դծուած բե-
կորք թշուառութեան, որք Փարիզի

ամեն տիղմերուն մէջ թաւալելէ յետոյ
եկած հոն խրած էին։

Ասոնք սրահին ետեւի կողմը վտա-
ռուած էին, որպէս զի սպանեալ կինը
գրաւէ ամենուն նայուածքն. և այն-
պէս եղած էր, վասն զի հասարակու-
թիւնն անով միայն կ'զբաղեր։

Մանաւանդ խաղի թուղթն անսպառ
մեկնութեանց առիթ կուտար։

Մարդկային խելքն այսպէս է, մա-
նաւանդ ի Փարիզ։ Հետաքրքիրք ա-
ւելի զբաղած էին գուշակելու թէ ին-
չո՞ւ համար Մաշային աղջիկն հոն դըր-
ուած էր, քան թէ խանդաղատած
այն սրտաճմլիկ տեսարանէն, ուր գե-
ղեցիկ և վայելչաշուք արարած մ'իւր
վերջին քունը կը ննջէր դիակնարանին
նոզկալի սալաքարերուն միոյն վրայ։

Մէկի դէմ, որ յուզեալ ձայնիւ մը-
ռնջէր. Խե՛ղճ կին, այդպէս թարմ
հասակի մէջ մեռնի՛լ, քսան հոգի կար
որ ծանրութեամբ կ'ըսէին. Այդ խա-
ղի թուղթին վրայ է առեղծուածին
լուծումը. կամ թէ՝ Ես կը կարծէի թէ



այդ խաղի թուղթը Խառն լուրեր խմ-
բագրողներուն հնարածն էր։ Ստու-
գիւ իմ լրագիրս ամենէն լաւ տեղե-
կութիւն կ'ստանայ։

Եւ աւելի խորամանգները կ'աւել-
ցընէին. Ցայտնի կը տեսնուի որ թըղ-
թախաղը մեծ մաս ունի այս գործի
մէջ։ Ոստիկանութիւնը շատ տխմար
պէտք է լինի որ այս ոճրին հեղինակը
չգտնէ։ Բաւական է որ խաղամոլնե-
րուն մէջ փնտռէ։

Մինչեւ իսկ մեծանուն Պ. Բրիստո-
մի սկզբունքներով սոդոմեալ միջնա-
կարգ քաղաքացիներ կային, որ աս-
կից հետեւցնելով՝ Մոնաքոյի մէջ այն-
չափ արդիւնաւորապէս շահագործեալ
մոլութեան վտանգներուն վրայ լրջա-
բար կը ճառախօսէին։

Ոստիկանութեան պաշտօնատունն
ալ վերը յիշուած խորամանգներուն
կարծիքէն էր քիչ մը, և կնոջ դիակին
ցոյցը կազմաւորած ժամանակ չէր մոռ-
ցած ամբաստանիչ խաղի թուղթն ալ ի
տես ներկայացնել գիտնական հաշուով։

Աչքի զարնելու կերպիւ զետեղուած էր այն ներկեալ թանձրաքարտի կտորն, երկու տեղ մեռելոյն արիւնովն արատաւորեալ, և ազդեցութիւնը կատարեալ ընելու համար, վերջին մէջ թողուած կամ նորէն խոթուած դաշոյնն իւր նրբաքանդակ փղոսկրէ երախակալը ցոյց կուտար։

Այս երկրորդական պարագայները կամ մանրասարերն, ինչպէս կ'ըսեն թատրոնի մէջ, ստուգիւ այնպէս կը թուէին թէ եղերական թատերախաղի մը մէջ ի հանդէս հանուած էին, և հասարակութիւնն ալ շատ գոհ էր, վասն զի երբէք ներկայ գտնուած չէր այս օրինակ հանդիսի։

Դպրոցէ փախչող տղայք, գործարանէ խոյս տուող պչրասէրք, պահ մը ժամանակ անցուներլու համար հոն եկող խանութպանք, տղայոց դայեակք և վաճառանոցի տիկնայք աւելի քաղցրը արտասուք կը թափէին՝ քան Եւոնոր ոչ աղջկանց թատերգին մէջ։

Բայց խառան մէջ կային հանդիսատեսք ալ, որք զարմացած էին այնպիսի միջավայրի մը մէջ գտնուելնուն վրայ, ուր Իտալական թատրոնին բաժանորդք շատ չեն երթար։

Կային կենցաղասէրք, գեղարուեստականք, մատենագիրք, բարձրագոյն դասէ անկանոնք, մինչեւ իսկ ճշմարտապէս մեծամեծ տիկնայք, իրենց սենեկապանուհւոյն կերպարանքն հագած։

Բիէտուշ իւր թաքստոցէն կը դիտէր այս զարմանալի հանդիսատեսաց շարն, և ուրախ կը լինէր տեսնելով շատ մ'անձինք ընկերային այն դասակարգերէն, ուր հագիւ երբէք կը գըտնուին այնպիսի օրսեր, զորս իւր արհեստն օրսալու կը հարկադրէր զինք։

Բիէտուշ ալ իւր կարծիքն ունէր Արպալէթ փողոցի գործին վրայ։ Հաստատապէս համոզուած էր թէ ոճրագործը պարոն մ'էր, և ոչ արհեստիւ չարագործ։

Այս համոզում հիմնեալ էր մասամբ այն իրողութեան վրայ, որ մարքէն չէր եկներ։ Արհեստիւ ոճրագործք՝ ո՛չ թան-

կագին կրկնոց կը կրեն, ո՛չ նոր փեղոյր կը դնեն, ո՛չ բարձրակրունկ կօշիկներ կը հագնին, ո՛չ ալ սպիտակ մետաքսէ թաշկինակ կը փաթթեն իրենց ճիտն։

Արդ, այն մարդն՝ որ պորտին վանդակագրան առջեւ ոստիկանութեան գործակալի սուտ տոմս մը ցոյց տուած էր իրեն, իշխանաղուռնի մը պէս հագուած էր։

Այս էր Բիէտուշի դատողութիւնն, որ իշխանաղուռներն հեռիէն միայն տեսած էր, և իւր թաքստոցէն կորովատեսաչօք կը զննէր լաւ հագուած հետաքրքիրներն, երբոր ապակափեղկերուն առջեւէն կ՚անցնէին։

Անոր ետին, Բիկաշ բարեկամը փիլիսոփայօրէն կտոր մը Կրիւյերի պանիր կ՚ուտէր հայով։

Բիկաշ միմիայն օգնութեան համար կեցած լինելով հոն, մնացեալին համար իւր ընկերին բերանը կը նայէր։

Երկու պահակներուն թաքչարանը դիւանադպրին գրասենեկէն բաժնող դուռը բաց լինելով, գրագրի մը ձայնը կը լսուէր, որ մերձակայ սրահին մէջ դիակի մը նկարագիրն առնլու ըզբաղեալ երկու սպասաւորաց կողմէ տրուած ծանօթութիւնները կը կրկնէր։



— Կապոյտ կտաւէ տափատ, ծունդը պատռած, կը գոչէր գրագիրը։։։ մաշած կրունկով կօշիկներ։։։ վայրահակ պահպանակով տափակ գլխարկ։։։ ճերմակ գործազգեստ ձախ արմունկը սեւ դերձանով կարկտած։։։ օձիքին օղակը բրդած։։։ ուսին վրայ նոր կըտոր մը։։։

— Նոր մեռեա՞լ մը բերած են ձեզ, հարցուց Բիկաշ։

— Այո՛, գոհեհիկ տղայ մը, զոր Թուրնէլի կամուրջին մօտ ջուրէն հանած են։

— Եթէ այսպէս շարունակէ, տասներկու սալաքարները պիտի զարդարուին, մ՚մռաց Բիէտուշ։ Դէշ բան, հասարակութեան ուշադրութիւնը կը խոտորեցնէ։

— Վտանգ չկայ, ընկե՛ր, պատասխանեց Բիկաշ։ Զրահեղձներ շատ կը

պատահին... բայց մէթրոն յիսուն ֆը-
ռանքի ժանեակներով հագուած տիկ-
նայք յաճախ չեն տեսնուիր հոս։ Այն-
պէս չէ՞, հա՛յր Միլար։

— Քսան տարիէ ի վեր այս պաշ-
տօնը կը վարեմ, և նմանը տեսած չեմ
տակաւին, քսաւ պաշտօնեայն։

Եւ սրահի սպասաւորին ձայնը նո-
րէն շարունակեց.

— Տափատին ձախ գրպանին մէջ
սեւցած ծխափող և ծխախոտի ծրար
մը։ Աջ գրպանին մէջ երդոց տետրակ
մ'և շռնչան մը։

— Լաւ։ Այժմ մարմնոյն նկարագրին
գանք։

— Պարանոցին վրայ սպի մը...
կուրծքին վրայ ասղնենկար սիրտ մը
նետով ծակած... ծայրը վեր դար-
ձած քիթ... հարթ մազեր... բե-
ռան...

— Է՛յ, մի՛ այդչափ բարձրաձայն,
քսաւ Բիէտուշ, լսելու արգելք կը լի-
նիք ինձ։

— Ի՞նչ լսելու, հարցուց Բիկաշ։



— Ածխավաճառուհին որ կը խօ-
սակցի իւր ամուսնոյն հետ։ Ասոի եր-
կու քայլ հեռի կեցած է ապակափեղ-
կին առջեւ։ Թոյլ տուր ինձ որ մտիկ
ընեմ։ Ես կը կարծեմ որ այս Օվէրնա-
ցիք աւելի բաներ գիտեն, զորս չյայտ-
նեցին մեզ։

Ճշմարիտ էր Բիէտուշի ըսածը։
Թէեւ արդէն դիակին առջեւ բերուած
էին, Օվէրնացին և կինն ուզեր էին վե-
րըստին սեսնել զայն։

Դիակին առջեւ բերուած ժամանակ
իրենց եղած հարցաքննութիւնը թոյլ
չտալով իրենց երկարօրէն զննել իրենց
դրացուհին, ուզեր էին լրացնել այդ
թերին, և այս անգամ զուարճութեան
համար եկած էին։

Մնաց որ, չէին դանդաղիր երկա-
ցօրէն ճառատելու, ոչ ալ հասկցնելու
հոն գտնուողներուն թէ սպանեալ կինն
իրենց խասութին քով կը բնակէր։

Ածխավաճառուհին մինչեւ իսկ կ'ը-
սէր թէ առանց իրեն կարելի չպիտի
լինէր երբէք դիակը գտնել։ Ածխա-

վաճառն ալ կը յայտարարէր թէ ոճրագործը կը ճանչէր, և կը յուսար որ օր մ'անշուշտ պիտի հանդիպէր անոր։

Միանգամայն, չէին մոռնար իրենց խանութին հասցէն տալ։

Մինչ երկու ամուսինք այսպէս իրենց խանութը կը ճանչցնէին հոն դտնուողներուն, Բիէտուշ ամենայն ուշադրութեամբ մտիկ կ'ընէր։

Խռան մէջ բարեկարգութիւն պահելու պաշտօն ունեցող պահակներուն ըրած կարգադրութեանց հետեւելով, երկու Օվէրնացիները, կնոջ մարմնոյն առջեւէն անցնելէ յետոյ, ապակափեղկին ծայրը հասած էին հուպ այն որմին, որուն ետեւը նստած էր Բիէտուշ, որ անոնց խօսքերուն ոչ մէկ բառը կը կորսնցնէր։

— Իրա՞ւ է որ դուք տեսած էք այս կինն սպաննող թշուառականը, կը հարցնէր դէր մանկիկ մը գրկող դայեակ մը։

— Տեսած եմ ինչպէս որ ձեզ կը տեսնեմ, պատասխանեց ածխավաճառը ծանր դէմքով։



— Ի՞նչպէս մարդ է։ Անշուշտ գործաւոր չէ։

— Ո՛չ, աւելի շքեղ հագուած է քան զմեր տանտէրն, որ Կոպլէնի թաղին ամենէն հարուստ խաղալորդն է։ Կատուի մորթէ օձիքով կրկնոց, փայլուն կօշիկներ և . . .

Ոճրագործին գեղաշուք հագուստներուն նկարագիրն ընդմիջեցաւ մանկիկէն, որ ամենայն զօրութեամբ ճչել սկսաւ։

Դայեակը դայն լռեցնելու համար սպանեալ կնոջ դիակը ցոյց տուաւ անոր ըսելով.

— Սա տիկինը նայէ, ճագո՛ւկս, ի՞նչ աղուոր է։

Տղան լռեց և Օվէրնացին շարունակեց.

— Փողպատ մը կը կրէ միշտ . . . սա ձեր ետեւէն եկող քաղաքացիին պէս։

Ոճրագործին հետ ունեցած գիշերային խօսակցութենէն ի վեր՝ Բիէտուշ փողպատի խօսք չէր կրնար լսել առանց ուշադրութիւնն արթննալու։

Իսկոյն սկսաւ զննել այն մարդը զոր ածխավաճառը կը ցուցներ դայեակին։

Մարդն, որ իւր հագուստին մէկ մանրամասնութեամբն Արպալէթ փողոցի մարդասպանը կը յիշեցներ Օվէրնացիին, ի սկզբան գրաւած չէր Բիէտուշի ուշադրութիւնը։

Պէտք է ըսել թէ, ի բաց առեալ փողպատն, անոր կերպարանքը բնաւ չէր նմաներ այն մարդուն կերպարանքին, զոր Բիէտուշ հաւատարմաբար միտքը պահած էր։

Նախ՝ դիակնարանի այցելուն կրկնոց չէր հագած, թէեւ հանդիպման գիշերին չափ ցուրտ կար այն օրը։

Քառակուսեակ գունով չուխայէ թիկնոցակ մը հագած էր, և գլուխը կակուղ փեղոյր մը դրած։ Ի մի բան, ընկերութեանց մէջ մտնող ելնող մարդու կերպարանք չունէր։

Սակայն գորշ կղբեանի ձեռնոցներ ունէր։

Այն ձեռնոցներն որք յոյժ նոր էին և դաստակին վրայ լաւ կոճկուած,



բնաւ չէին յարմարեր այն անխնամ կերպարանքին։

Բիէտուշ չփոթ կերպիւ կը յիշէր անոր նման ձեռնոցներ տեսած լինիլն այն մարդուն ձեռքն, որ ոստիկանութեան գործակատարի տոմս մը ցուցած էր իրեն։

Ճշմարիտն ըսելով, վատահ չէր տեսածին ճշդութեան, վասն զի կէս գիշերին շատ լոյս չըներ Արպալէթ փողոցին մէջ, և դառնապէս կը ցաւէր որ ճշդած չէր այդ դիտողութիւն։

Պ. Լեքոք, ոստիկանութեան գործերուն աշխատած ժամանակ, այդ թերութիւնը չէր գործեր։

Կը մնար ձեռնոցներուն և կակուղ փեղոյրին անյարմարութիւնը։

Նշան մ'էր այս որ առանց արժէքի չէր։

Ասկէց զատ, Օվէրնացիին ցոյց տըւած մարդն արդարև հաստ փողպատ մ'ունէր պարանոցին շուրջն, որ մինչև ականջները կ'ելնէր։

Միայն թէ, այն փողպատ, փոխա-

նակ ճերմակ մեռաքսէ լինելու, սկսեալ՝ բուրդէ էր։

Բիէտուշ մէկ նայուածքով ըմբռնեց այս մասնաւորութիւններն, որք այլոց համար բնաւ կարևորութիւն չունէին, և անցաւ դէմքին քննութեան։

Հոն բոլորովին անյաջող եկաւ։

Մարդն, որ այնչափ զգուշութիւն կ'ընէր փողացաւէ չբռնուելու, սաստիկ հարբուխ եղած էր, վասն զի անդադար կը հաղար և իւր թուքը գրպանին թաշկինակովը կը սրբէր, այնպէս որ քթին ծայրն իսկ չէր տեսնուեր։

— Հարկաւ, երբոր հաղը դադրի, քիթը պիտի խնջէ, կ'ըսէր ինքնիրեն Բիէտուշ, որ զայն չէր վրիպեցներ իւր տեսութենէն։

— Քալեցէք, պարոնե՛ր, քալեցէք, կը գոչէին պահակներն ամբոխին շարժումը փութացնելու համար։

Հետաքրքիրները շարին կը հետեւէին՝ զիրար քիչ մը հրելով, վասն զի յամառներ կային որ ետևնին դառնալով կը կենային, որպէս զի աւելի երկար վայելէն տեսարանն։



Ածխավաճառուհին և այրն արդէն անցած էին Թաքստոցին առջևէն, ինչպէս նաև դայեակն ու կաթնկեր մանկիկը, զոր դժբաղդ մեռելուհւոյն տեսքը խելագարցուցած էր։

Փողպատաւոր մարդը կը մտնեար, և Բիէտուշի սրատես աչքին առջևէն պիտի անցնէր։

Դժբաղդաբար կը հաղար միշտ, այնչափ ուժգնութեամբ, որ տախտակորմին ապակիները կը թնդացնէր։

Միայն Բիէտուշ կը հասկնար թէ դեշ կը հաղար։

— Թաշկինակը բերնին վրայ դնելէն ի վեր՝ այս չարաճճին տասն անգամ թքնելու ժամանակ կրնար ունենալ, կ'ըսէր ինքնիրեն։

Օ՛, օ՛, աւելցուց կամացուկ մը, թաշկինակը բարակ կերպասէ է։ Ահա կակուղ փեղոյր մը որ ընտիր ճերմակեղէններ ունի։ Շապիկն ալ կտաւէ կ'երևի ինձ։ Զարմանալի բաներ են սոնք։ Աւուրչէքիս կէսը կուտայի սա մարդուն կօշիկները տեսնելու համար, բայց այս ամբոխին մէջ կարելի չէ։

Մարդը կը յառաջանար միշտ, սեղմուելով ամբոխին մէջ, ինչպէս որ սեղմուեր էր ապահովութեան պետը ժամացոյցին մէջ, սաստկապէս հաղալով և շարունակաբար գլուխը խոնարհեցընելով։

— Սա մարդը պիտի անցնի երթայ, և ես չպիտի կրնամ մօրուքին դոյնը տեսնել, եթէ ունի, կը մրմռար Բիէտուշ։

Ստուգիւ այս հարբխեալը չուզեր որ զինքը ճանչեն։

Կը մոռաբերեմ դուրս ելնել աստից և երթալ դրանը դուրսն սպասել՝ տեսնելու համար թէ բաց օդը պիտի բերժքշկէ՞ զինքն։

Հաղացողն այժմ կը մօտենար պատին. գլուխը վեց մատ հեռի չէր պահակին աչերէն։

Բայց թաշկինակը չէր բաժնուեր երեսէն. ասկէ զատ, իրիկուան մութը կոխելու վրայ էր, այնպէս որ Բիէտուշ չկրցաւ ամենափոքր ճանաչութիւն մ'ընել։

Ամբոխին կոհակը քշեց տարաւ



կասկածելի այցելուն, որ՝ չատ չանցած՝ ճանաչողին տեսութեան շրջանակէն դուրս ելաւ։

Բիէտուշ դրեթէ մտադիր էր իւր խորհած ամենապարզ հնարքն ի գործ դնելու, այսինքն կողմնական դռնէ մը դուրս ելնելով՝ երթալ դիակնարանին մեծ դրան առջև սպասել։

Հոն անվրէպ պիտի գտնէր հարբխեալ մարդն, և դիւրութեամբ լրտեսել զայն, մինչեւ իսկ ձերբակալել, եթէ հարկաւոր դատէր։

Բայց, ասոր համար, հարկ կը լինէր իւր հսկողութիւնը Բիկաշի թողուլ, որ իրեն չափ ճարպիկ չէր, և որ՝ միւս կողմէ՝ իրեն պէս մօտէն տեսած չէր ոճրագործն Արպալէթ փողոցին մէջ։

Պարագայն դժուարին էր, և Բիէտուշ շատ ժամանակ չունէր խորհելու։

Միջին եղանակ մ'որոշեց։

— Ծերո՛ւկս, ըսաւ Բիկաշի, ինձ կը թուի թէ կասկածելի մարդ մը տեսայ։ Գնա ուրեմն սպասէ դրանը դուրսը. դիւրաւ կրնաս ճանչել զայն. կակուղ

փեղջը մ'ունի և կանանչ ու կարմիր քառակուսեակ փողպատ մը։ Երբոր դուրս ելնելը տեսնես, ընկերի մը ցոյց տուր, որպէս զի լրտեսէ, և եկու իմացուր ինձ թէ կը ծածկէ՞ միշտ երեսը։

— Մեծ բան մը չէ այդ, պատասխանեց պարզապէս Բիկաշ, որ շատախօս չէր։

Բիէտուշ՝ խօսած ժամանակ՝ սրահին մէջ կը նայէր և ուշադրութեան արժանի բան մը չէր տեսներ։

Հետաքրքիրներուն անցքը կը շարունակէր, բայց մօտ էր դադարումը, վասն զի դիակնարանին փակման ժամը կը մօտենար։

— Շատ անմիտ եմ որ այդ կենդանիին համար անհանգիստ կը լինիմ, ըսաւ Բիէտուշ երբոր ընկերը դուրս ելաւ։ Եթէ ստուգիւ ոճրագործին նը-մանէր, ածխավաճառը բարձրաձայն կը գոչէր։ Գործին մէջ մտնելու մեծ փափաք ունի այդ Օվէրնացին։ Գիտեմ որ մնապարծութիւն է ըսելը թէ յա-



ճախ տեսած է սպանութիւնն ընող մարդը։ բայց անշուշտ կրնայ տեսած լինիլ զայն մէկ կամ երկու անգամ տանը բակէն անցած ժամանակ։ Ուրեմն կը ճանչէ զայն, և որովհետև կանանչ փողպատին խօսքը չըրաւ պահակներուն, կը հետևի թէ կանանչ փողպատը նշանակութիւն մը չունի գործին մէջ։ Ստուգիւ չափազանց շուտ իրար կ'անցնիմ այժմ։ Ահա այս է անգամ մը խաբուելուս պատուղը. բնաւ նշանակութիւն չունեցող անմտութեանց մէջ կը նետուիմ։ Մարդ մը չկրնար ձերբակալուիլ կղբենիէ ձեռնոց և հաղուստներնալուն պատճառաւ։

Բիէտուշ այս քաղաքական բանախօսութիւնը կ'ընէր ինքնիրեն, պահապաններն սկսան «Օն, պիտի գոցուի» գոչել։

Արդէն մուտքն արգիլուած էր, և բազմութիւնը՝ չնորոգուելով՝ արագապէս կ'անցնէր։

Նոյն միջոցին դուրսը, դիւանագրի գրասենեկին պատուհաններուն տակ, մեծ ժխոր մ'ելաւ։

վէճ մը ծագած էր, և ձայներ կը լսուէին որք «Բռնեցէ՛ք» կը գոչէին։

— Զո՞վ բռնել կ'ուզեն, կը հարցնէր Բիէտուշ ինքնիրեն։ Արդեօք Բիկաշ ձերբակալե՞լ ուզեց կակուղ փեղոյրով մարդը։ Զեմ զարմանար. այդ սատանայ Բիկաշը միշտ առաջ կ'երթայ։

Օակայն, եթէ ձերբակալեց, լաւ բրաւ. եթէ սխալեցա՛ւ, թող կուտանք մարդն և գործը կը լմնայ։

Երթամ նայիմ ի՞նչ կը դառնայ։

Եւ դէպ ի դուռը դիմեց, ուստից իւր ընկերը դուրս ելած էր։

Ցանկարծ դուռը բացուեցաւ և խումբ մը ներս մտաւ, զոր կը կազմէին Բիկաշ, երկու պահակք և կատաղաբար ընդդիմադրող մարդ մը։

Բիկաշ պարանոցէն բռնած էր զայն, պահակներն ալ թեւերէն, բայց չէին կրնար արդելուլ զայն ուժգնապէս ածգացելէ ու պոռչտելէ օտար լեզուով մը, որոյ մէջ կոտրեմ բառն յաճախ կը յեղյեղուէր։

— Անգլիացի մ'է, մրմռաց Բիէտուշ, որ միակ գաղափար մ'ունէր մտքին մէջ։ Արդեօք այն...



— Սպասէ քիչ մը որ քեզ առասանեմ, տղա՛ս, կ'ըսէր Բիկաշ պարան մ'ամրցուցնելով բռնուած մարդուն սրբունքներուն շուրջն, որ անկարող եղաւ այլ ևս շարժելու։

Անգլիացի գող մ'է այս, զոր ձեռքը կնոջ մը գրպանին մէջ խօթած միջոցին բռնեցի, աւելցուց Բիկաշ՝ իւր ընկերին հարցական նայուածքին պատասխանելով։

Սրիկայն նիհար կատուի մը պէս դիմադրեց մեզ, բայց զսպեցինք դինքն։

— Եւ մի՞սը, հարցուց Բիէտուշ լակոնաբար։

— Իրաւ որ ժամանակ չունեցայ զայն մտածելու։ Այս կատաղիին հետ զբաղեցայ։

— Անգլիացին ա՛յնչափ մոլեգնաբար կը դիմադրէր և աղմուկ կը հանէր, որ չուզեցինք պահականոցը տանիլ, ըսաւ պահակներէն մին։ Բազմութիւնը կը խռնէր, և կ'ուզէր չարաչար հարուածել։ Ուստի...

— Կառքի մը մէջ կը փակենք, ըսաւ Բիէտուշ պահակին խօսքն ընդմիջելով։

Բայց նախ պէտք է ծոցերն ու գրպանները խուզարկել։ Այդ լոնտրացի գրպանախոյզներն երեք կապիկներու չափ ճարպիկ են. եթէ ետին դառնալու չափ ժամանակ թողուի իրեն, իսկոյն գողցած բաները կը նետէ վրայէն։

— Ուրեմն խուզարկեցէք, ըսաւ պահակը։

Բիէտուշ գործողութեան սկսաւ կարգաւ ու մեթոտով։

Արժանապէս պարաւանդած և կորովի ձեռքերէ բռնուած, գրպանախոյզն ոչ ևս կրնար խլրտիլ, բայց բրիտանական հայհոյութեաց հեղեղ մը կը ժայթքէր։

Բիէտուշ նախ երեք ոսկի շղթայ, երկու ժամացոյց և կէս երկոտասանեակի չափ դրամապանակ հանեց չաբաճճիին զգեստին գրպանէն։

Բայց այս կողոպուտ բան մը չէր բաղդատմամբ այն կարևոր գիւտին՝ զոր ըրաւ տափատին մէկ ծածուկ գրպանէն։



Գեղեցիկ թղթապանակ մը հանեց, և բանալով լուսանկար այցետոմս մը ձգեց մէջէն, զոր գետինը դեռ չինկած բռնեց, և տեսաւ որ սպանեալ կնոջ պատկերն էր։

Բիէտուշ՝ արագ ձեռաց հետ և աբրագ նայուածք ունէր։

Իսկոյն նշմարեց նմանութիւնն, և յուզեալ ուշադրութեամբ քննեց պատկերն և ուրախութենէն ժժգունելով գոչեց.

— Նոյն ինքն է՛։

Արդարեւ նոյն ինքն էր, և ով որ անգամ մը տեսած էր սպանեալ կնոջ դիակն, երկբայութիւն կարելի չէր։

Լուսանկարն, եթէ ուրիշ արժանիք չունենայ, գոնէ սա արժանիքն ունի որ իւր ներկայացուցած իրերը ճշդիւ և մանրամասնաբար կ'օրինակէ։

Ամեն անգամ դէմքին պատկերը գիծերուն չափ լաւ չարտադրեր, բայց այս անգամ կոլլոդիոնն սքանչելապէս յաջողած էր։

Զքնաղագեղ արարածն՝ որ քանի

մը քայլ անդին պառկած էր մարմարէ անկողնի մը վրայ, արեւուն ճառագայթով տպեալ պատկերին վրայ կատարելապէս կենդանի էր։

Նորա կլոր և վայելչաձեւ ճակատը էր, նորա գանգրեալ մազերը, նորա ժպտուն շրթունքը, նորա խոշոր աչերն աղեղնաձեւ յօնքերով, նոյն փոքրիկ սեւ նիշը ձախ այտին տակով, և այս ամենէն աւելի այն անճառ քաղցրութեան արտայայտութիւնն՝ որ այդ դէմքին յատուկ նկարագիրն էր։

Եւ իբր թէ դժբաղդ գեղուհին, խորհրդաւոր նախազգացութեան մը հնազանդելով, իւր մահուան վրէժն առնելու միջոցներ ընծայել ուզած լիներ դատական արդարութեան, իւր լուսանկարն հանել տուած էր՝ սեղանի մը առջեւ նստած, որոյ վրայ խաղի թուղթեր շարուած էին չափակցութեամբ, մէկ ձեռքով ծաղիկ մը բռնած, միւսով Մաչոյի աղջիկ մը՝ Օրիայի սպասաւորի մը վրայ դնելու համար, միով բանիւ յաջողութիւն մը փնտռելով, ինչպէս այն չարաշուք իրիկունն ուր դաւաճանն յանկարծ զարկած էր զայն՝ երբոր տարփուհեաց այդ սիրելի խաղողին զրաղած էր։



Քրիստափոր Կոլոմպ, երբոր Ամերիկան դտաւ, նոյն զգացումը կրած էր որով յուզեցաւ Բիէտուշ այն վայրկենին, յորում կարծեց թէ նախախնամական դիպուած մ'իւր ձեռքը կը մատնէր ոճրագործը։

Վասն զի չէր երկբայիր որ այդ հասարակ դողն էր ոճրագործը, կամ գոնէ մեղսակից ոճրագործին։

Լուսանկարին անոր վրայէն ելնելը վճռական ապացոյց մ'էր։

Միւս կողմէ, Արպալէթ փողոցի տիկինն անգլիացի էր, և դրպանախոյզն ալ անշուշտ Անգլիայէն եկած էր։

Պահակն, ուրախութենէն զգլխեալ, մոռցած էր կակուղ փեղոյրով մարդն, և իւր այս ձեռք ձգած որսէն օգուտ քաղել միայն կը խորհէր։

Մինչեւ իսկ, ճշմարիտն ըսելով, այս ձերբակալման պատիւն այլոց հետ բաժնել չէր ուզեր։

Շատ շատ, կը հաճէր մինչև մէկ աստիճան մոռնակից ընել իւր Բիկաշ ընկերն։

Իսկ իւր այս գիւտն աւետելու համար ոստիկանութեան պաշտօնարանը կամ Պ. Թոլպիաքի տունը վազելու բընաւ փոյթ չունէր. այլ միտքը դրած էր որ կատարեալ խոստովանութիւններ ձեռք բերելէ յետոյ խմացնէր իւր պետերուն։

Բիէտուշ իւր համբաւը պիտի վերահաստատէր և հազար ֆրանքնոց պանքոտոմ մը պիտի ստանար, դեղեցիկ հազարնոց պանքոտոմ մը՝ զոր Թոլպիաք խոստացած էր։

Իւր պետին աչքը մտնելու և իւր լաճերուն փոքրիկ ժառանգութիւն մը թողու առիթը չէր ուզեր փախցնել։

Բայց այս բարեբաղդ գիւտին շահն ապահովելու համար, բացարձակապէս հարկ էր որ Բիէտուշ հրապարակաւ գործէր, առանց նոյն տեղէն հեռանալու, և հնար եղածին չափ առանց վկայներու, վասն զի ապահովութեան պարզ գործակալ մ'իրաւունք չունի



ձերբակալեալ մարդ մը պահելու։

Բիկաշի բռնած գողն հարկաւ Բուասիի ճանբուն հանգրուանները պիտի պարտէր, նախ պահականոց պիտի տարուէր, յետոյ Կեդրոնական արգելոցն և ապա Մազասի բանտը։

Բիէտուշ՝ սիկարեանին դրպանները խուզարկելով՝ իւր պաշտօնին սահմանէն քիչ մը դուրս ելած էր արդէն։ Ուստի նորէն իւր սահմանին մէջ մտնելու համար կը պարտէր թղթապանակը վերբռտին այն դրպանին մէջ դնել՝ ուր գտած էր, և անոր պարունակութիւնն ստուգելու հոգը Կեդրոնական բանտին պահնորդապետին թողուլ։

Բայց Բիէտուշ այսպէս չէր խորհեր. և իրօք պարագայն ծանր լինելով՝ թեթեւ կանոնազանցութիւն մը կրնար արդարանալ։

—Բան գողցուածներէն մէկուն ամբաստանութեան վրայ ձերբակալեցիք այս սրիկայն, հարցուց Բիէտուշ պահակ զինուորներուն։

—Ո՛չ, ձեր ընկերը բռնեց զայն՝

երբոր վաճառանոցի խանութպանուհոյ մը գրպանը կը խուզէր, պատասխանեցին երկու պահակները միաբերան։

— Եւ կինն իւր քսակը կը պաշտպանէր քաջաբար, յարեց Բիկաշ։ Անգլիացին ձախորդ տեղ ինկած էր։ Կինն աղատեց իւր քսակն և մեկնեցաւ՝ առանց այս սրիկային ձերբակալումը խնդրելու։

— Լա՛ւ. բայց ուրիշներ ալ կան որ այդ կնոջ չափ արթուն կամ ճարպիկ չեն եղեր, վասն զի բազմաթիւ դրամապանակներ ելան վրայէն, առանց հաշուելու ոսկի շղթայներն ու ժամացոյցներն, ըսաւ Բիէտուշ։ Հաճեցէք ուրեմն դուրս ելնել և իմանալ թէ գանգատողներ կա՞ն։

Ըսէք անոնց թէ կրնան վաղը ոստիկանութեան պաշտօնատունն երթալ և իրենց գողցուցած բաները ճանչելով ստանալ։

Ես ալ սա կոպէկը խօսեցնել տամ։

Պահակ զինուորները դուրս ելան, գողն երկու թիւերուն պահպանութեան թողլով։



Դիւանագիրքը դուրս ելած էր իւր գրասենեկէն և նոր բերուած դիպուածներուն սրահը գնացած, որպէս զի ստուգէ խեղդուած տղուն նկարագիրն։

Ուստի Բիէտուշ մնակ կը մնար Բիկաշի և գրպանախուզին հետ, և ոչ ոք կրնար լսել բացուելիք խօսակցութիւնը։

Վճռական զարկ մը տալու ժամանակ էր։

Բիէտուշ սկսաւ նախ լուսանկարն իւր ընկերին ցուցնելով։

— Օ՛, օ՛, գոչեց Բիկաշ։

— Ուրեմն կը ճանչե՞ս զայն։

— Բա՛, ի՞նչպէս չեմ ճանչեր։

— Եւ ի՞նչ կ'ըսես ասոր։

— Կ'ըսեմ թէ պատուական պարդև մը պիտի ստանանք, և Անգլիացին հասակը պիտի կարճընայ Ռոքէթի հրապարակին վրայ։

Ա՛, կ'երևի թէ չարաճճին միմիայն դրամապանակներու մէջ չաշխատիր։ Իւր կերպարանքին նայողը բնաւ չյուսար։

Մինչ երկու ընկերք այս խօսքերը կը փոխանակէին անհոգ երևութով, Անգլիացին ուշադրութեամբ մտիկ կ'ընէր և իւր արդէն տմոյն դէմքն ակներև կ'այլայլէր։

Բիէտուշի խորհած փորձն իւր յուսացածէն աւելի յաջողած էր։

Եկաւ ձերբակալին առջև կանգնեցաւ և հակիրճ ձայնիւ ըսաւ.

— Դուն, մարդո՛ւկս, ինձ չափ լաւ կը հասկնաս ֆրանսերէն, ուստի պարտիս գիտնալ գործին վիճակն։ Եթէ պարզ դրպանախոյզ մը լինէիր, երեք ամիս բանտարկութեամբ կ'աղատէիր. բայց քու գործդ յայտնի է, և ես կ'ապահովեմ քեզ թէ մեղմացուցիչ պարագայներն իսկ չպիտի ստանաս երդուեալ դատաւորներէն. ուղղակի Մ՚ծՐ—ա—Ռ՚ԷՐԷ աբբայարանը պիտի երթաս։ Գրաւ կը դնեմ որ լսած ես այն Աբբայարանն։ Այո՛, տղաս, ես եմ քեզ ըսողը թէ գլուխդ պիտի կտրեն...

Անգլիացին ձայն չէր հաներ, բայց երեսին գոյնը կը կանաչնար։



— Մտիկ ըրէ, յարեց Բիէտուշ, ես չար մարդ չեմ. կ'ուզեմ լաւ խորհուրդ մը տալ քեզ։

Քեզ համար միջոց մը կայ աղատութեան... միակ միջոց մը... այն է խոստովանիլ։ Շատ հաւանական է որ դու միայնակ գործած չես այս սպանութիւն։ Յայտնէ ինձ զայս, և եթէ գործին մէջ ուրիշներ կան, ցոյց տուր ինձ. պատուոյս վրայ կ'երդնում որ անկեղծութիւնդ ի հաշիւ կ'առնուի... երդուեալ դատաւորք փայտէ չեն... և ճարտար փաստաբան մ'ալ ունենալով՝ քսան տարի բանտարկութեամբ կ'աղատիս։

Մարդը մտիկ կ'ընէր ապշեալ դէմքով։ Լուռ կը կենար, բայց յայտնի էր որ քաջ կը հասկնար։

— Օ՜ն, հարցուց Բիէտուշ ցամաք կերպիւ, պիտի յանձն առնո՞ւս խոստովանիլ։ Կ'իմացնեմ քեզ թէ կորսնցնելու ժամանակ չունիմ, և քեզ այնպիսի պարոններու պիտի ղրկեմ, որք քեզ խօսեցնելու միջոցը դիւրաւ կը գտնեն։

Միայն թէ, նոյն արդիւնքը չունենար. ուստի՝ քու օգտիդ համար՝ լաւ կը լինի այժմէն խոստովանիլ։

— Խոստովանիլ ի՞նչ, ըսաւ դրպանախոյզը բաւական յստակ արտասանութեամբ։

— Հա՛, կը ծնիս վերջապէս, ես քաջ գիտէի որ դու ֆրանսերէն կրնաս խօսիլ։

Այժմ պատմէ ինձ գործդ։

— Դուք ալ ինձ չափ գիտէք, ուրուվհետեւ գործի վրայ բռնեցիք զիս։ Գողութիւն ըրի . . . արհեստս է . . . բայց աւելի բան մը չկայ . . . : Ֆրանսայի մէջ գողերը չեն գլխատուիր։

— Ապուշ մի՛ ձեւանար։ Խնդիրը դրամապանակ կամ թաշկինակ գողնալու վրայ չէ . . . ասոր վրայ է։

Բիէտուշ, որ խնամով կը գործածէր ձերբակալին վրայ ընելիք ազդեցութիւնն, այս խօսքն ըսած ժամանակ յանկարծ լուսանկար այցեւտումը ներկայեց Անգլիացիին, որ զայն տեսնելուն պէս բրիտանական Աօ՛հ բացագանչութիւնն արձակեց։



Բայց դէմքը զարմանք միայն յայտնեց և ոչ սարսափ։

— Կը ճանչե՞ս այս պատկեր, դոչեց Բիէտուշ յաղթական ձայնիւ։

— Այո, մրմռաց մարդն, ապակորմին ետին քարի մը վրայ պառկած կնոջն է։

— Զոր դու սպաննեցիր։ Օ՛ն, չուտ ըսէ, որպէս զի խղճիդ բեռը թեթեւնայ։

— Ե՛ս, զայն մեռած տեսայ հոս հիմա, բայց կենդանութեան ժամանակ տեսած չեմ երբէք։

— Ա՛, այդ չես կրնար կլնեցնել ինձ, տղա՛ս։ Եթէ տեսած չէիր երբէք, անոր լուսանկարը չէր գտնուեր թղթապանակիդ մէջ։

— Դրպանէս եկած թղթապանակի՞ն մէջ։ Բայց իմն չէ այն։

— Բա՛, որո՞ւնն է ուրեմն։

— Այն մարդուն՝ որոյ գլխուն դրպանէն գողցայ։

— Դէշ հնարք չէ այդ, մարդո՛ւկս, բայց ապացոյց պէտք է։ Ո՞ւր գողցար

զայն, ե՞րբ գողցար, և ի՞նչպէս մարդ էր գողցուողը։

— Քառակուսեակ գունով զգեստ հագած, սկովտեան փողպատով, կակուղ փեղոյրով և գորշ կղբենի ձեռնոցներով մարդ մ'էր, պատասխանեց գրպանախոյզն։

Այս անակնկալ պատասխանին վրայ Բիէտուշ ցնցուեցաւ և երեսին գոյնը շրջեցաւ։

Մէկ խօսքով Անգլիացին հիմա ի վեր քանդեց կանխապէս զգացուած յոյսերուն բոլոր շէնքն, և խեղճ Բիէտուշ սկսաւ վախնալ թէ նոր անմտութիւն մ'ըրած էր՝ անգամ մ'ալ խաբուելով։

Ի սկզբան փորձ փորձեց ոստերուն փաթթուիլ՝ ջանալով համոզել ինքզինք թէ Անգլիացին կը ստէր։

Բայց պատասխանն այնչափ բնականօրէն եկած էր, կակուղ փեղոյրով մարդուն նկարագիրն այնչափ ճիշդ էր որ գրպանախոյզին խօսքերուն ճշմարտութեան վրայ կարելի չէր երկբայիլ։

Ուրիշ աւելի զօրաւոր նշան մ'ալ



այս էր, որ գրպանախոյզն՝ իւր վրայ եղած ամբաստանութիւնը լսելուն պէս՝ քաջալերուեր էր, և մինչ քիչ մ'առաջ այնչափ չփոթեալ կ'երեւէր երբոր չէր գիտեր իրեն վերագրեալ ոճիրը, Բիէտուշի ըրած բացորոշ յայտարարութենէն յետոյ սիրտն անդորրած կը թուէր։

Անշուշտ, թշուառականը ծանր չարագործութիւններ ունէր խղճին վրայ, և տագնապեալ սրտիւ կը մտածէր թէ ո՛ր յանցանքին վրայ էր խնդիրը։ բայց այժմ որ գործը ճշդուած էր, ամբաստանութիւնն ոչ եւս կը վախցնէր զինքը այս դերաշանց պատճառաւ որ կրնար ապացուցանել զիւր անմեղութիւն։

Ասկէ զատ, մարդ մը, թէեւ գող, չկրնար այնչափ դիւրութեամբ հնարել այս աստիճան հաւանալի սուտ մը։

Սակայն Բիէտուշ չվհատեցաւ, և հարցաքննութիւնը նորէն ձեռք առնելով,

— Տղա՛ս, բսաւ անխռով ձայնիւ, դու խաբել կ'ուզես զիս, բայց չես կարող։

Կ'ըսես թէ կղբենի ձեռնոցներ ունեցող մարդու մը գրպանէն առիր։

Ո՞ւր հանդիպեցար այդ մարդուն, որոյ կերպարանքն այդպէս լաւ սերտած ես։

— Դիակնարանին առջեւ, բաղմութեան շարին մէջ, պատասխանեց Անգլիացին առանց ամենադոյզն վարանման։

— Ուրեմն պահ մ'առաջ ըրած ես այդ գողութիւն։

— Ձեր ոստիկանաց դիս ձերբակալելէն հինգ վայրկեան առաջ։

— Օ՜ն, շարունակէ պատմութիւնդ, ըսաւ պարզամտօրէն Բիէտուշ, որ զայրոյթէն կը խեղդուէր։

Որչափ ձերբակալն յառաջ կ'երթար իւր բացատրութեանց մէջ, ա՛յնչափ Բիէտուշ կ'զգար իւր սխալն, և ինքզինք կ'անիծէր։

Այս անգամ Անգլիացին վարանեցաւ քիչ մը, վասն զի, հաւանաբար, չէր ուզեր խոստովանիլ իւր ըրած գողութիւնները. բայց պատասխանեց գովելի անկեղծութեամբ.



— Կը խոստովանիմ որ Փարիզ եկայ հարուստ պարոններու գրպանները խուզելու։ Լոնտրայի մէջ այս միջոցիս մեր գործն յաջող չերթար։ Այս առաւօտ Փարիզ հասայ Պուլոյնի կառախմբով։ Օթեւան մը չիկայ . . . վասն զի այս իրիկուն չուելու մտադիր էի։

— Կը հասկնամ, ընդմիջեց Բիէտուշ անհամբերութեամբ։ Անգլիացի գրպանախոյզներուն ամենն ալ այդպէս կ'ըսեն։

Շարունակէ պատմութիւնդ։

— Գնացի Պուլվարներուն վրայ և Շանզ-Էլիզէի հրապարակը պտըտեցայ, և մեծ բան մը չկրցի ընել, վասն զի ցուրտին պատճառաւ դրեթէ մարդ չը կար դուրսն։

Յայնժամ կարդացի լրագրի մը մէջ թէ դիակնարանին մէջ ցոյց մը կար . . . և թէ բարձր դասերէ բաղմաթիւ անձինք կ'երթային հոն . . .։

— Եւ ըսիր մտօքդ թէ գործելու յարմար տեղն էր։

— Այո՛ . . . և ուղղակի հոս եկայ

. . . բայց յուսացածիս պէս չելաւ . . . կ'ուզէի բաղմութեան մէջ տեղս ընտրել . . . տիկնանց . . . կամ ճոխ կերպարանքով պարոններու եռեւը . . . բայց ոսոիկանք հարկադրեցին զիս շաբին մէջ մնալ . . . հասարակ մարդոց մէջ . . . առջեւս ածխավաճառ մ'եւ ածխավաճառուհի մը կար . . . որոց դրպանները խառնել հարկ չէր . . . :

— Ածխավաճառ մ'և ածխավաճառուհի՛ մը, կը մտածէր Բիէտուշ դառնութեամբ : Այս մարդ սուտ չխօսիր :

Եւ բարձր ձայնիւ յարեց .

— Անշուշտ խոշոր սուերու համար չես աշխատիր : Ուրեմն ունեւոր մարդու մը դրպանը խուզեցիր :

— Այո՛, ձեզ նկարագրած մարդուս որ ածխավաճառներուն և իմ միջեւ կեցած էր :

— Այս ալ ճշմարիտ է, ըսաւ Բիէտուշ՝ ընկճեալ այս մանրամասնութեանց ճշդութենէն :

— Բոլորովին ձեռքիս տակն էր, շարունակեց դրպանսխոյզն :



— Հարուստ երեւոյթ ունէր ուրեմն :

— Ոչ այնչափ : Ի սկզբան չուզեցի խուզել, մտածելով որ ժամանակս պարապ պիտի անցունէի անոր հետ, սակայն տեսայ որ հարուստ ձեռնոցներ ունէր, միտքս փոխեցի :

— Այո՛, դորշ կզբենի ձեռնոցներ, ըսաւ Բիէտուշ ժպիտ կեղծելով :

— Ասկէ զատ նշմարեցի որ ձեռքն յաճախ իւր զգեստին մէկ կողմը կը տանէր կուրծքին մօտ : Մեք չենք խաբուիր երբէք այդ շարժման վրայ, որ ծոցը թղթապանակ ունենալու նշան է :

— Ի՞նչպէս կրցիր ուրեմն վերցնել, երբոր այդպէս լաւ կը պահպանէր :

— Սպասեցի որ ապակափեղկին առջեւ հասնինք . յայնժամ սկսաւ սպանեալ կնոջ նայիլ և ոչ ևս դրպանը մտածեց : Սպանեալ կինն անգլիացի տիկին մ'է կարծեմ, և պարոնն յոյժ փղձկեալ էր . . . կուլար . . . թաշկինակն աչերուն վրայ բռնած էր :

— Ոչ ևս կարելի է երկբայիլ, կը խորհէր Բիէտուշ։

— Ցայնժամ օգուտ քաղեցի առիթէն . . . հանեցի զմելինս, որ ածելիի պէս կը կտրէ . . . ինչպէս որ կրնաք տեսնել՝ եթէ փորձէք . . . զգեստը ճեղքեցի . . . և թղթապանակն առի . . .

— Եւ մարդը չկրցա՞ւ նշմարել։

— Ո՛չ, բսաւ դրպանահատը զոհ ժպիտով։ Ես արհեստս գիտեմ։ Ես չէի բռնուեր ձեռքս այն դէր կնոջ դրպանին մէջ, եթէ ամբոխը ոչ հրեր . . . որով կնոջը զարնուեցայ . . . և դուչեց . . . ։

— Այդ պահուն թղթապանակին տէրը տակաւին քո՞վդ էր։ հարցուց Բիէտուշ անհամբեր։

— Օ՛, ոչ։ Դուրս ելած ժամանակնիս նա ձախ կողմ դարձաւ, ես ալ փութացի ալ կողմ երթալ։ Կը հասկրնաք որ անոր քով կենալ չէի ուզեր։ Այնչա՛փ շտապեալ էի, որ չկրցի թղթապանակին մէջ նայիլ թէ ի՞նչ կար։

— Ձախ կողմ գնացեր է, մրմռաց Բիէտուշ։



Այս միջոցին երկու քաղաքապահ զինուորները ներս մտան։

Կուգային ըսել թէ բնաւ գանգատ չէին լսած, և բաղմութիւնը ցրուած էր։

Անոնց երեւումն արտասովոր աղդեցութիւն մ՚ըրաւ Բիէտուշի վրայ։

Գլուխը վեր առաւ և կցկտուր ձայնիւ մ՚ըսաւ անոնց.

— Առէք ուղղակի կեդրոնական բանտը տարէք այս մարդ, և աղաչեցէք իմ կողմէ պահնորդապետն որ դաղտնի պահէ մինչեւ վաղ առաւօտ... 29 թուոյն կողմէ . . . որ իմ թիւս է ապահովութեան պաշտօնարանին մէջ։

— Անհոդ եղիք. կը յանձնարարենք։

— Եւ կառք մը նստեցէք որպէս զի չուտ երթաք։ Կառքին վարձքը կը վճարուի հոն։

Երկու պահակ զինուորները դէպի դուռն հրեցին զԱնգլիացին։ Սրունքներուն կապը քակեր էին որպէս զի կարենար քալել։ Դրպանախոյզն առանց ընդդիմութեան գնաց պահակ-

ներուն հետ՝ մեաք բարեաւ ըսելով, յորմէ կը հասկցուէր թէ իւր պաղարիւնութիւնը կատարելապէս գտած էր։

— Պարո՛ն, ձեր խնդրած ամէն տեղեկութիւնները տուի։ Չիս ձեզ կը յանձնարարեմ։

Հաղիւ Անգլիացին դուրս ելած էր, Բիէտուշ իւր ընկերին ձեռքէն բռնելով գոչեց։

— Դիտե՞ս ի՞նչ ըրինք։

— Ի՞նչ ունիս, հարցուց Բիկաշ զարմացմամբ։

— Ոճրագործը փախցուցինք։ Այո՛, ոճրագործը։ Այն մարդն էր, որոյ դուրս ելած ժամանակ սպասելու ղրկած էի քեզ... վասն զի թշուառական Անգլիացին ճշմարիտ խօսեցաւ... այս երկրորդ անգամ է որ կը պատահի ինձ... և ես աւանակի պէս չկասկածեցի երբոր տեսայ անոր կդրեսի ձեռնոցներն և երեսին վրայ փակած թաշկինակը...։ Տես հիմա, մեր պետը զիս պատին պիտի փակցընէ և պաշտօնատան ետևի բակին մէջ հրացանի



բռնել պիտի տայ... և իրաւունք ունի։ բայց այդ աշխատութեան պէտք չպիտի մնայ, վասն զի ես զիս ջուրը պիտի նետեմ։

— Ցիմարութիւն պէտք չէ, ընկե՛ր, ես չեմ թողուր...։ Մնաց որ ինաս մ'եղած չէ... մարդը փախաւ, բայց թղթապանակն և պատկերը ձեռքդ է, լուսանկարչին հասցէն անշուշտ գրուած է ետին։

— Այո՛, տեսայ, և Փարիզի մէջ բաւական ծանօթ է լուսանկարիչը։ քառորդի մը մէջ կ'երթամ անոր տունը... բայց անտարակոյս եմ որ չպիտի կրնայ տեղեկութիւն մը տալ ինձ։ Կին մը որ իւր լուսանկարն հանել կուտայ իւր տարփածուին ընծայելու համար, չյայտներ իւր անունն... և եթէ այս կին յայտնած իսկ լինի իւր և տանը փողոցին անունները, մեք նոր բան մ'իմացած չպիտի լինինք։

— Սակայն եթէ լուսանկարիչը տեսած է տարփածուն։

— Այո՛, բան մ'է այդ, բայց բա-

ական չէ. և ինչպէս որ իմ Բիէտուշ կոչուելուս կը հաւատաս, այնպէս հաւատա՛ նաև որ եթէ թղթապանակին մէջ ուրիշ բան չգտնեմ, անցագիրս առնելէ զատ ուրիշ գործ չմնար ինձ։

— Տակաւին ստորագրուած չէ, գոհութիւն Աստուծոյ։ Նայինք, երեք գրպան ունի այս թղթապանակ։ Լուսանկարը մէջ տեղի գրպանին մէջն էր։ Վհատելէ առաջ միւս երկու գրպաններն ալ զննէ։

Բիէտուշ բացաւ առաջինն, և ըսաւ անմիջապէս.

— Պանքոմանե՛ր. այս միայն կը պակսէր։ Այս անգամ յուսախաբութիւնս կատարեալ է։

— Ինչո՞ւ։

— Վասն զի ահա կը հարկադրիմ ուղղակի ոստիկանութեան պաշտօնատունը տանիլ ասոնք և գլխուս եկածը պատմել մեր պետին։

Նայէ՛ հինգ հատ են, ամենն ալ հազարնոց։

Այս ալ ապացոյց մ'է թէ Անգլիացին սուտ չխօսեցաւ։ Գրպանախոյզներն օրուան մէջ գողցած դրամին միայն կ'ունենան իրենց գրպանին մէջ... ուստի կարելի չէ այս քուրջերը մինչև վաղ առաւօտ իսկ պահել... բաւական է որ ապուշ է ըսեն ինձ համար... գող է ըսուելու փափաք չունիմ։

— Ուրեմն գնա յանձնէ և ալ խօսքը չընենք։

— Բայց դեռ չես հասկնար ուրեմն որ եթէ ես երկու օր միայն ժամանակ ունենալի առանց հաշիւ տալու հարկադրեալ լինելու, տակաւին կրնայի յուսալ որ մարդը նորէն ձեռք կը ձգեմ... երդում ըրած էի որ պիտի գտնէի, և պարգև... պատիւ... և ամեն բան ստանալու... մինչդեռ այժմ...։

Այս բուռն խօսքերով իր յուսահատութիւնն յայտնած միջոցին, Բիէտուշ թղթապանակին երրորդ գրպանն ալ կը բանար։

Թուղթ մը հանեց մէջէն, և հաղիւ աչք նետած էր վրան, գոչեց.

— Հասցէ՛ մը, երկու անուն. ո՛հ, այս գիշեր չպիտի պառկիմ Օէնի մէջ, և լաճերս պիտի հարստանան։ Եկ, ծերո՛ւկս, եկ, ապահով միջոց մ՚ունիմ այժմ։ Վաղը մեր պետը շնորհակալ պիտի լինի ինձ դրամը չտանելուս համար։

Եւ ընկերին թեւէն քաշելով Բիէտուշ փողոց նետուեցաւ, առանց հրաժեշտի ողջոյն տալու դիակնարանի դիւանադպրին։

— Ստուգիւ խելքին եկած է, մրմնջաց Բիկաշ։

ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐՈՑ

ԻՒՐՔԱՆՉԻՒՐ ԱՄԻՈՐԵԱՆՆԵՐՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ

## ՎՐԻՊԱԿՔ

| Եր· | Տող | Սխալ | Ուղիղ |
|---|---|---|---|
| 2 | 13 | լայ | այլ |
| 22 | 22 | վասն զի | որ ապացոյց մ՚է թէ |
| 37 | 16 | Բոն Տէզ Ան | Բոն Տէզ Առ |
| 43 | 11 | առուտուրի | առուտուրի և |
| 48 | 16 | Թերեզայի | Թերէզի |
| 62 | 20 | կը ժպտէի | կը ծպտէի |
| 92 | 18 | մէջ գինետուներուն | գինետուներուն մէջ |
| 99 | 15 | մինչև որ սուլեմ | մինչև որ չսուլեմ |
| 104 | 11 | Գաւթի | Գաւթին |
| 108 | 5 | Եղթայ | կ՚Եղթայ |
| 110 | 22 | Է | են |
| 112 | 4 | համա | համար |
| 122 | 7 | արկղին | ժամացոյցին |
| 145 | 9 | խաբուլու | խաբուելու |
| 169 | 23 | ունենաք | ունենանք |
| 174 | 12 | մտահոգութիւս | մտահոգութիւնս |
| 238 | 3 | կառուզոյն | կառախմբին |
| 244 | 4 | չէր կրար | չէր կրնար |
| 247 | 24 | —՛, մրմնաց | — Հա՛, մրմնաց |
| 252 | 19 | կրնայ ճանչուն | կրնար ճանչուն |
| 255 | 9 | այն աւուր, ուր | այն աւուր, յորում |
| 301 | 19 | հաւանալի | հաւանելի |

[illegible]

[illegible]

1771

2013